«ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Երևան – 2023

ՆԱԽԱԲԱՆ

Գավառի պետական բժշկական քոլեջի (այսուհետ՝ ԳՊԲՔ կամ քոլեջ) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվել է հաստատության ներկայացրած դիմումի համաձայն:

Հավատարմագրման գործընթացը կազմակերպել և համակարգել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամը (այսուհետ՝ ՈԱԱԿ)՝ առաջնորդվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011 թվականի հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N 959–Ն որոշմամբ:

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգի» պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը, որը բաղկացած էր 4 տեղացի փորձագետներից:

Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Առանձանահատուկ շեշտադրվել է հաստատության և գործատուների հետ համագործակցությունն ու դրա ազդեցությունը կրթության բովանդակության վրա:

Սույն զեկույցը պարունակում է ՄՈՒՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ 4

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 4

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 13

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ 13

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ 13

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 17

ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 19

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 19

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 23

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ 31

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ 41

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ 48

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 53

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ 58

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 64

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ 68

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 72

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 79

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 80

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ 80

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ 81

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ 83

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 85

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 86

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 87

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

Գավառի պետական բժշկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգի» պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N959-Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Գնահատումն իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել, որ քոլեջն առաջին անգամ է ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնում, ինչպես նաև գտնվում է որակի ապահովման մշակույթի ձևավորման փուլում: Քոլեջը բժշկական կրթության ոլորտում միջին մասնագիտական կրթական ծրագրեր է իրականացնում ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակի (ՈԱՇ) 5-րդ մակարդակին համահունչ:

Գնահատումն իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել նաև, որ քոլեջը կարևոր առաքելություն ունի տարածաշրջանում առկա բուժհաստատություններին ու դեղագործական ընկերություններին ապահովելու անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող բժշկական ոլորտի կադրերով: Քոլեջի առաքելությունն ընկալելի է շահակիցների կողմից, գործատուները կարևորում են քոլեջի դերը տարածաշրջանում և համագործակցային կապերի միջոցով փորձում աջակցել քոլեջի շարունակական զարգացմանը:

Քոլեջի փոխլրացնող երեք բաղադրիչներից կազմված առաքելությունը կարիք ունի հստակեցման և մեկ միասնական մոտեցմամբ ներկայացման՝ միավորելով առանձնացված հիմնական առաքելությունը, առաքելությունը և առաքելության կարևոր տարրը, այն համապատասխանեցնելով շահակիցների լայն շրջանակի իրական ընկալումներին և քոլեջի դերակատարության արտացոլմանը տարածաշրջանում: Քոլեջի կողմից արտաքին և ներքին շահակիցների կարիքների վերհանման մեխանիզմների հստակեցումը և դրանց արտացոլումը ռազմավարական ծրագրում կարևոր են ռազմավարական կառավարման արդյունավետ իրականացման համար: Հատկանշական է, որ ՄՈՒՀ-ը նոր ՌԾ-ի մշակման ժամանակ հաշվի է առել նախորդ ՌԾ-ի կատարողականի վերլուծության արդյունքները, վերասահմանել է իր հիմնախնդիրները և ավելացրել նոր ուղղություններ, որոնց կատարումը կհանգեցնի ՄՈՒՀ-ի առաքելության իրականացմանը:

Կարևոր հանգամանք է, որ քոլեջը որդեգրել է որակի մշակույթի ձևավորման քաղաքականություն: 2021 թ.-ից իրականացված աշխատանքներն իրենց դրական ազդեցությունն են ունեցել քոլեջի առաքելությունը իրականացնելու գործընթացներում, կանոնակարգվել են բազմաթիվ գործընթացներ, ստեղծվել են կարգեր և ընթացակարգեր գործընթացների նպատակների և զարգացման ուղղությունների սահմանման համար: Այսուհանդերձ, քոլեջը դեռևս անելիքներ ունի որակի մշակույթը տարածելու ուղղությամբ՝

շեշտադրելով արտաքին և ներքին շահակիցների կարիքների վերհանումը և դրանց հենքով բարելավման գործընթացների իրականացումը: Կարևոր հանգամանք է, որ քոլեջը քայլեր է ձեռնարկել նաև որակի ապահովման գործընթացների թափանցիկության ապահովման ուղղությամբ, և փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջի հարթակների ու նորաստեղծ պաշտոնական կայքի գործարկումը կարող են նպաստել ընթացող գործընթացների հասանելիությանը շահակիցների առավել լայն շրջանակի համար:

Կառավարման ոլորտում նույնպես ՄՈՒՀ-ը արձանագրել է որոշակի առաջընթաց, որը փոխկապակցված է որակի ապահովման համակարգի ներդրման հետ, ինչպես նաև գործընթացների կանոնակարգման և փաստաթղթավորման հետևանք է, ինչը հանգեցնում է արտաքին գնահատման գործընթացների համար հիմքերի ստեղծմանը: Չնայած արձանագրված բարելավումներին՝ քոլեջում դեռևս խնդրահարույց է պլանավորում-հաշվետվողականություն կապը և հաշվետվություններում վերլուծական բաղադրիչի ապահովումը: Փորձագիտական խումբը շեշտադրում է այն հանգամանքը, որ քոլեջի որակի ապահովման պատասխանատուի կողմից հավաքագրված տվյալների ներդրումը որոշումների կայացման հիմքում էապես կնպաստի կառավարչական որոշումների արդյունավետության բարձրացմանը: Որակի կառավարման ՊԻԳԲ շրջափուլի սկզբունքների ոչ ինստիտուցիոնալ կիրառումը, գնահատում-բարելավում կապերի թույլ լինելը խոչընդոտներ են ստեղծում բարելավման շղթայի շարունակական գործունեության համար: Կառավարման գործընթացներն առավել արդյունահենք դարձնելու համար քոլեջը կարիք ունի նաև սահմանված նպատակները փոխկապակցելու իր մարդկային, նյութական ու ֆինանսական ռեսուրսներին: Այս տեսնակյունից հատկանշական է Կառավարման խորհրդի ներգրավվածությունը և նախաձեռնողականությունը քոլեջին առնչվող որոշումների կայացման հարցում: Այսուհանդերձ, քոլեջի ֆինանսական ռեսուրսները դեռևս բազմազանեցման կարիք ունեն քոլեջի երկարաժամկետ զարգացումն ապահովելու համար: Փորձագիտական խմբի համոզմամբ Կառավարման խորհրդի ներուժի ամբողջական օգտագործումը կարող է նպաստել ֆինանսական աղբյուրների բազմազանեցմանը և քոլեջի ռազմավարական նպատակների իրագործմանը:

Այսպիսով, փորձագիտական խմբի գնահատմամբ քոլեջն իրականացնում է տարածաշրջանում և Գավառ քաղաքում իր ուրույն առաքելությունը, որակի ապահովման գործընթացները նպաստում են դրա իրագործմանը, Կառավարման մարմիններն աջակցում են որակի ապահովման համակարգի ներդրմանը, սակայն քոլեջն անհրաժեշտություն ունի կառավարման գործընթացներում ապահովելու շահակիցների նախաձեռնողականությունն իրենց առնչվող որոշումների կայացման, խնդիրների քննարկման ուղղություններով, հաշվետվողականության գործընթացները դարձնելու առավել վերլուծական ու կապակցելու ռազմավարական նպատակներին:

Քոլեջը բժշկության ոլորտում իրականացնում է միջին մասնագիտական կրթական ծրագրեր, որոնք համահունչ են Որակավորումների ազգային շրջանակի 5-րդ մակարդակի նկարագրիչներին և Պետական կրթական չափորոշիչներին: Փորձագիտական խումբը շեշտադրում է այն հանգամանքը, որ աշխատաշուկայի կարիքների վերլուծության հիմքով

կրթական ծրագրերի տեղայնացում քոլեջը չի իրականացրել, ինչպես նաև կրթական ծրագրերի պլանավորումը քոլեջի գործունեության հիմնական ուղղություններին դեռևս չի փոխկապակցվում, ինչին խոչընդոտում են նաև կրթական ծրագրերի կառավարման խնդիրները, ծրագրերի պատասխանատուների բացակայությունը և ամբիոնների գործառույթների ու դերի ոչ լիարժեք ընկալումը շահակիցների շրջանում: Փորձագիտական խումբը նշում է, որ քոլեջը թեև պարբերաբար վերանայում է իր կրթական ծրագրերում կիրառվող մեթոդները և գնահատման չափանիշները, սակայն դրանք դեռևս միանսական և ինստիտուցիոնալ ձևով չեն կիրառվում: Կարևոր հանգամանք է, որ քոլեջը նախատեսում է նաև կրթական ծրագրերի համեմատական վերլուծություն իրականացնել, ինչի արդյունավետ իրականացումը կհանգեցնի վերհանված լավագույն փորձի տեղայնացմանը քոլեջի իրականացրած կրթական ծրագրերում: Դրական է, որ քոլեջի կողմից կիրառվում են կրթական ծրագրերի գնահատման ու մշտադիտարկման որոշ մեխանիզմներ: Այս համատեքստում փորձագիտական խումբը շեշտադրում է կիրառվող գործիքակազմի և գնահատումների արդյունքների համապարփակ վերլուծության անհրաժեշտությունը՝ գործատուների կարիքների ներառումը կրթական ծրագրերում, ինչպես նաև ՄԿԾ գնահատման ու բարելավման գործընթացների փոխկապակցումը՝ քոլեջի մատուցած կրթությունն առավել գրավիչ դարձնելու ու մրցունակ շրջանավարտներ պատրաստելու նպատակով:

Քոլեջը որդեգրել է դասախոսական կազմը պրակտիկ փորձառություն ունեցող բժիշկ մասնագետներով համալրելու քաղաքականություն, ինչը նպաստում է ուսանողների գործնական կարողությունների ձևավորմանը և շրջանավարտների մասնագիտական առաջընթացին: Կարևոր է շեշտադրել նաև քոլեջի մոտեցումները դասախոսական կազմի երիտասարդացման և սահուն սերնդափոխության ապահովման գործում, ինչի նպատակով քոլեջը համալրում է իր դասախոսական կազմը նաև իր շրջանավարտներով: Դասախոսական կազմի կարիքների վերհանումը և մասնագիտական զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացումը կարող են հանգեցնել կրթական ծրագրերի նպատակների հաղթահարմանը: Քոլեջի ունեցած ֆինանսական միջոցների սղության պայմաններում՝ քոլեջի պրակտիկ դասավանդողների կողմից ներքին լավ փորձի տարածման մեխանիզմների պարբերական կիրառումը ևս կարող է նպաստել դասախոսների մասնագիտական գիտելիքների ու կարողությունների արդիականացմանը:

Քոլեջի ղեկավար կազմը ռեսուրսների ու ենթակառուցվածքների համալրումը շարունակաբար պահում է իր ուշադրության կենտրոնում և փորձում ապահովել կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների ու նյութերի առկայությունը: Ուսումնական գործընթացի անխափան իրականացման ու ուսանողների հմտությունների ձևավորման համար քոլեջը համատեղ կիրառում է նաև գործընկեր կազմակերպությունների ռեսուրսները ինչպես գործնական պարապմունքների իրականացման, այնպես էլ պրակտիկաների կազմակերպման համար:

Հաշվի առնելով քոլեջի կողմից իրականացվող կրթական ծրագրերի ծախսատարությունը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջի կողմից կրթական

ծրագրերի ծախսարդյունավետության գնահատումը և ըստ դրա ֆինանսական ռեսուրսների բաշխումը կարևոր են կրթական ծրագրերի կայունության և շարունակականության երաշխավորման համար: Քոլեջում առկա ռեսուրսների կիրառմամբ կարճաժամկետ ծրագրերի իրականացումը ևս կարող է որոշակիորեն ավելացնել ֆինանսական մուտքերը ու ապահովել ռազմավարական նպատակների իրականացումը:

Այսպիսով, փորձագիտական խումբը գտնում է, որ շնորհվող որակավորումների արժանահավատության ապահովման համար քոլեջը շարունակաբար ջանքեր է գործադրում՝ ներգրավելով որակյալ դասախոսական կազմ, համագործակցում և համատեղ կիրառում է գործընկեր բուժհաստատությունների ու դեղատնային կազմակերպությունների ռեսուրսները, սակայն աշխատաշուկայի պահանջները բավարարող կրթական ծրագրերի արդյունավետ իրականացման համար քոլեջն անհրաժեշտություն ունի վերհանելու գործատուների կարիքները, իրականացնելու կրթական ծրագրերի համապարփակ բենչմարքինգ, կանոնակարգելու մշտադիտարկման մեխանիզմներն ու կապակցելու ծրագրերի վերանայումները գնահատման արդյունքներին: Այս տեսանկյունից քոլեջի մեկնարկած քայլերը կրթական ծրագրերի մեթոդների ընտրության քաղաքականության մշակման, գնահատման չափանիշների հստակեցման, համապատասխան սանդղակների սահմանման ու ուսանողներին տրամադրվող հետադարձ կապի ապահովման ուղղությամբ դրական նախադրյալներ են մրցունակ շրջանավարտներ թողարկելու համար:

Քոլեջը կանոնակարգված աշխատանքներ է իրականացնում ուսանողների հավաքագրման ու քոլեջի ընդունելության մասին իրազեկման ուղղությամբ՝ ներգրավելով ներքին և արտաքին շահակիցներին: Իրականացվող գործընթացները նպաստել են ուսանողների կայուն ներհոսքին և դիմորդների թվաքանակի դինամիկ աճին: Հատկանշական է, որ այս գործընթացում ակտիվորեն ներգրավված են նաև գործատուները՝ ներկայացնելով մասնագիտությունների գրավչությունը և աշխատաշուկայի կադրային պահանջարկը հավաքագրման միջոցառումների ու դիմորդների հետ հանդիպումների ընթացքում:

Կարևոր է, որ քոլեջում ձևավորված է ուսանողակենտրոն միջավայր, որը թույլ է տալիս արձագանքել ուսանողների կարիքներին ու տրամադրել համապատասխան աջակցություն ուսումնական միջավայրի լավարկման համար: Փորձագիտական խումբը կարևոր է համարում նաև քոլեջում գործող Ուսանողական խորհրդի դերի հստակեցումը ուսանողների շրջանում և նրանց իրավունքների պաշտպանությանն ու իրազեկվածությանն ուղղված միջոցառումների անցկացումը:

Հարկ է նշել, որ քոլեջի զարգացումը և հետագա առաջընթացը փոխկապակցված են գործընկերային կապերի հետ, որոնք մեծապես նպաստում են ինչպես կրթական գործընթացի արդյունավետ իրականացմանը, այնպես էլ շրջանավարտների մասնագիտական գործունեության համար հնարավորությունների ստեղծմանը: Քոլեջի և գործատուների կողմից ներդրվող երկուստեք ջանքերը մեծապես նպաստում են համագործակցության ամրապնդմանը և քոլեջի գլխավոր շահակիցների՝ ուսանողների համար մասնագիտական գործունեություն ծավալելու հնարավորությունների ստեղծմանը: Կարևոր է, որ արտաքին կապերը որոշակիորեն համակարգվում են կարիերայի պատասխանատուի և տնօրենի

կողմից, որի արդյունքում բազմաբնույթ համագործակցային միջավայր է ստեղծվել տեղական գործընկերների հետ, ինչպես ուսանողների լրացուցիչ կրթական ծառայությունների մատուցման, ուսումնառության արդյունավետ կազմակերպման, այնպես էլ շրջանավարտների կարիերային աջակցության համար:

Քոլեջն իր ՌԾ-ում միջազգայնացումը որպես նպատակ չի սահմանել, այնուամենայիվ այս ուղղությամբ անհրաժեշտ ուսումնասիրությունները և գնահատումները կարող են դրական նախադրյալներ ստեղծել քոլեջի միջազգայանացման հնարավորությունների գնահատման և անհրաժեշտ քայլերի պլանավորման համար, որոնցից առաջնայինը կարող են լինել օտար լեզվի իմացության բարձրացմանը ուղղված քայլերը:

Փորձագիտական խումբը նշում է, որ քոլեջում առկա են ուսումնառության և հետազոտության փոխկապակցման մեխանիզմներ, ուսանողներն իրականացնում են բժշկական մասնագիտությունների առանձնահատկություններին համահունչ ուսումնասիրություններ ու առաջադրանքներ: Փորձագիտական խումբը գտնում է, որ հետազոտական ուղղությունների հստակեցումը, դրանց փոխկապակցումը կրթական ծրագրերի առանձնահատկություններին, խրախուսման ընթացակարգերի և գործիքակազմի ներդրումը թույլ կտան հետազոտական գործընթացներում ներգրավել ինչպես ուսանողներին, այնպես էլ դասախոսներին:

Փորձագիտական խումբը կարևորում է քոլեջի հասարակական պատասխանատվության դրսևորումները և քոլեջի իրականացրած միջոցառումները գիտելիքների, արժեքների փոխանցման համատեքստում՝ լիահույս լինելով, որ այս ուղղությամբ աշխատանքները կլինեն շարունակական, իսկ տեղեկատվությունը կդառնա ավելի հասանելի հասարակության լայն շերտերի համար՝ օգտագործելով սոցիալական հարթակները և կայքեջը:

Այսպիսով, անդրադառնալով քոլեջի երկարաժամկետ ու կայուն զարգացմանը՝ փորձագիտական խումբը նշում է, որ քոլեջը ներդնում է անհրաժեշտ ջանքերը կրթական միջավայրի շարունակական բարելավման, դիմորդների աճն ապահովելու համար, արդյունավետորեն համագործակցում է տեղացի գործընկերների հետ, ստեղծում կայուն գործընկերային կապեր, փորձում ուսանողներին ներգրավել հետազոտական աշխատանքներում, տրամադրել նրանց վերլուծական միտքը ձևավորող առաջադրանքներ, ինչպես նաև քայլեր ձեռնարկում հաշվետվողականության ու քոլեջի մասին տեղեկատվության տարածման գործընթացների լավարկման համար:

Հաստատության ուժեղ կողմերն են.

1. տարածաշրջանի աշխատաշուկային անհրաժեշտ միջին մասնագիտական բժշկական կադրերի թողարկումը,
2. կրթական ծրագրերի իրագործման համար համապատասխան ուսումնական միջավայրի առկայությունը,
3. դասավանդման գործընթացում մասնագիտական անհրաժեշտ որակավորում և գործնական փորձառություն ունեցող մասնագետների ներգրավումը,

4. դասախոսական կազմի երիտասարդացման միտումները և կայունության ապահովմանն ուղղված ջանքերը,
5. ուսանողակենտրոն միջավայրը և ուսանողներին տրամադրվող ծառայությունները,
6. շրջանավարտների կարիերային նպաստող գործընթացները,
7. հասարակությանը գիտելիքների ու արժեքների փոխանցմանն ուղղված միջոցառումները,
8. համագործակցային շրջանակի ընդլայնումը և գործընկերային կապերի ձևավորումը,
9. գործատուների հետ համատեղ ռեսուրսների օգտագործումն ուսանողների կարողությունների զարգացման համար,
10. ՈԱ համակարգի ներդրման ուղղությամբ իրականցվող քայլերը և գործընթացների արժևորումը:

Հաստատության թույլ կողմերն են.

1. ՌԾ նպատակների գնահատման առանցքային ցուցիչների անկատարությունը,
2. ներքին և արտաքին շահակիցների թույլ ներգրավվածությունը և նախաձեռնողականության պակասը որոշումների կայացման և որակի ապահովման գործընթացներում,
3. պլանավորման և հաշվետվողականության մեխանիզմների փոխկապակցման անկատարությունը,
4. որակի կառավարման ՊԻԳԲ շրջափուլի ոչ լիարժեք և հատվածային կիրառումը,
5. կրթական ծրագրերի կառավարման համակարգի անկատարությունը և բարելավումների դանդաղ ընթացքը,
6. դասախոսական կազմի մասնագիտական վերապատրաստումների պակասը և մասնագիտական առաջընթացը խրախուսող գործիքակազմի անկատարությունը,
7. դասախոսներին և ուսանողներին հետազոտական աշխատանքներում ներգրավման և խրախուսման մեխանիզմների բացակայությունը,
8. հաշվետվություններում քանակական և որակական վերլուծական բաղադրիչի թույլ արտահայտվածությունը,
9. արդի մասնագիտական գրականության պակասը, գրադարանային շտեմարաններին անդամակցության բացակայությունը,
10. ներքին շահակիցների՝ օտար լեզուների իմացության ցածր մակարդակը փորձի փոխանակման և միջազգայնացման գործընթացները խթանելու համար:

Խորհրդատվություններ.

Առաքելությունը և նպատակները

1. Հստակեցնել քոլեջի առաքելության սահմանումը՝ միավորելով ներկայացված 3 առաքելությունները մեկ միասնական ամբողջության մեջ:
2. Ներդնել ռազմավարական ծրագրում ներքին և արտաքին շահակիցների կարիքների արտացոլման մեխանիզմներ:

3. Հստակեցնել յուրաքանչյուր նպատակի համար նախատեսված որակական և քանակական ցուցիչները և դրանց արդյունավետության գնահատման մեխանիզմները։

Կառավարումն ու վարչարարությունը

4. Բարելավել կառավարման համակարգը՝ ուշադրություն դարձնելով ուղղահայաց և հորիզոնական կապերի արտահայտմանը և հաշվետվողականության գործընթացների լավարկմանը։
5. Փոխկապակցել ռազմավարական կառավարման և կարճաժամկետ պլանավորման գործընթացները՝ հաշվի առնելով քոլեջի ռեսուրսային հնարավորությունները։
6. Հստակեցնել և օպտիմալացնել վարչական և դասախոսական համակազմի պատասխանատվության շրջանակը՝ խուսափելով գործառութային կրկնություններից և պաշտոնային գերբեռնվածությունից։
7. Խրախուսել ներքին և արտաքին շահակիցներին՝ նախաձեռնողականություն դրսևորել իրենց առնչվող որոշումների կայացման և կարիքների բացահայտման գործընթացներում։
8. ՊԻԳԲ շրջափուլը ներդնել կառավարման և վարչարարության գործընթացների հիմքում՝ նպաստելու կառավարման գործընթացների շարունակական զարգացմանը։

Մասնագիտության կրթական ծրագրերը

9. Սահմանել ՄԿԾ-ների հստակ վերջնարդյունքներ՝ փոխկապակցելով դրանք ՈԱՇ-ի 5-րդ մակարդակի նկարագրիչների և ուսանողների մասնագիտական գործունեության հետ։
10. Ներդնել դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության միասնական մոտեցումներ ուսումնառության արդյունքների ձեռքբերումն ավելի պլանավորված դարձնելու համար։
11. Ապահովել շահակիցների համար ընկալելի գնահատման միասնական մոտեցումներ՝ հստակեցնելով գնահատման մեթոդաբանությունը և փոխկապակցելով ուսումնառության արդյունքներին։
12. Ապահովել կրթական ծրագրերում ուսանողների՝ հետազոտական աշխատանքի գնահատման գործիքներ և արտացոլել դրանք կրթական ծրագրերում։
13. Իրականացնել կրթական ծրագրերի համեմատական վերլուծություն՝ հաշվի առնելով կրթական ծրագրերի առանձնահատկությունները և տեղայնացնելով վերհանված լավագույն փորձը։
14. Բարելավել ՄԿԾ մշտադիտարկման և գնահատման մեխանիզմները՝ վերլուծությունները կապակցելով հետագա բարելավումներին։

Ուսանողները

15. Բարելավել ուսանողների կրթական կարիքների վերհանման մեխանիզմները՝ ուսումնառության միջավայրի լավարկման և կրթական ծրագրերում առկա վերջնարդյունքների ձեռքբերման համար։

16. Իրականացնել ՈւԽ աշխատանքների մասին իրազեկմանը միտված միջոցառումներ՝ հատկացնելով համապատասխան ֆինանսական և նյութական միջոցներ։
17. Նպաստել ՈւԽ դերակատարության բարձրացմանը՝ որպես ուսանողների իրավունքների պաշտպանության մարմին։

Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը

18. Ձևավորել կրթական ծրագրերի առանձնահատկություններին համապատասխան դասախոսական կազմի ընտրության պահանջներ։
19. Ներդնել դասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի պլանավորման և ապահովման մեխանիզմներ։
20. Համակարգել դասախոսական կազմի գնահատման գործընթացները՝ հստակեցնելով չափանիշները և փոխադարձ գնահատումների նպատակները։

Հետազոտությունը և զարգացումը

21. Սահմանել հետազոտական ուղղությամբ քոլեջի հավակնությունները և ամբիոնային հետաքրքրությունները՝ փոխկապակցելով ռազմավարական զարգացման գործընթացներին։
22. Մշակել քոլեջի կրթական ծրագրերի առանձնահատկություններից բխող հետազոտական գործունեության քաղաքականություն՝ կիրառելով ամբիոնների ներուժը։
23. Ներդնել դասախոսական կազմի՝ հետազոտական աշխատանքների իրականացման խրախուսման մեխանիզմներ։
24. Շարունակաբար բարելավել ուսանողների՝ հետազոտական գործընթացներում ներգրավման, ինչպես նաև հետազոտության և ուսումնառության փոխկապակցման մեխանզմները։

Ենթակառուցվածքը և ռեսուրսները

25. Շարունակաբար բարելավել և համալրել կրթական ծրագրերի պահանջներից բխող ռեսուրսները սահմանված վերջնարդյունքների ձեռքբերման համար։
26. Ներդնել ֆինանսական այլընտրանքային միջոցների հայթայթման մեխանիզմներ ՌԾ նպատակների իրականացման և ֆինանսական կայունության ձևավորման համար։
27. Կրթական ծրագրերի ծախսարդյունավետության գնահատման արդյունքում բարելավել ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականությունը։

Հասարակական պատասխանատվությունը

28. Ներդնել հաշվետվությունների իրականացման միասնական մոտեցումներ՝ քանակական և որակական վերլուծությունների կատարմամբ ապահովելով պլանավորում-հաշվետվողականություն կապերի առկայությունը։
29. Շարունակաբար բարելավել քոլեջի գործընթացների մասին հրապարակայնության և թափանցիկության ապահովման մեխանիզմները և կիրառվող գործիքները։

30. Գնահատել արտաքին շահակիցների հետ հետադարձ կապի ապահովման գործիքների կիրառելիությունը և արդյունավետությունը՝ նպաստելու նրանց առավել լայն շրջանակի ներգրավմանը կրթական ծրագրերի լավարկման գործընթացներում։

Արտաքին կապերը և միջազգայնացումը

31. Իրականացնել արտաքին կապերի վերլուծություն և սահմանել համագործակցությունների ուղղությունները։
32. Միջոցներ ձեռնարկել ներքին շահակիցների՝ օտար լեզուների իմացության մակարդակը բարելավելու համար։
33. Խրախուսել ներքին շահակիցներին՝ ներգրավվելու ակադեմիական շարժունության և փոխանակման ծրագրերում։
34. Ներդնել միջազգային փորձի ուսումնասիրման և համագործակցությունների հաստատման մեխանիզմներ և գործիքակազմ՝ իրագործելու միջազգայնացման ուղղությամբ քոլեջի կողմից սահմանված նպատակները։

Որակի ներքին ապահովման համակարգը

35. Գնահատել որակի ապահովման գործընթացների համար անհրաժեշտ մարդկային և նյութական ռեսուրսների ապահովվածությունը և ըստ դրա տրամադրել անհրաժեշտ ռեսուրսներ ՈԱ համակարգի նպատակների իրագործման համար։
36. Բարելավել տվյալների հավաքագրման և մշակման մեխանիզմները և դրանց արդյունքները դնել բարելավումների հիմքում։
37. Բարելավել քոլեջի գործընթացների գնահատման համար կիրառվող հարցաշարերը՝ դրանք համապատասխանեցնելով քոլեջի զարգացման ուղղություններին և առանձնահատկություններին։
38. Բազմազանեցնել որակի ապահովման գործընթացներում շահակիցների ներգրավման և նրանց հետ քոլեջի գործընթացների քննարկման մեխանիզմները։

_____

Ասյա Սիմոնյան
Փորձագիտական խմբի ղեկավար

30-ը նոյեմբերի, 2023թ.

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

Գավառի պետական բժշկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատումն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի[1] կողմից.

Ասյա Սիմոնյան՝ մանկավարժական գիտությունների թեկնածու, Շիրակի պետական համալսարանի Սպորտի և արվեստի ամբիոնի ասիստենտ, փորձագիտական խմբի ղեկավար:

Մերի Սարգսյան՝ Երևանի հենակետային բժշկական քոլեջի տնօրենի տեղակալ ուսումնական աշխատանքների գծով, փորձագիտական խմբի անդամ:

Նաիրա Արշակյան՝ Երևանի պետական բժշկական համալսարանի ֆարմակոգնոզիայի ամբիոնի դասախոս, փորձագիտական խմբի անդամ:

Գարիկ Սարգսյան՝ Երևանի հենակետային բժշկական քոլեջի ուսանող, փորձագիտական խմբի ուսանող անդամ:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ուսումնական հաստատության հետ:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ՈԱԱԿ Քաղաքականության մշակման և իրականացման բաժնի մասնագետ **Մերի Բարսեղյանը**:

Փորձագիտական խմբի բոլոր անդամները և համակարգողը ստորագրել են գաղտնիության և անկախության հայտարարագրեր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

Պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար քոլեջը 11.01.2023 թ. ներկայացրել է սահմանված ձևաչափի դիմում-հայտ՝ լիցենզիայի և հրամանների կրկնօրինակներով:

ՈԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները և կից փաստաթղթերը:

Դիմում-հայտի ընդունման մասին որոշման կայացումից հետո քոլեջի և ՈԱԱԿ-ի միջև կնքվել է պայմանագիր: Կազմվել և հաստատվել է հավատարմագրման գործընթացի իրականացման ժամանակացույցը:

Ինքնավերլուծություն

Հաշվի առնելով ուսումնական հաստատության առաջին անգամ ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու հանգամանքը և քոլեջներում որակի ապահովման մշակույթի ձևավորման սկզբնական փուլում լինելը՝ ՈԱԱԿ–ը առցանց աշխատաժողովներ է

[1] Հավելված 1. Փորձագիտական խմբի անդամների ինքնակենսագրականներ

իրականացրել հավատարմագրվող ՄԿՈ հաստատությունների հետ: Աշխատաժողովները նպատակ են ունեցել նախապատրաստել քոլեջներին հավատարմագրման գործընթացի կազմակերպման փուլերին: Աշխատաժողովներին ներկայացվել են ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշների և չափորոշիչների մեկնաբանությունները, հավատարմագրման դիմելու համար լրացվող էլեկտրոնային հարցաշարը, ինքնավերլուծության ու SWOT վերլուծության իրականացման առանձնահատկությունները: Ինքնավերլուծության իրականացման ընթացքում ՈԱԱԿ-ի կողմից կազմակերպվել են ընթացիկ քննարկումներ առաջացած հարցերը պարզաբանելու նպատակով:

Քոլեջն ինստիտուցիոնալ կարողությունների վերանայված ինքնավերլուծությունը ներկայացվել է 05.05.2023 թ.-ին: Ինքնավերլուծության գործընթացում ներգրավվել են հաստատության վարչական և ուսումնաօժանդակ կազմի ներկայացուցիչները, դասախոսները, ուսանողները:

Նախապատրաստական փուլ

Քոլեջի կողմից ինստիտուցիոնալ կարողությունների զեկույցը և կից փաստաթղթերը ներկայացնելուց հետո ՈԱԱԿ համակարգողն ուսումնասիրել է դրանք՝ ՈԱԱԿ-ի պահանջներին համապատասխանությունը ստուգելու նպատակով:

Ինքնավերլուծությունը և կից բոլոր փաստաթղթերը նախնական գնահատման նպատակով տրամադրվել են փորձագիտական խմբին, որի կազմը նախօրոք համաձայնեցվել է քոլեջի հետ և հաստատվել ՈԱԱԿ տնօրենի հրամանով:

Փորձագիտական խմբին՝ աշխատանքներին նախապատրաստելու և գործընթացների արդյունավետությունն ապահովելու նպատակով իրականացվել են վերապատրաստումներ հետևյալ թեմաներով.

1. փորձագիտական խմբի անդամների հիմնական գործառույթները,
2. հանդիպումների անցկացման և հարցապնդումների էթիկան և տեխնիկան,
3. ՄԿՈ (Մասնագիտական կրթություն և ուսուցում) ոլորտի առանձահատկությունների սահմանում և հավատարմագրման չափանիշների մեկնաբանում,
4. նախնական գնահատումը՝ որպես փորձագիտական զեկույցի նախապատրաստման փուլ, զեկույցին ներկայացվող հիմնական պահանջները:

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով քոլեջի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում՝ ըստ ձևաչափի պատրաստելով լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով նաև համապատասխան ստորաբաժանումները կամ թիրախային խմբերը: Նախատեսված ժամկետներում փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները, և համակարգողը կազմել է փորձագիտական այցի պլան-ժամանակացույցը: Առաջնորդվելով ՀՀ Մասնագիտական կրթության փորձաքննության անցկացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են փորձագետների կողմից նախատեսվող հանդիպումները բոլոր խմբերի հետ, բաց և փակ հանդիպումներ, փաստաթղթերի ուսումնասիրություն, զուգահեռ հանդիպումներ և այլն:

Փորձագիտական խմբի անդամները նաև մասնագիտական հանդիպումներ են ունեցել ընտրված կրթական ծրագրերի պատասխանատուների, դասախոսների և ուսանողների հետ: Նախքան մասնագիտական հանդիպումները փորձագետներն ուսումնասիրել են ուսանողներին տրվող հանձնարարականները, իրականացրել են դասալսումներ՝ հասկանալու, թե այդ հանձնարարականները որքանով են միտված ակնկալվող արդյունքների ձեռքբերմանը:

Նախնական այց

Փորձագիտական այցին նախորդող շրջանում իրականացվել է առցանց նախապատրաստական քննարկում քոլեջի ներկայացուցիչների հետ: Հանդիպմանը ներկա են գտնվել ՈԱԱԿ Ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի ղեկավարը, փորձագիտական խմբի ղեկավարը և համակարգողը: Հանդիպման ընթացքում քոլեջի ղեկավար կազմին են ներկայացվել և նրանց հետ համաձայնեցվել փորձագիտական այցի պլան-ժամանակացույցը, ինչպես նաև քննարկվել և փոխհամաձայնեցված որոշումներ են կայացվել փորձագիտական այցի տեխնիկական, կազմակերպչական, տեղեկատվական հարցերի, հանդիպումների մասնակիցների վարքագծի և էթիկայի նորմերի վերաբերյալ:

Փորձագիտական այց

Փորձագիտական այցը[2] տեղի է ունեցել 2023թ. սեպտեմբերի 25-28-ն ընկած ժամանակահատվածում: Փորձագիտական այցը սկսվել և ավարտվել է քոլեջի ղեկավար կազմի հետ հանդիպումներով: Հարցերի պարզաբանման նպատակով կազմակերպված ֆոկուս խմբային հանդիպումների մասնակիցներն ընտրվել են նախօրոք տրամադրված ցանկից՝ ներկայացուցչականության սկզբունքով: Իրականացվել են ըստ ժամանակացույցի նախատեսված բոլոր հանդիպումները, դիտարկվել են հաստատության ռեսուրսները[3], նաև գործընկեր Գավառ ԲԿ-ի ռեսուրսները, որոնցից օգտվում է նաև քոլեջը: Այցի ընթացքում փորձագիտական խումբն իրականացրել է նաև դասալսումներ և փաստաթղթերի ուսումնասիրություն[4]:

Փորձագիտական այցի յուրաքանչյուր աշխատանքային օրվա վերջում տեղի ունեցած փորձագիտական խմբի փակ հանդիպման ժամանակ դուրս են բերվել փորձագիտական գնահատման միջանկյալ արդյունքները, իսկ այցի ավարտին փակ քննարկմամբ ամփոփվել են այցի հիմնական արդյունքները:

Չափանիշների վերաբերյալ վերջնական եզրակացության փորձագիտական խումբը հանգել է բոլոր անդամների քննարկումների և վերլուծությունների արդյունքում՝ մշտապես կիրառելով կոնսենսուսի սկզբունքը:

---

[2] Հավելված 2. Փորձագիտական այցի ժամանակացույց

[3] Հավելված 4. Փորձագիտական խմբի կողմից ուսումնասիրված ռեսուրսներ

[4] Հավելված 3. Ուսումնասիրված փաստաթղթերի ցանկ

Փորձագիտական զեկույց

Փորձագիտական խմբի անդամները և ՈԱԱԿ համակարգողը պատրաստել են փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը: Փորձագիտական խմբի անդամների հաստատումից հետո նախնական զեկույցը տրամադրվել է քոլեջին:

Զեկույցի վերաբերյալ իր արձագանքը քոլեջն ուղարկել է ՈԱԱԿ 24.11.2023թ.-ին: Ուսումնասիրելով փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը՝ քոլեջը չի ներկայացրել առարկություններ: Փորձագիտական խումբը կազմել է զեկույցի վերջնական տարբերակը, որը խմբի կողմից հաստատվել է 30.11.2023թ.-ին:

_____

Մերի Բարսեղյան
Փորձագիտական խմբի համակարգող

30-ը նոյեմբերի, 2023թ.

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պատմություն. «Գավառի պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ուսումնական հաստատություն է, որն իրականացնում է միջին մասնագիտական կրթական ծրագիր՝ համաձայն տրված լիցենզիայի:

Հիմնադրվել է 1993 թվականին, 20.11.2003թ.-ից հանդիսանում է ՀՀ Առողջապահության նախարարության «Գավառի պետական բժշկական քոլեջ» հիմնարկի իրավահաջորդը: Քոլեջն իր գործունեությունն իրականացնում է կանոնադրության համաձայն, ռազմավարական պլանով ամրագրված առաքելության և նպատակներին համապատասխան, որոնք մշակվել են հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրությունը, «Կրթության մասին», «Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքները և կրթության ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերը:

Կրթություն. Այսօր քոլեջում աշխատում և դասավանդում են բարձրագույն և միջին մասնագիտական կրթություն ունեցող թե՛ երկարամյա փորձ ունեցող դասախոսներ և բժիշկներ, թե՛ երիտասարդ մասնագետներ, ովքեր մշտապես ձգտում են կատարելագործել իրենց մասնագիտական հմտությունները՝ պարբերաբար մասնակցելով վերապատրաստումների և սեմինարների (հաճախ նաև սեփական նախաձեռնությամբ), պատրաստակամ են ինքնակրթվելու, մոտիվացված են և ջանում են իրենց գիտելիքները, փորձն ու վաստակը փոխանցել իրենց սաներին:

Քոլեջում ուսուցումն իրականացվում է հետևյալ մասնագիտությունների գծով.

1. «Քույրական գործ»
2. «Մանկաբարձական գործ»
3. «Դեղագործութուն» (առկա և հեռակա ուսուցմամբ)
4. «Ատամնատեխնիկական գործ»
5. «Բուժական կոսմետոլոգիա»

Հետազոտություն/ստեղծագործ մտածելակերպի ձևավորում. Քոլեջի առաջնահերթ նպատակներից է մանկավարժական անձնակազմի և ուսանողների հետազոտությունների ու ստեղծագործական գործունեության միջոցով գիտության, կրթության և բժշկագիտության ոլորտի նորագույն նվաճումների ուսումնասիրությունը և արդյունքների օգտագործումն ուսումնական պրոցեսի բարելավման և արդիականացման գործում:

Հետազոտական գործունեությունն իրականացվում է տեղեկատվական պաշարների հավաքագրման, ուսումնասիրման, վերլուծման, գիտելիքի փոխանցման և կրթական գործընթացում հետազոտական գործունեությամբ ձևավորված գիտելիքի ինտեգրման

հաջորդական քայլերի միջոցով: Հետազոտական աշխատանքները նպաստող գործոն են հանդիսանում ուսումնական ծրագրերով նախատեսված նյութի համակողմանի ուսումնասիրման և միջառարկայական կապի պահպանման համար:

Արտաքին կապեր. Քոլեջի ակնառու ձեռքբերումներից է նաև համագործակցային կապերի առկայությունը: Կարճ ժամանակահատվածում քոլեջը կարողացավ գործընկերային հարաբերություններ հաստատել հանրապետության բժշկական և այլ կազմակերպությունների հետ, որի արդյունքում հնարավոր եղավ կազմակերպել և անցկացնել ուսուցողական այցեր, սեմինարներ, քննարկումներ և այլ միջոցառումներ, որոնք էլ ավելի հետաքրքրական, բովանդակալից և արդյունավետ են դարձնում ուսումնական գործընթացը՝ հարստացնելով սովորողների մասնագիտական գիտելիքները, ձևավորելով հայրենասիրական, բարոյական, էկոլոգիական հայացքները և հասարակաքաղաքական արժեհամակարգը:

Որակի ապահովում. Պայմանավորված այն հանգամանքով, որ ԳՊԲՔ-ում որակի ապահովման համակարգը գործում է 2021թվականից, այդ իսկ պատճառով որակի ապահովմանն ուղղված փաստաթղթային բազան այնքան էլ լիարժեք չէ: Հիմնականում մշակվել և ներդրվել է որակի ապահովմանն ուղղված հետևյալ մեխանիզմները.

- Որակի ապահովման կանոնակարգ
- Որակի ապահովման քաղաքականություն
- Քոլեջի ներքին և արտաքին շահակիցների կարիքների գնահատման կարգ
- Քոլեջի ներքին և արտաքին տեղեկատվության ապահովման ընթացակարգ
- Հարցումների անցկացման կարգ

Աղբյուր. *վերոնշյալ տիրույթներում փաստերի դուրս բերման աղբյուր են հանդիսանում ՄՈՒՀ-ի կողմից տրամադրված փաստաթղթերը (օր.՝ ինքնավերլուծություն, ռազմավարական ծրագիր, ժամանակացույց, ստորաբաժանումների պլաններ, հայեցակարգեր և այլն):*

ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Փաստեր

Գավառի պետական բժշկական քոլեջի 2023-2028 ռազմավարական ծրագրի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ քոլեջի առաքելությունը բաղկացած է երեք բաղադրիչներից.

1. Հիմնական առաքելություն՝ մասնագիտական խորը պատրաստվածություն ունեցող, համակողմանիորեն զարգացած միջին մասնագետների պատրաստումը, ինչպես նաև համամարդկային արժեքներով առաջնորդվող անհատի և հանրապետության օրինակելի քաղաքացու ձևավորումը:
2. Առաքելություն՝ պատրաստել ՀՀ աշխատաշուկայի պահանջներին համապատասխան անհրաժեշտ գիտելիքներով, կարողություններով և հմտություններով օժտված մասնագետների՝ ի նպաստ ՀՀ առողջապահության ոլորտի զարգացմանը:
3. Առաքելության կարևոր տարր՝ մշակել և ներդնել համապասխան մեխանիզմներ և մեթոդներ՝ դասավանդումը դարձնելով առավել արդյունավետ, մեծացնելով ուսանողների գործուն մասնակցությունը և ինքնուրույնությունը ուսումնառության գործընթացում:

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ քոլեջի սահմանած առաքելության բաղադրիչները լրացնում են իրար և հանդիսանում մեկ ամբողջություն՝ շեշտադրելով ՀՀ առողջապահության ոլորտի զարգացմանը միտված մասնագետների պատրաստումը՝ ՈԱԾ-ի 5-րդ մակարդակին համահունչ:

Քոլեջի 2023-2028 ՌԾ-ն 2018-2023 ՌԾ-ի տրամաբանական շարունակությունն է: Քոլեջն իրականացրել է 2018-2023 ՌԾ-ի կատարողականի վերլուծություն, որտեղ նկարագրված են ՌԾ-ի հիմնախնդիրների լուծման ուղղությամբ իրականացրած գործողությունները, ստացված արդյունքները, հաջորդ պլանավորման համար նախանշված նպատակները, սակայն հիմնականում ներկայացված չեն, թե որքանով են նախատեսված գործողություններն իրականացվել:

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ՌԾ-ում յուրաքանչյուր հիմնախնդրի համար սահմանված է նպատակ, մշակված է գործողությունների պլան-ժամանակացույց, նշված են պատասխանատուները, կատարման ժամկետները, թիրախային խմբերը, ակնկալվող արդյունքները և արդյունքների գնահատման չափանիշները: Հարկ է նշել, որ 2023-2028 ՌԾ-ի ակնկալվող արդյունքների համար սահմանված գնահատման

չափանիշները հիմնականում պարունակում են որակական ցուցիչներ, քանակական ցուցիչներ սահմանված չեն, բացառությամբ «Շրջանավարտների զբաղվածության և կարիերայի աճի ապահովում» 5-րդ հիմնախնդրի համար սահմանված ակնկալվող արդյունքի (աշխատանքի տեղավորման աջակցության նպատակային ծրագրի իրականացումը կապահովի շրջանավարտների զբաղվածության ակնկալվող 50%-ից ոչ ցածր ցուցանիշ)։

Համաձայն կատարողականի՝ 2018 -2023 ՌԾ-ի հիմնախնդիրների մեծ մասի ուղղությամբ իրականացվել են պլանավորված աշխատանքներ. այսպես օրինակ որոշակիորեն բարելավվել են քոլեջի ռեսուրսները, աճել են ընդունելության ցուցանիշները։ Այդուհանդերձ, փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ կան խնդիրներ, որոնք չի հաջողվել լուծել, ինչպես օրինակ բուժքույրական ծառայության շարունակական կրթության համակարգի կատարելագործման և զարգացման իրականացումը, ֆինանսական այլընտրանքային աղբյուրների որոնումը։

Քոլեջն իր ռազմավարական նոր ծրագրում առանձնացրել է տեսլականը, ուժեղ և թույլ կողմերը, հնարավորությունները, հիմնախնդիրները և դրանցից բխող նպատակները։ Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ սահմանված հիմնախնդիրները հիմնականում կրկնում են նախորդ ՌԾ-ով սահմանված ուղղությունները։

Նոր ՌԾ-ում ավելացվել են հետևյալ ուղղությունները.

- ուսումնական բազաներում գործնական պարապմունքները առավել արդյունավետ իրականացնելու համար վերահսկողական միջոցների ձեռնարկումը,
- շրջանավարտների զբաղվածության և կարիերայի աճի ապահովումը,
- մասնագիտական կրթական ծրագրերի շարունակական բարելավման ապահովումը և կրթական նոր մոդելների ներդրման համար նախադրյալների ստեղծումը,
- Հանրապետության և միջազգային միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հետ բենչմարքինգի անցկացման մեխանիզմների հաստատումը,
- ուսանողների և դասավանդողների շարժունակությունն (շարժունություն) ապահովելու նպատակով միջազգային գործընկերային հարաբերությունների հաստատումը:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ նշված ուղղությունների իրականացման համար քոլեջն արդեն իսկ իրականացրել է որոշակի քայլեր, մասնավորապես մշակել է «Բենչմարքինգի իրականացման կանոնակարգ», որոշակիորեն բարելավել է շրջանավարտների հետ հետադարձ կապի մեխանիզմները, ավելացրել է ուսումնական գործընթացում պրակտիկ մասնագիտական գործունեություն իրականացնող դասավանդողների ներգրավվածությունը։

2023-2028 ՌԾ պլան ժամանակացույցի դիտարկումը ցույց տվեց, որ օրինակ յուրաքանչյուր տարի քոլեջը պլանավորվում է իրականացնել.

1. ՀՀ Գեղարքունիքի մարզի միջին բուժանձնակազմի պահանջարկի վերլուծության հիման վրա նոր մասնագիտությունների ներդրում,

2. հետազոտական աշխատանքներում սովորողների ներգրավումը ապահովող հստակ մեխանիզմների ստեղծում,
3. դասախոսական և ուսանողական կազմի համար օտարալեզու օժանդակ դասընթացների կազմակերպում:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը դեռևս չի իրականացրել տարածաշրջանի պահանջարկի վերլուծություն, ինչպես նաև չի գնահատել իր ռեսուրսները նոր կրթական ծրագրեր ներդնելու հնարավորության վերլուծության համար: Հարկ է նշել, որ հստակեցված չեն նաև հետազոտական աշխատանքներում սովորողների ներգրավման մեխանիզմները, օտարալեզու դասընթացները ևս եղել են խիստ սահմանափակ:

Քոլեջը սահմանել է շահակիցների հետևյալ շրջանակը՝ ուսանողներ, քոլեջի դասախոսական և ուսումնաօժանդակ կազմ, դիմորդներ, շրջանավարտներ, գործատուներ, հասարակություն և պետական մարմիններ: 2022 թ.-ից քոլեջում գործում է «Ներքին և արտաքին շահակիցների կարիքների գնահատման կարգ», որով կարգավորվում են շահակիցների կարիքների և պահանջների բացահայտման, գնահատման գործընթացները: Քոլեջը ներքին շահակիցների կարիքների վերհանման մեխանիզմ է դիտարկում հարցումների իրականացումը, սակայն տեսանելի չէ, թե ինչպես են հարցումների արդյունքում վերհանված կարիքները արտացոլվել նոր ՌԾ-ում և նպատակների սահմանման մեջ: Քոլեջն իր թույլ կողմն է համարում ռազմավարական պլանավորման և ՈԱ գործընթացներում արտաքին և ներքին շահակիցների ներգրավման հստակ մեխանիզմների բացակայությունը: Այնուամենայնիվ փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի ներքին և արտաքին շահակիցները կիսում են քոլեջի առաքելության վերաբերյալ սահմանված ուղղություններն ու հիմնադրույթները, կարևորում են քոլեջի դերը տարածաշրջանում առողջապահության ոլորտի որակյալ կադրեր պատրաստելու համար: Ըստ քոլեջի շահակիցների՝ հաստատությունը կարևոր դեր ունի տարածաշրջանում՝ անմիջականորեն սպասարկելու Գավառում գործող բժշկական կենտրոնի, այլ բուժհաստատությունների, դեղատների կարիքները և ապահովելու կայուն ու սահուն մասնագիտական սերնդափոխությունը:

2018-2023 ՌԾ-ի իրագործման մշտադիտարկումը քոլեջը ներկայացնում է ՌԾ պլան կատարողականի միջոցով, որտեղ ներկայացված է յուրաքանչյուր գործողության կատարման ընթացքը: ՌԾ գործողությունների պլան-ժամանակացույցը և դրա կատարողականը քննարկվում են քոլեջի կառավարման խորհրդի նիստերի ժամանակ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քննարկումները նպաստում են ռազմավարական պլանի վերահսկմանը և իրականացմանը, ինչպես նաև հիմք են հանդիսանում կառուցվածքային ստորաբաժանումների տարեկան գործունեության պլանավորման համար:

Քոլեջի առաքելության և նպատակների մշտադիտարկման, գնահատման մեխանիզմ են համարվում տնօրենի և կառուցվածքային ստորաբաժանումների կողմից ներկայացվող հաշվետվությունները, որտեղ ըստ գործընթացների կատարման անդրադարձ է կատարվում տվյալ ուսումնական տարվա ընթացքում ուսումնական աշխատանքների կատարմանը:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ Գավառի պետական բժշկական քոլեջը թողարկում է միջին մասնագիտական կրթությամբ առողջապահական ոլորտի մասնագետներ՝ իր 2023-2028 ռազմավարական ծրագրով սահմանած առաքելությանը, ՈԱՇ-ի 5-րդ մակարդակին և տարածաշրջանի աշխատաշուկայի կարիքներին համապատասխան: Կարևոր է ընդգծել, որ քոլեջի շրջանավարտները համալրում են տարածաշրջանի բուժհաստատությունների և դեղատների աշխատատեղերը՝ ապահովելով տարածաշրջանի բուժհաստատությունների կադրային համալրման պահանջարկը: Այսուհանդերձ, փորձագիտական խումբը գտնում է, որ ՌԾ-ում նշված առաքելությունները ունեն միավորման և հստակեցման կարիք, քանի որ բխում են մեկը մյուսից և կարող են ներկայացվել որպես մեկ առաքելություն, ինչը կնպաստի շահակիցների շրջանում քոլեջի առաքելության առավել հստակ ուրվագծմանը՝ շեշտադրելով քոլեջի դերակատարությունը տարածաշրջանում:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջն իրականացրել է նախորդ 2018-2023 ՌԾ-ի կատարողականի վերլուծություն՝ նշելով ձեռքբերումները, բացթողումները, բարելավման ենթակա ուղղությունները: Դրական է նաև, որ վերոնշյալ վերլուծության արդյունքները հիմք են հանդիսացել նոր 2023-2028 ՌԾ-ի մշակման համար, որտեղ տեսանելի են որոշակի բարելավումներ, ինչպիսիք են նոր ռազմավարական ուղղությունների սահմանումը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում արտաքին և ներքին շահակիցների ջանքերը քոլեջի առաքելության իրականացման հարցում և գտնում, որ նրանց լայն շրջանակի ներգրավումը ՌԾ-ի մշակման աշխատանքներում կնպաստի շահակիցների հետ առավել արդյունավետ համագործակցության ձևավորմանը և քոլեջի մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների նպատակային և օպտիմալ բաշխմանը և կիրառությանը ՌԾ նպատակների իրագործելիության ապահովման համար:

Դրական գնահատելով քոլեջի ՌԾ-ի նախորդ փուլի գնահատման աշխատանքները, հարկ է նշել, որ ՌԾ-ի մշտադիտարկման գործիքակազմը դեռևս թույլ չի տալիս ՄՈՒՀ-ին իրականացնել նախորդ ՌԾ-ի աշխատանքների լիարժեք գնահատում՝ հիմնվելով օբյեկտիվ կատարողական ցուցանիշների վրա: Փորձագիտական խումբը շեշտադրում է պլանավորման և արդյունքների գնահատման միջոցների փոխկապակցվածության անհրաժեշտությունը: Փորձագիտական խումբը նշում է, որ ՄՈՒՀ-ի 2023-2028 ՌԾ-ով սահմանված գնահատման առանցքային ցուցիչները /ԳԱՑ/ շարունակում են արտահայտել միայն որակական բաղադրիչները, քանակական ցուցիչների սահմանումը թույլ կտա քոլեջին բարելավել ՌԾ-ի գործողությունների արդյունքների գնահատումը և տեսանելի դարձնել արդյունքների ձեռք բերման աստիճանը, որը հաջորդ պլանավորման համար օբյեկտիվ հիմք կհանդիսանա: Մյուս կողմից քոլեջը կարող է բազմազանեցնել և բարելավել մշտադիտարկման գործիքակազմը՝ գնահատման գործընթացում ներգրավելով ներքին և արտաքին շահակիցներին:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ հաստատության իրականացրած գործունեությունը համապատասխանում է սահմանված առաքելությանը, ներքին և արտաքին շահակիցները կիսում են հաստատության տեսլականը և կարևորում քոլեջի դերը տարածաշրջանում գործող բուժհաստատությունների և դեղագործական ընկերությունների կարիքներին համահունչ մասնագետների պատրաստման համար, ռազմավարական նախորդ շրջափուլից հետո բարելավվել են ռազմավարական պլանավորման մեխանիզմները, առկա են նպատակների գնահատման որոշ ցուցիչներ և մշտադիտարկման մեխանիզմներ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է չափանիշ 1-ի պահանջները:

Եզրակացություն: ԳՊԲՔ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 1-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործառումն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

Փաստեր

ԳՊԲՔ-ի կառավարումն իրականացվում է հիմնադրի՝ ՀՀ կառավարության, ԿԳՄՍ նախարարության, քոլեջի կոլեգիալ կառավարման մարմնի և գործադիր մարմնի՝ քոլեջի տնօրենի միջոցով: Քոլեջի կոլեգիալ կառավարման մարմինը կառավարման խորհուրդն է, որը գործում է 5 տարի ժամկետով, բաղկացած է 11 անդամներից, նիստերը գումարվում են 3 ամիսը մեկ անգամ պարբերականությամբ: Կառավարման խորհուրդը քննարկում և հաստատում է քոլեջի ռազմավարական ծրագիրը, ուսումնական պլանները, մոդուլային ծրագրերը, բոլոր կանոնակարգերը և ընթացակարգերը, որոշում է քոլեջի ֆինանսների տնօրինման ուղղությունները: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ կառավարման խորհրդի նիստերում քննարկվել են ուսման վարձաչափերի փոփոխման, ֆինանսների վերաբաշխման հարցեր, որոնք հիմք են հանդիսացել շտկումներ կատարելու ֆինանսատնտեսական գործունեության նախահաշվում՝ հաջորդ պլանավորման փուլում: Թեև քոլեջի ֆինանսական մուտքերը (ձևավորվում են ուսանողների վարձավճարներից) սահմանափակ են համապատասխան ռեսուրսային համալրումներ իրականացնելու համար, այսուհանդերձ, գործընկերային կապերը թույլ են տալիս նաև հասարակական հիմունքներով օգտվել գործատուների ռեսուրսներից ուսումնական պրակտիկաների անցկացման համար:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ կառավարման խորհուրդը ներգրավված է քոլեջի ՌԾ-ով սահմանված ուղղությունների, նպատակների և խնդիրների իրականացման աշխատանքներում՝ աջակցելով քոլեջի կայուն զարգացմանը, օրինակ՝ ԿԽ-ի առաջարկությամբ մի քանի պրակտիկայի վայրեր, այդ թվում Գավառի ԲԿ-ն, ուսանողների ուսումնական պրակտիկաները կազմակերպում են անվճար հիմունքներով՝ նպատակ ունենալով տնտեսված գումարները ուղղել քոլեջի նյութատեխնիկական բազայի

արդիականացմանը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ֆինանսական համապատասխան պլանավորում դեռևս չի իրականացվել՝ գնահատելու համար, թե որքան ֆինանսական միջոցներ են անհրաժեշտ ՌԾ նպատակների իրականացման համար և դրանց ներդրումն ինչ արդյունավետության կարող է հանգեցնել: Ուսանողների ընդունելության դինամիկայի տվյալների հիման վրա ԿԽ-ը առաջարկել է իր մասնակցությունը ունենալ ուսանողների հավաքագրման աշխատանքներում, առաջարկելով նաև աշխատանքներ տանել Սևան քաղաքում: Կառավարման խորհրդի նախագահը, հանդիսանալով Գավառի ԲԿ-ի տնօրենը, մեծապես աջակցում է քոլեջին ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման հարցում՝ հնարավորություն տալով ԲԿ-ում գործնական պարապմունքների անցկացման համար, նաև աշխատանքով է ապահովում քոլեջի շրջանավարտներին:

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ քոլեջի ՌԾ պլան-ժամանակացույցում տեսանելի չեն ռազմավարական նպատակներին հասնելու և պլանավորված գործողությունների իրականացման համար պահանջվող ֆինանսական միջոցները: Ֆինանսների բաշխումը քոլեջը իրականացնում է տարեկան պլանավորմամբ՝ ֆինանսատնտեսական նախահաշվի նախագծի հիման վրա, ծախսերի հիմնական ուղղություններն են՝ աշխատակիցների աշխատավարձները (83.4%), գույքի (1.47%), ինչպես նաև ուսումնական նյութերի (0.8%) ձեռքբերումը՝ հիմք ընդունելով ստորաբաժանումների ներկայացրած զեկուցագրերը:

Քոլեջում գործում են մանկավարժական և տնօրինական խորհուրդներ, որտեղ քննարկվում են ուսումնական գործընթացին առնչվող հարցերը, ուսումնական աշխատանքների ու դասալսումների արդյունքները, ստորաբաժանումների հաշվետվությունները և այլն:

Քոլեջի կազմակերպահրավական կառուցվածքը համալրվել է նոր ենթակառուցվածքներով, մասնավորապես՝ 2019 թ.-ից քոլեջն ունի կարիերայի կենտրոն, 2022 թ.-ից՝ որակի կենտրոն, 2023թ.-ից՝ բուժկետ և քաղաքաշտպանության շտաբ: 2023-2024 ուսումնական տարուց վերականգնվել է ամբիոնների ինստիտուտը, որոնք ստեղծվել են համաձայն ուսումնական պլաններում ներառված մոդուլների երեք խմբերի՝ առանցքային հմտությունների, ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնագիտական մոդուլների ամբիոններ: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ամբիոնների ստեղծման նպատակն է ՄԿԾ-ների արդյունավետ կառավարումը, սակայն այս ուղղությամբ կարիքների վերհանում և վերլուծություններ քոլեջը չի իրականացրել, ինչպես նաև չի հստակեցվել ամբիոնի դերակատարությունը: Փորձագիտական ուսումնասիրությունները և հանդիպումները ցույց տվեցին, որ այս փոփոխությունը դեռևս չի հանգեցրել կրթական ծրագրերի բարելավումների պլանավորման: Ամբիոնների գործունեության հստակ ու ռազմավարական ծրագրին համահունչ պլանավորում և նրանց գործառույթներից բխող ակնկալվող արդյունքների սահմանում քոլեջի կողմից ևս տեղի չի ունեցել:

ՄՈՒՀ-ի կազմակերպական կառուցվածքում ներկայացված են ստորաբաժանումների միջև առկա (հորիզոնական և ուղղահայաց) կապերը: Քոլեջում գործող խորհուրդների,

ստորաբաժանումների գործունեությունը և լիազորությունների շրջանակը սահմանվում է հաստատված կանոնակարգերով, աշխատակարգերով, ընթացակարգերով և պաշտոնների անձնագրերով: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի հաստիքային աշխատողները իրականացնում են մեկից ավելի գործառույթներ (գործավար-կադրերի տեսուչ, լաբորանտ- ամբիոնի վարիչ, մեթոդիստ-ամբիոնի վարիչ), որոնք հիմնականում վարչական աշխատանքը համատեղում են դասավանդման հետ:

Քոլեջն ունի կառավարման համակարգում դասավանդողների և ուսումնառողների մասնակցության ապահովման որոշ մեխանիզմներ, ներդրված են կառավարման խորհրդի կազմում ուսանողների և դասախոսների թեկնածությունը առաջադրելու ընթացակարգեր: Կառավարման խորհրդի կազմում ընդգրկված են 2 դասախոս և 3 ուսանող, որոնց թեկնածությունը համապատասխանաբար առաջադրում են մանկավարժական և ուսանողական խորհուրդները: Տնօրինական խորհրդում ընդգրկված են դասախոսներ և մասնակցային սկզբունքով ուսանողական խորհրդի ներկայացուցիչը՝ ՈւԽ նախագահը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ այս խորհուրդներում ներգրավված ուսանողները և դասախոսները նախաձեռնողականություն չեն ցուցաբերում կարիքների վերհանման համար: Տեսանելի չեն նաև նիստերի արդյունքների վերաբերյալ տեղեկատվության տարածման և մյուս շահակիցներին դրանց մասին իրազեկման քայլերը:

Կարևոր է ընդգծել, որ դասախոսական կազմի մեծամասնությունը նաև վարչական աշխատակիցներ են, ինչով պայմանավորված արդեն իսկ ներգրավված են որոշումների կայացման, ընթացակարգերի քննարկման գործընթացներում լինելով տնօրինական և մանկավարժական խորհուրդների անդամներ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ տնօրինական և մանկավարժական խորհուրդներում ՄՈՒՀ-ի գործող 2023-2028 ՌԾ-ի (տնօրենի ընտրության զարգացման ծրագիրը) դրույթների վերաբերյալ նախնական քննարկումներ չեն եղել, այն քննարկվել է միայն ԿԽ-ի կողմից:

Քոլեջի գործունեությունն իրականացվում է ռազմավարական՝ երկարաժամկետ և ընթացիկ տարեկան՝ կարճաժամկետ պլանավորումներով: Ստորաբաժանումների աշխատանքային պլանները կազմվում են տարեկան՝ կարճաժամկետ պլանավորմամբ: Պլանավորման փաստաթղթերի դիտարկումը ցույց տվեց, որ մինչև 2023-2024 ուսումնական տարին կառուցվածքային ստորաբաժանումների պլանավորումը ներառել է տարվա ընթացքում պլանավորված գործողությունները, որոնք գրեթե չեն տարբերվել տարեց տարի (բացառությամբ 2020թ. համավարակի վերաբերյալ միջոցառումները), արդեն 2023-2024 ուսումնական տարում դրանք փոխկապակցվել են նոր ՌԾ-ի հետ: Պլանավորման մեջ ընդգծվում է ՌԾ հիմնախնդիրը, որի լուծմանը ուղղված է գործողությունը, տվյալ ստորաբաժանման կողմից սահմանված ակնկալվող վերջնարդյունքը, պատասխանատուն, կատարման ժամկետները, փաստաթղթերը և գործիքները: Ստորաբաժանման նախկին պլանում առկա գործողությունները նոր ՌԾ-ի հիմնախնդիրների հետ առնչության համատեքստում դիտարկելիս պարզ է դարձել, որ դրանցում էական բովանդակային փոփոխություններ նախորդ տարիների համեմատությամբ գրեթե չեն իրականացվել: Պլանավորված գործողությունների համար նախատեսվող արդյունքները նույնպես

գործողություն են ենթադրում, օրինակ՝ հանրակրթական ծրագրով բաժնի վարիչի աշխատանքային պլանում նշված՝ «Դասախոսների ուսումնական և մեթոդական նյութերով *ապահովում։* Ուսումնական նոր մեթոդների և հետաքրքիր հնարների ներդրման *ապահովում»* գործողության համար սահմանված է հետևյալ ակնկալվող արդյունքը՝ *«Իրականացնել* որակյալ և արդյունավետ ուսումնադաստիարակչական գործընթաց»։ Մեկ այլ օրինակ՝ պրակտիկայի վարիչի աշխատանքային պլանում նշվում է մեկ վերջնարդյունք պլանավորված բոլոր գործողությունների համար, որը իր հերթին լայն է սահմանված և ենթադրում է մի քանի արդյունքների ձեռքբերում։ Ընդհանուր առմամբ աշխատանքային պլաններում սահմանված վերջնարդյունքները չափելի չեն։

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ քոլեջում կառավարումն իրականացվում է վերևից ներքև ուղղահայաց կառավարմամբ, իսկ հաշվետվողականությունը՝ ներքևից վերև։ Առանձին ստորաբաժանումներ, մասնավորապես որակի և կարիերայի կենտրոնները համագործակցում են բոլոր օղակների հետ, սակայն մնացած ստորաբաժանումների միջև գործառնական կապերը թույլ են զարգացած։ Այսպես օրինակ, աշխատանքային պլաններում արտահայտված են միանման գործողություններ, որոնք պլանավորված են տարբեր ստորաբաժանումների կողմից, սակայն դրանք փոխկապակցված չեն միմյանց հետ, օրինակ տնօրենի տեղակալը, հանրակրթական բաժնի վարիչը, մեթոդիստը, ՈԱ պատասխանատուն պլանավորում և իրականացնում են դասալսումներ և կատարում վերլուծություն, սակայն այս բոլոր գնահատման քայլերը չեն համադրվում և ամբողջականացվում։

ՄՈՒՀ-ը ստորաբաժանումների աշխատանքների վերահսկողության և մշտադիտարկման մեխանիզմ դիտարկում է հաշվետվությունները։ Մշակվել է հաշվետվությունների կատարման ուղեցույց և ժամանակացույց, որտեղ ներկայացվում է թե, որ ստորաբաժանումը ինչ պարբերականությամբ և ում է հաշվետու (դրանով իսկ սահմանվում է քոլեջի հաշվետվողականության կարգը, օրինակ՝ տնօրենը հաշվետու է տնօրինական, մանկավարժական և կառավարման խորհուրդներին և այլն), սակայն ուղեցույցում սահմանված չեն հաշվետվության կատարման չափանիշները։ Հաշվետվությունների դիտարկումը ցույց է տալիս, որ օրինակ տնօրենի տարեկան հաշվետվության մեջ արտահայտված է վերլուծական բաղադրիչը (առկա են տվյալների քանակական վերլուծություններ և ներկայացված է գործընթացների զարգացման դինամիկան), սակայն այս մոտեցումը ինստիտուցիոնալ չէ։ Հաշվետվությունները հիմնականում նկարագրական են, օրինակ ՈԱ պատասխանատուի հաշվետվությունը, որոշ դեպքերում տվյալները ամբողջական չեն ներկայացվում, օրինակ պրակտիկայի վարիչի հաշվետվությունը չի ներառում տեղեկատվություն, թե քանի ուսանող է անցել պրակտիկա, որտեղ է եղել և ինչ արդյունքներ են արձանագրվել։

Փորձագիտական խմբի ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ հաշվետվությունները տարեցտարի կրկնվում են, օրինակ մեթոդական աշխատանքների տարեկան հաշվետվությունը սկսած 2019թ.-ից գրեթե բովանդակությամբ չի փոխվել, առկա

վերլուծությունները և եզրակացությունները աշխատանքների կատարման ընթացքի վերաբերյալ նույնպես կրկնվում են։

ՈԱ բաժինը իրականացնում է ներքին գնահատում։ Փորձագիտական ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ՈԱ ներքին գնահատման արդյունքները տեղ են գտել նաև ուսումնական գծով փոխտնօրենի և քոլեջի տնօրենի տարեկան հաշվետվության մեջ, սակայն այս արդյունքները հաջորդ պլանավորման հիմք չեն հանդիսացել։

Քոլեջի գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրությունը կատարվել է նախորդ ռազմավարական ծրագրի կատարողականի վերլուծության և նոր ՌԾ-ում ներկայացված SWOT վերլուծության միջոցով։ Արդյունքում վերհանվել են քոլեջի հիմնախնդիրները, վերանայվել են ռազմավարական ուղղությունները, սահմանվել են նպատակները, որոնք արտացոլվել են նոր 2023-2028 ռազմավարական զարգացման ծրագրում։

Քոլեջը ՈԱԿ-ի հարցումների միջոցով որոշակիորեն իրականացնում է ներքին խնդիրների վերհանում, օրինակ՝ ուսանողների և դասախոսների շրջանում ռեսուրսներից բավարարվածության վերաբերյալ հարցումները, որտեղ շահակիցները շեշտադրել են նյութատեխնիկական բազայի արդիականացման անհրաժեշտությունը։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ վերջին տարվա ընթացքում քոլեջը նպատակային ծախսեր է կատարել ռեսուրսների բարելավման ուղղությամբ։

Քոլեջի գործունեության վրա ազդող արտաքին գործոնների որոշակի ուսումնասիրություն իրականացվում է կարիերայի կենտրոնի կողմից՝ աշխատաշուկայի ուսումնասիրության և արտաքին շահակիցների հետ համագործակցության և հետադարձ կապ ապահովելու միջոցով։ Հարցումներ են անցկացվել գործատուների հետ, որոնք վերաբերվում են շրջանավարտների գիտելիքներից բավարարվածությանը։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ գործատուները հիմնականում բարձր են գնահատում շրջանավարտների մասնագիտական պատրաստվածության մակարդակը։

Ներքին և արտաքին գործոնների ուսումնասիրության և ռիսկերի վեր հանման համար այլ մշակված գործիքակազմ քոլեջը դեռևս չունի։

ՈԱ համակարգի ստեղծմանը զուգընթաց քոլեջը փորձ է կատարել, բոլոր գործընթացներում ներդնել ՊԻԳԲ սկզբունքները, գործընթացները նախ և առաջ առնչվել են փաստաթղթային վարչարարությանը։ ՄՈՒՀ-ը գնահատելով իր փաստաթղթային հենքը ստեղծել է ՈԱ գործընթացների համար կարևոր ընթացակարգեր և կանոնակարգեր, մշակել է պաշտոնների անձնագրեր, հստակեցրել լիազորությունների շրջանակը, այսուհանդերձ ՊԻԳԲ շրջափուլը դեռևս իր ավարտին չի հասել, քանի որ քոլեջը դեռևս չի գնահատել իր կատարած բարեփոխումների արդյունքները։ Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ քոլեջում առկա հիմնական գործընթացները գտնվում են պլանավորման և իրականացման փուլերում, իսկ օրինակ հարցումների արդյունավետությունը գնահատվել է քոլեջի որակի ապահովման պատասխանատուի կողմից, և որոշակիորեն բարելավվել են կիրառվող հարցաշարերը։

ԳՊԲՔ-ը «Հարցումների անցկացման կարգի» (2023թ.) և «Դասալսումների անցկացման և արդյունքների վերլուծության ընթացակարգի» (2020թ.), «Ներքին և արտաքին շահակիցների կարիքների գնահատման կարգի» (2022թ.) համաձայն հավաքագրում է կրթական ծրագրերի իրականացման վերաբերյալ որոշակի տեղեկատվություն, այս նպատակին են ծառայում նաև պետական ամփոփիչ ատեստավորման քննությունների հանձնաժողովների նախագահների հաշվետվությունները: Քոլեջը որպես տեղեկատվության հավաքագրման միջոց դիտարկում է նաև ստորաբաժանումների հաշվետվությունները, սակայն վերջիններս հիմնականում չեն պարունակում վերլուծական տեղեկատվություն, 2023-2024 ուստարում ընդունվել և գործածության մեջ է դրվել «Մոդուլային (առարկայական) ծրագրերի մշակման, վերանայման և գնահատման» կանոնակարգը:

ՌԾ-ում ներկայացված նպատակները հստակ և արդյունահենք չեն, իսկ արդյունքների գնահատման համար սահմանված չափանիշները թույլ չեն տալիս օբյեկտիվ պատկեր կազմել արդյունքների ձեռք բերման աստիճանի վերաբերյալ: Այսպես օրինակ, ՌԾ-ում սահմանվել է հետևյալ նպատակը՝ «Նպաստել Քոլեջի ուսանողական համակազմի համալրմանը դիմորդների կայուն հոսք ապահովելու միջոցով», իսկ նպատակի իրագործումից ակնկալվող արդյունքները և արդյունքների գնահատման չափանիշներն են՝ «Դիմորդների կայուն հոսքի ապահովմանը և ուսանողների համակազմի համալրմանը կնպաստի արդյունավետ և նպատակաուղղված աշխատանքը, գործընկերային հարաբերությունների հաստատումը և Քոլեջի աշխատանքների թափանցիկության ու հրապարակայնության ապահովումը, նոր մասնագիտությունների ներդրումը»:

Քոլեջը դեռևս չունի տեղեկատվության հավաքագրման վերլուծությունը և հավաքագրումը գնահատող մեխանիզմների արդյունավետությունը գնահատող գործիքակազմ:

Քոլեջն ունի ֆեյսբուքյան և ինստագրամյան էջեր, որտեղ լուսաբանվում են քոլեջի առօրյա գործընթացները, սակայն լիարժեք հրապարակայնություն այս գործիքները չեն ապահովում, մասնավորապես քոլեջի ՄԿԾ-ների վերաբերյալ տեղեկատվության հրապարակում չի իրականացվում, ապահովված չէ կառավարման որոշումների թափանցիկությունը արտաքին շահակիցների համար: ՄՈՒՀ-ը որոշումների նախագծերի և այլ շահակիցների համար կարևոր տեղեկատվությունը փակցնում է քոլեջում ցուցատախտակների վրա, հնարավորինս հասանելի դարձնելով ներքին շահակիցներին: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը արդեն իսկ կատարել է կայքեջի գնում և աշխատում է այն գործարկելու ուղղությամբ:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջը փորձել է մշակել կառավարման և վարչարարության համար անհրաժեշտ փաստաթղթային հենքը, ինչը նպաստել է կառավարման գործընթացների կանոնակարգմանը և միանձնյա ու կոլեգիալ կառավարման սկզբունքների զուգակցմանը որոշումների կայացման գործընթացում: Փորձագիտական խումբը դրական է համարում Կառավարման խորհրդի նախաձեռնողական ներգրավվածությունը քոլեջի զարգացման ուղղությունները հստակեցնելու տեսանկյունից և

շեշտադրում, որ խորհրդի ներուժի ամբողջական օգտագործումը կարող է արդյունավետ լինել քոլեջի կարիքների վերհանման և պլանավորման գործընթացների հստակեցման համար: Քոլեջի նպատակների իրականացման և սահմանված արդյունքների ձեռքբերման համար քոլեջը կարիք ունի բազմազանեցնելու ֆինանսական մուտքերի աղբյուրները. փորձագիտական խումբը գտնում է, որ գործընկերային կապերը կարող են աջակցել ֆինանսական աղբյուրների բազմազանեցմանը և ապահովել քոլեջի կայուն զարգացումը: Փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում այն հանգամանքը, որ քոլեջն իր նպատակների սահմանումը չի փոխկապակցում անհրաժեշտ նվազագույն ֆինանսական ռեսուրսների պլանավորման հետ, ինչը կարող է հանգեցնել ֆինանսական ներդրումների անարդյունավետ իրականացմանը:

Անդրադառնալով քոլեջի կազմակերպական կառուցվածքին և կառավարման հորիզոնական ու ուղղահայաց կապերին՝ փորձագիտական խումբը նշում է, որ քոլեջն իր ռազմավարական նպատակներին համահունչ փորձել է ձևավորել համապատասխան ստորաբաժանումներ ուսանողների կարիերայի աջակցման և որակի ապահովման աշխատանքների առավել հստակ պլանավորման համար: Փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը կարիք ունի հստակեցնելու նաև ամբիոնների գործառույթները, ամբիոնների ու այլ վարչական օղակների միջև կապերը, իրականացնելով կարիքների վերհանում, ինչը կնպաստի առավել իրատեսական արդյունքների սահմանմանը և պլանավորման գործընթացների լավարկմանը: Փորձագիտական խումբը գտնում է, որ շահակիցների կողմից ամբիոնային համակարգի վերաբերյալ ընկալումների խզումները, դրանց դերի ոչ հստակ լինելը խոչընդոտում են ամբիոնների լիարժեք գործունեությանը և դեռևս չեն նպաստում կրթական ծրագրերի կառավարման արդյունավետության բարձրացմանը: Այս տեսանկյունից հարկ է ընդգծել ՄԿԾ պատասխանատուների բացակայությունը, որը թույլ չի տալիս քոլեջին համակարգված իրականացնել անհրաժեշտ բարեփոխումները, իսկ ներկա փուլում նորաստեղծ ամբիոնային համակարգը չի նպաստում այդ բացի լրացմանը և կրթական ծրագրերում առկա խնդիրների լուծմանը: Փորձագիտական խումբը գտնում է, որ անհրաժեշտ է գնահատել քոլեջի կողմից վարչական աշխատակիցների ծանրաբեռնվածությունը՝ հատկապես վարչական և դասավանդման աշխատանքների զուգակցման պայմաններում, որը կարևոր քայլ է նրանց պատասխանատվությունների բաշխման, պաշտոնների անձնագրերով սահմանված գործառույթների ամբողջական իրականացման և ՌԾ նպատակների հաղթահարման գործընթացն ավելի իրատեսական դարձնելու համար:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջը ստեղծել է կառավարման օղակներում դասախոսների և ուսանողների ներգրավման մեխանիզմներ՝ ապահովելով ներկայացուցչականության հնարավորությունները, սակայն կարևոր է շեշտադրել, որ քոլեջի ներկայացուցիչները դեռևս նախաձեռնողական չեն իրենց առնչվող որոշումների կայացման գործընթացում, ինչը կարող է խոչընդոտել նրանց կարիքների բացահայտմանը: Քոլեջի կողմից ուշադրության պետք է արժանանան նաև կայացված որոշումների մասին տեղեկատվության տարածման գործընթացների և գործիքակազմի բարելավումը և

որոշումների քննարկումը շահակիցների առավել լայն շրջանակի հետ՝ ապահովելու կայացված որոշումների թափանցիկությունը։

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջը փորձել է կանոնակարգել պլանավորման գործընթացները՝ երկարաժամկետ և կարճաժամկետ պլանավորումների միջոցով, սակայն այս գործընթացներում ՌԾ-ի հետ փոխկապակցումը կրել է ֆորմալ բնույթ և ցույց չի տալիս ռազմավարական նպատակներին հասնելու ճանապարհային քարտեզը։ Միևնույն ժամանակ կարևոր է, որ պլանավորումներում հստակեցվեն և սահմանվեն իրատեսական ակնկալվող արդյունքներ, իսկ ստորաբաժանումների ընթացիկ պլանավորումները բխեն տվյալ ժամանակահատվածում քոլեջի կարիքներից և իրապես ծառայեն գործընթացների բարելավմանը։ Փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջում դեռևս լիովին ձևավորված չէ պլանավորման և հաշվետվողականության մշակույթը, տվյալ դեպքում այն կրում ավելի շատ ֆորմալ քան բովանդակային բնույթ։ Մյուս կողմից, կարևոր է հաշվետվություններում վերլուծական բաղադրիչի կիրառման դրական փորձի տարածումը։ Փորձագիտական խումբը գտնում է՝ անհրաժեշտ է, որ կատարված վերլուծությունները հիմք դառնան հաջորդ պլանավորման և տվյալահենք որոշումների կայացման համար և հաշվետվություններում արտահայտվող բոլոր ոլորտներում քոլեջի զարգացումը խթանելու համար։ Հաշվետվողականության մեխանիզմների լավարկումը և փոխկապակցումը որակի ապահովման գործընթացներին թույլ կտան խուսափել գործառույթների կրկնություններից և կնպաստեն քոլեջի համապատասխան ստորաբաժանումների ու աշխատակիցների գործունեության բարելավմանը։

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջը փորձել է վերլուծել նախորդ ՌԾ-ի կատարողականը, և դրա արդյունքում բացահայտված որոշ հիմնախնդիրներ արտացոլվել են գործող ՌԾ-ում։ Սակայն կարևոր է այս մոտեցումը ներդնել բոլոր վերլուծությունների համար, փոխկապակցել հաշվետվողականության և որակի ապահովման գործիքների կիրառման արդյունքում բացահայտված կարիքները։ Դրանց հիմքով կառավարչական որոշումների կայացումը կնպաստի կառավարման համակարգի արդյունավետության բարձրացմանը և շահակիցների կարիքներին ու քոլեջի առաքելությանը համահունչ գործընթացների իրականացմանը։

Փորձագիտական խումբը հատկանշական է համարում, որ քոլեջը փորձ է կատարում որակի կառավարման ՊԻԳԲ շրջափուլը ներդնել առկա գործընթացներում, և գտնում, որ կարևոր է շրջափուլի կիրառումից հետո վերլուծել առկա խնդիրները և ապահովել շրջափուլի կիրառման շարունակականությունը, ինչը կնպաստի մշակված փաստաթղթային հենքի լիարժեք գործարկմանը և կանոնակարգերով ու քաղաքականություններով նախատեսված խնդիրների հաղթահարմանը։

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջը փորձում է հարցումների, ամփոփիչ ատեստավորման հաշվետվությունների միջոցով տվյալներ հավաքագրել կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների մասին, սակայն վերլուծությունների բացակայությունը խոչընդոտում է գործող մեխանիզմների բարելավումը, մասնավորապես չի

հանգեցնում որակավորումների մասին տեղեկատվության տրամադրմանն ուղղված մեխանիզմների որակական փոփոխությունների։

Փորձագիտական խումբը դրական է համարում քոլեջում ընթացող գործընթացների լուսաբանմանն ուղղված գործիքների լավարկումը և հույս հայտնում, որ քոլեջի ներդրած ռեսուրսները պաշտոնական կայքի գործարկման ուղղությամբ հիմք կհանդիսանան կայացվող որոշումների թափանցիկության ապահովման և շահակիցների առավել լայն շրջանակում տեղեկատվության տարածման համար։

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջի կառավարման համակարգում ուղղահայաց և հորիզոնական գործառնական կապերը լիարժեքորեն չեն գործում, վերևից ներքև և ներքևից վերև հաշվետվողականության գործընթացներն անկատար են, ռազմավարական և կարճաժամկետ պլանավորման գործընթացներում առկա է խզվածք, կրթական ծրագրերի կառավարման և պատասխանատվության բաշխումը համաչափ իրականացված չէ, որակի ապահովման համակարգի կողմից հավաքագրված տվյալները հիմնականում չեն դրվում կառավարչական որոշումների կայացման հիմքում, սահմանված չեն քանակական, որակական տեղեկատվության հավաքագրման և դրանց գնահատման մեխանիզմներ, որակի կառավարման ՊԻԳԲ շրջափուլը վարչարարության գործընթացներում լիարժեքորեն ներդրված չէ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը չի բավարարում չափանիշ 2-ի պահանջները։

Եզրակացություն: ԳՊԲՔ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 2-ի պահանջներին գնահատվում է **անբավարար:**

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

Փաստեր

Գավառի պետական բժշկական քոլեջը ՈԱՇ-ի 5-րդ մակարդակին համահունչ իրականացնում է առկա ուսուցմամբ հիմնական և միջնակարգ կրթության հիմքով հետևյալ միջին մասնագիտական կրթական ծրագրերը՝ «Քույրական գործ», «Մանկաբարձական գործ», «Ատամնատեխնիկական գործ» և «Բուժական կոսմետոլոգիա», իսկ «Դեղագործություն»-ը նաև հեռակա ուսուցմամբ։ Գործող ՄԿԾ-ների իրականացման համար քոլեջն առաջնորդվում է Պետական կրթական չափորոշիչներով։ Քոլեջը փորձ է կատարել սահմանել ՄԿԾ վերջնարդունքները՝ հիմք ընդունելով ՊԿՉ-ում մասնագետին ներկայացվող պահանջները ու ընդհանուր և հատուկ մասնագիտական մոդուլների ուսումնառության արդյունքները։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ գործատուների կարիքների վերհանում և դրանցով պայմանավորված ՊԿՉ-ների տեղայնացում քոլեջը չի իրականացրել և ՄԿԾ-ների առանձին փաթեթ չի մշակել։

Փորձագիտական ուսումնասիրություններից և մասնագիտական քննարկումներից պարզ դարձավ, որ յուրաքանչյուր կրթական ծրագրի համար քոլեջը սահմանել է ՄԿԾ Ուսումնառության արդյունքների (վերջնարդյունքներ) երկու խումբ, որոնք ներկայացրել է քարտեզագրումների միջոցով: Հարկ է նշել, որ խմբերը միմյանց հետ փոխկապակցված չեն, ընդ որում կիրառվել են նույնական դասիչներ՝ օրինակ երկու քարտեզագրումների դեպքում ՈւԱ-1 արդյունքի ներքո ներկայացված են տարբեր բնութագրիչներ և արդյունքներ: Հարկ է նշել, որ առաջին խմբում՝ ՈԱՇ-ի հետ համադրելիության քարտեզագրման մեջ, որպես ուսումնառության արդյունքներ քոլեջը ներկայացրել է ՊԿՉ-ների 9-րդ կետում նկարագրվող մասնագետին ներկայացվող պահանջները, օրինակ՝ «ունենա մասնագիտական գործունեության տվյալ բնագավառում իր մասնագիտական դերին անհրաժեշտ կարողությունները ձևավորելու համար պահանջվող տեսական և գործնական գիտելիքներ»: Այս խմբում ներկայացվող ՈՒԱ-ները համընդհանուր են բոլոր մասնագիտությունների համար:

Երկրորդ խմբում՝ ՄԿԾ-ի «ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության մոտեցումները» քարտեզագրումների մեջ, որպես ուսումնառության արդյունքներ մի դեպքում՝ օրինակ «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտության համար ընդհանրացրել և ներկայացրել է տվյալ կրթական ծրագրի ընդհանուր և հատուկ մասնագիտական կարողությունների մոդուլների նպատակները, մյուս դեպքում՝ օրինակ «Քույրական գործ» մասնագիտության համար ներկայացրել է ՊԿՉ 7-րդ կետում տրված մասնագետի մասնագիտական պարտականությունները: Վերոնշյալը փաստում է, որ քոլեջը չունի ՈՒԱ-ների մշակման համար միասնական մոտեցումներ, մյուս կողմից տվյալ մեթոդաբանությամբ ձևավորված ՈՒԱ-ները լիովին չեն արտահայտում տվյալ մասնագետի մասնագիտական վերջնարդյունքների շրջանակը: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ սահմանված ՈՒԱ-ները հիմնավորված չեն մոդուլներից բխող ուսումնառության արդյունքներով, որպես օրինակ կարելի է նշել, որ «Ատամնատեխնիկական գործ» ՄԿԾ-ում ներկայացված ՈւԱ 19 (Ատամնատեխնիկական պրակտիկայում կիրառվող գործիքների ախտահանման իրականացում) արդյունքի ապահովման համար քոլեջը նշել է հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ, ռուսաց լեզու, տնտեսագիտության հիմունքներ և այլ ոչ համապատասխան դասընթացներ, որոնք չեն հանգեցնում սահմանված արդյունքի ձեռքբերմանը: Նմանօրինակ հակասություններ առկա են նաև մյուս ՄԿԾ-ներում:

Քոլեջը վերանայել է նաև մոդուլային (առարկայական) ուսումնական ծրագրերը, որի համար ձևավորվել է աշխատանքային խումբ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասախոսներն առաջարկել են հնարավոր փոփոխությունները՝ հաշվի առնելով տեսական և գործնական ժամերի համամասնությունը և նախապայման հանդիսացող մոդուլների տեղաբաշխումը կրթական ծրագրերում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ պահուստային ժամերի հաշվին ծրագրային փոփոխություն են կատարել «անալիտիկ քիմիա» մոդուլի համար նախատեսված վերջնարդյունքների ձեռքբերման համար: Ուսումնական պլանների դիտարկումից պարզ դարձավ, որ մոդուլների մուտքային

պահանջները պահպանված են՝ հաշվի առնելով հաջորդող մոդուլի համար նախատեսված արդյունքների ձեռքբերումը։

Կրթական ծրագրերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ընտրովի մոդուլ (կլինիկական պաթոլոգիա) ներդրված է միայն «Դեղագործություն» կրթական ծրագրում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսումնական պլաններում ներառված են նաև նախասիրական առարկաներ, սակայն ներկայումս քոլեջում նախասիրական առարկաներ չեն դասավանդվում։

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ աշխատաշուկայի ուսումնասիրության և գործատուների կարիքների հիմքով կրթական ծրագրերում քոլեջի կողմից բարելավումներ չեն իրականացվել, սակայն աշխատաշուկայում կիրառվող մոտեցումներն իրենց հետ քոլեջ են բերում պրակտիկ ոլորտից դասավանդողները՝ ծանոթացնելով ուսանողներին առկա փորձին, քննարկելով իրենց պրակտիկայում առկա բժշկական դեպքերը։ Քոլեջը չի հստակեցրել նախատեսված արդյունքների ձեռքբերման համար ուսանողներին տրվող առաջադրանքները։ Դրանց ընտրությունն ու մշակումն իրականացվում է դասախոսի կողմից, և երբեմն տեսանելի չէ կապը ուսանողին տրամադրվող առաջադրանքի և սահմանված վերջնարդյունքի միջև։ Փորձագիտական դիտարկումներից պարզ դարձավ, որ գործնական պարապմունքների ընթացքում «Քույրական գործ» մասնագիտության ուսանողները ցուցադրում են էլաստիկ բինտով կապ դնելու տեխնիկան, սովորում են ներարկումներ իրականացնել, ինչպես նաև իրականացնում են քույրական գործընթացի բոլոր փուլերը։ «Ատամնատեխնիկական գործ» բաժնի ուսանողներին տրվում են առաջադրանքներ ձևավորելու մոմով ատամը, պատրաստել ներդիրներ, շարժական և անշարժ պրոթեզներ և այլն։ «Դեղագործություն» կրթական ծրագրի դեպքում ուսանողները պատրաստում են հերբարիումներ, փափուկ, հեղուկ, կարծր դեղաձևեր։

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ այդուհանդերձ գործատուների որոշ պահանջներ, ինչպիսիք են ուսանողների օտար լեզվի իմացություն, էլեկտրոնային համակարգերի (մասնավորապես՝ Արմեդ) կիրառություն, «Քույրական գործ» մասնագիտության դեպքում ստոմատոլոգիայում օգտագործվող նյութերի և գործիքների իմացություն ատամնաբուժարաններում բուժքույր աշխատելու համար, դեռևս համապատասխան արձագանք չեն ստացել քոլեջի կողմից և չեն ներառվել ուսումնառության գործընթացում։

Քոլեջը մշակել և 2023թ. սեպտեմբերին ընդունել է դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն, որը գործածության մեջ կդրվի 2023-2024 ուստարուց։ Մինչև կարգի ընդունումը քոլեջն առաջնորդվել է իր մոդուլային/առարկայական ուսումնական ծրագրերով, որոնցով փորձել է ապահովել դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության ուսումնառության վերջնարդյունքների ձևավորմանը միտված մոտեցումներ՝ առաջնորդվելով ՊԿՉ-ներով։

ՄՈՒՀ-ի կողմից իրականացրած ՄԿԾ-ների ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների

ընտրության քարտեզագրման համաձայն՝ «Ատամնատեխնիկական գործ», «Քույրական գործ» և «Դեղագործություն» ՄԿԾ-ների բոլոր ՈւԱ-ների համար նշված են միևնույն դասավանդման և ուսումնառության մեթոդները: Փորձագիտական այցից և իրականացված դասալսումներից պարզ դարձավ, որ դասախոսները կիրառում են տարաբնույթ մեթոդներ (քննարկումներ, մտագրոհ, իրավիճակային խնդիրների քննարկում և այլն), որոնք սակայն համակարգված և առանձնացված չեն՝ ըստ մոդուլների և ակնկալվող ուսումնառության արդյունքների և կախված են դասախոսի ընտրությունից: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողներին հանձնարարվող առաջադրանքների միջոցով դասախոսները կարևորում են գործնական հմտությունների ձևավորումը՝ հիմնավոր տեսական գիտելիքների հետ զուգակցելով: Որոշ մասնագիտական մոդուլների (Քույրական գործը վիրաբուժությունում, Դեղագործության կազմակերպում և էկոնոմիկա) դասավանդումն իրականացվում է քոլեջի գործընկեր բուժհաստատություններում և դեղագործական կազմակերպություններում, որտեղ պրակտիկ փորձառություն ունեցող դասախոսների կողմից ուսանողներին տրվող յուրաքանչյուր գործնական առաջադրանքին նախորդում է տեսական գիտելիքների ստուգումը համապատասխան թեստերի միջոցով:

Ինքնավերլուծության համաձայն՝ ԳՊԲՔ-ում գործում են դասավանդման և ուսումնառության մեթոդների արդյունավետության ուղղակի և անուղղակի մշտադիտարկման և գնահատման մի շարք մեխանիզմներ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ այդ մեխանիզմներն են դասալսումները և ՈԱԿ-ի կողմից կազմակերպված հարցումները: Դասալսումների արդյունքները հավաքագրվում են մեթոդիստի, ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալի կողմից և ամփոփվում համապատասխան հաշվետվություններով: Դասալսման արդյունքներով ուսումնառության և դասավանդման մեթոդներին առնչվող հարցերը քննարկվում են Մանկավարժական խորհրդի նիստերում: Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ տնօրենի տեղակալի կողմից դասալսման արդյունքների վերլուծությունում (2021-2022 ուստարի) նշված են ուսումնական տարվա ընթացքում իրականացրած դասալսումների նպատակները և արդյունքները, վերհանվել են ուժեղ և թույլ կողմերը, սակայն վերհանված ուժեղ և թույլ կողմերը որոշակիորեն հակասում են իրար, իսկ տրված եզրահանգումը հակասում է նշված թույլ կողմերին: Այսպես օրինակ մի կողմից նշվում է, որ դասախոսներն ապահովում են սովորողների համաչափ և ակտիվ ներգրավումը, մյուս կողմից, որ մեծամասամբ կիրառվում են ուսուցման պասիվ մեթոդներ, իսկ ինտերակտիվ մեթոդները քիչ են կիրառվում:

Քոլեջը 2022թ. մշակել և ներդրել է գնահատման օբյեկտիվության և ակադեմիական ազնվությանը միտված՝ «Ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման», «Պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման և անցկացման», «Պրակտիկաների գնահատման» կանոնակարգերը և «Հանրակրթական առարկաների պետական ավարտական քննությունների կազմակերպման և անցկացման» աշխատակարգը: Կարգերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ սահմանվել են գնահատման չափանիշները և միավորները: Այսուհանդերձ, փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ուսանողների և դասախոսների ընկալումները նույնական չեն մշակված չափանիշների

վերաբերյալ, խնդրահարույց է նաև յուրաքանչյուր առաջադրանքի համար հատկացված միավորների կշիռը: ՄՈՒՀ-ը իրականացրել է գնահատման մեթոդների քարտեզագրում, սակայն գնահատման մեթոդները (թեստային, գործնական, հետազոտական աշխատանքներ, հարց ու պատասխան, ինքնաստուգում, փոխստուգում) գրեթե նույնական են բոլոր մասնագիտությունների բոլոր վերջնարդյունքների համար: Մասնագիտական քննարկումներից պարզ դարձավ, որ դասախոսներն իրենք են ընտրում գնահատման մեթոդը կախված մոդուլի առանձահատկությունից: Այսուհանդերձ, գնահատման մեթոդները չեն փոխկապակցվում ուսումնառության արդյունքի գնահատմանը, այլ ցույց են տալիս տվյալ նյութի յուրացումը:

Դիտարկվող կրթական ծրագրերի գնահատման թերթիկների, տոմսերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ երբեմն դասախոսները հաշվի են առնում ընդհանուր ծավալի 80%-ի հաղթահարումը որպես անցողիկ շեմ արդյունքի ձեռքբերման համար: Գնահատման թերթիկների դիտարկումը ցույց տվեց նաև, որ հաճախ դրանք բավական ծավալուն են և ընդգրկում են մի քանի թեմաներ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ գործատու դասավանդողները դրանց կիրառումը համարում են անհրաժեշտ նախապայման ուսանողներին պրակտիկ միջավայրում գործունեությանը պատրաստելու համար, մասնավորապես՝ Քույրական գործը վիրաբուժությունում մոդուլի շրջանակներում դասավանդողն ուսանողների տեսական գիտելիքները գնահատման թերթիկի կիրառմամբ ստուգելուց հետո է միայն թույլ տալիս նրանց մուտք գործել վիրաբուժական բաժանմունք կարողությունները զարգացնելու համար: Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ դասախոսները տրամադրում են անհրաժեշտ հետադարձ կապ ուսանողներին, բացատրում անհասկանալի դրույթները և թեմաները:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասախոսներն իրավիճակային խնդիրների, խաչբառների, դերային խաղերի, բժշկական «Այլ կերպ» խաղի միջոցով մեծացնում են ուսանողների հետաքրքրությունը դասավանդվող մոդուլի նկատմամբ: Այսուհանդերձ, ըստ ամբիոնային ուղղությունների հետազոտական թեմաներ առանձնացված չեն, իսկ հետազոտական առաջադրանքները, չնայած որ տրամադրվում են բոլոր մոդուլների շրջանակներում, համակարգային ձևով արտացոլված չեն քոլեջի կրթական ծրագրերի փաթեթներում: Մասնագիտական քննարկումներից պարզ դարձավ, որ հետազոտական աշխատանքների գնահատման չափանիշները քոլեջում դեռևս հստակ չեն:

Քոլեջը «Ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման» կանոնակարգում սահմանել է նաև ուսանողների գնահատականների բողոքարկման կարգը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ բողոքարկման դեպքեր քոլեջում դեռևս չեն արձանագրվել:

Պրակտիկայի ընթացքում ձեռքբերված գործնական կարողությունների և հմտությունների յուրացումն ստուգելու և գնահատելու նպատակով մշակվել են գործնական հմտությունների գործողությունների և մանիպուլյացիաների ալգորիթմներ՝ գործողությունների կատարման հաջորդականության սկզբունքով, որոնք որոշակի գնահատման ռուբրիկներ են ցույց տալիս: Այսպես օրինակ՝ պրակտիկայի ծրագրի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ առանձնացված են թեմայի բովանդակությունից

բխող գործողությունները, նախատեսված ընդհանուր ժամաքանակը, սակայն տեսանելի չէ ժամերի բաշխումը՝ ըստ թեմաների և արդյունքների։ Նախաավարտական պրակտիկաները գնահատվում են օրագրերի միջոցով, իսկ ուսումնական պրակտիկաները ընթացիկ 2023 ուսատարվանից կգնահատվեն ձևաթերթի միջոցով, որը մշակվել է պրակտիկայի վարիչի կողմից։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ բոլոր պրակտիկաների ժամանակ ՄՈՒՀ-ի կողմից պրակտիկայի ղեկավար է հանդես գալիս պրակտիկայի վարիչը, իսկ պրակտիկայի վայրի կողմից նշանակվում է պատասխանատու մասնագետ։ Նախաավարտական պրակտիկայի վայրի մասնագետի հետ ՄՈՒՀ-ը կնքում է վճարովի ծառայությունների մատուցման պայմանագիր։

Ուսումնաարտադրական պրակտիկան գնահատվում է ըստ ուսանողների մասնակցության և ակտիվության ու տվյալ կազմակերպությունից պրակտիկայի ղեկավարի անցկացրած հարցումների արդյունքների։ Նախաավարտական պրակտիկան ավարտվում է ուսանողի կողմից լրացված օրագրով, որտեղ յուրաքանչյուր օրվա ավարտին պրակտիկայի ղեկավարի կողմից ուսանողը գնահատվում է։ Օրագրում նշվում են ուսանողի կողմից օրվա ընթացքում կատարված աշխատանքի բովանդակությունը և ծավալը։ Վերջնական գնահատականը ձևավորվում է ընթացիկ գնահատականների միջինացման միջոցով։

ՄՈՒՀ-ում մշակվել է ակադեմիական ազնվության քաղաքականություն (2022թ.), որը սահմանում է ակադեմիական ազնվության խախտման դեպքերը, այն որոշակիորեն ունի ուղեցույցի բնույթ։ Մշակված ընթացակարգը սահմանում է նաև կարգապահական տույժերի կիրառման միջոցներն ու ընթացակարգը, եթե ուսանողը թույլ է տվել ակադեմիական բարեվարքության խախտում։ Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ դասախոսների կողմից խախտման դեպքերին քաղաքականությունը չի անդրադառնում, եթե օրինակ դասախոսը հետազոտություն է իրականացնում կամ մեթոդական աշխատանք։ Ինքնավերլուծության համաձայն՝ ՄՈՒՀ-ը նշում է, որ վերոհիշյալ մեխանիզմներն ու գործիքակազմը դեռևս բավարար չեն ակադեմիական ազնվության խախտման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու համար։ Այսպիսով, մշակված քաղաքականությունն ու փաստաթղթերը գործնական կիրառություն դեռևս չեն ստացել։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ակադեմիական ազնվության խախտման դեպքեր չեն հայտնաբերվել։

Քոլեջում մշակվել և գործում է «Պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման և անցկացման» ընթացակարգ, ինչպես նաև հստակեցվել են գիտելիքների գնահատման չափանիշները, սահմանվել գնահատման սանդղակները։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ յուրաքանչյուր ՄԿԾ-ի պետական ատեստավորումն իրականացվում է ըստ սահմանված պահանջների ընդհանուր և հատուկ մասնագիտական մոդուլներից։ Քույրական գործ կրթական ծրագրում իրականացվում է երկփուլ համալիր քննություն։ Առաջին փուլի ժամանակ գիտելիքներն են ստուգվում թեստերի միջոցով, երկրորդ փուլով բանավոր քննության միջոցով գործնական առաջադրանքների կիրառմամբ՝ տրամադրվում են իրավիճակային խնդիրներ, իսկ գործնական հմտությունները ստուգվում են քույրական գործը թերապիայում, մանկաբուժությունում և վիրաբուժությունում մոդուլներից մանիպուլյացիաների և միջամտությունների ցուցադրման միջոցով։

«Ատամնատեխնիկական գործ» և «Դեղագործություն» կրթական ծրագրերում քննությունները ևս իրականացվում են երկփուլ տարբերակով՝ տեսական գիտելիքների և գործնական կարողությունների ստուգմամբ:

Քոլեջը մշակել է կրթական ծրագրերի բենչմարքինգի իրականացման քաղաքականություն, այսուհանդերձ փորձագիտական այցից պարզ դարձավ, որ այն գործնականում կիրառության մեջ դեռևս չի դրվել: Քոլեջը կրթական ծրագրերի համեմատական ուսումնասիրություն ՀՀ քոլեջների հետ և դրա արդյունքում կրթական ծրագրերի բարելավում դեռևս չի իրականացրել: Մշակված փաստաթղթի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ դրանում հստակորեն արտահայտված չեն կրթական ծրագրերի համեմատական վերլուծության մոտեցումները և նպատակները, այլ առավելապես շեշտադրում են քոլեջի կառավարման և ուսումնական գործընթացների ցուցանիշների համեմատությունը այլ համադրելի ուսումնական հաստատությունների ցուցանիշների հետ, ընդհանուր խնդիրների լուծման մեխանիզմների փոխանակումը, քոլեջի կադրերի ներգրավումը և այլն:

Փորձագիտական այցից պարզ դարձավ նաև, որ գործատուները հիմնականում ներգրավված չեն կրթական ծրագրերի մշտադիտարկման գործընթացներում, քոլեջի կողմից չեն կազմակերպվել քննարկումներ՝ վերհանելու գործատուների առաջարկները և դրանցով պայմանավորված փոփոխություններ իրականացնելու համար: Այսուհանդերձ, հարկ է նշել, փորձագիտական հանդիպումները ցույց տվեցին, որ գործատուները մոտիվացված են առաջարկներով հանդես գալու՝ միտված ուսանողների մոտ գործնական կարողությունների զարգացմանը և աշխատաշուկայի պահանջները բավարարող մասնագետների պատրաստմանը:

Քոլեջում ՄԿԾ-ների մշտադիտարկման և գնահատման համար որպես մեխանիզմ են դիտարկվում ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կարծիքները: Հաշվետվությունների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ հանձնաժողովի նախագահ գործատուները հանդես են եկել առաջարկներով, այսպես օրինակ՝ 2022 թ. հանձնաժողովը խորհուրդ է տվել ընդլայնել համագործակցությունը դեղագործական արտադրությունների և կազմակերպությունների հետ ուսանողների գործնական կարողությունների և հմտությունների ձևավորման խնդիրը լուծելու նպատակով՝ հաշվի առնելով տարածաշրջանում դեղագործական արտադրության բացակայությունը:

Գնահատման մյուս մեխանիզմը հարցումներն են: Քոլեջն իրականացրել է հարցումներ ուսանողների շրջանում դասավանդող դասախոսից գոհունակության, կիրառվող մեթոդների և միջոցների վերաբերյալ, սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ այս գնահատումների արդյունքները չեն նպաստել ՄԿԾ-ների բարելավմանը:

Քոլեջում ձևավորվել է նաև ուսումնական ծրագրերի գնահատման և վերանայման աշխատանքային խումբ ուսումնական ծրագրերի մշտադիտարկման և գնահատման արդյունքները, դասավանդողների գրավոր առաջարկությունները քննարկելու, ծրագրերը վերանայելու կամ լրամշակելու նպատակով: Նիստերի արձանագրությունների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ քոլեջի կողմից վերանայվել են ուսումնական

պլանները, տեսական և գործնական դասընթացներին հատկացված ժամաքանակները, ուսուցման և գնահատման մեթոդները, մոդուլի կատարման չափանիշները, մուտքային պահանջները և այլն: Այսուհանդերձ հարկ է նշել, որ իրականացված վերանայումները չեն հաջորդել գնահատման գործընթացներին և չեն կապակցվել դրանց արդյունքներին:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջն իրականացնում է իր առաքելությանը համահունչ կրթական ծրագրեր՝ պատրաստելով բժշկական ոլորտի կադրեր և ապահովելով տարածաշրջանի մասնագետների պահանջարկը: Փորձագիտական խումբը կարևորում է, որ քոլեջի կրթական ծրագրերը համահունչ են նաև պետական կրթական չափորոշիչներին, այսուհանդերձ խնդրահարույց է, որ ՊԿՉ-ների լիարժեք տեղայանացում քոլեջը դեռևս չի կատարել: Կարևոր է ընդգծել, որ ՊԿՉ-ների տեղայնացմանը պետք է նախորդեն աշխատաշուկայի ներկայացուցիչների հետ պարբերաբար քննարկումները, ինչը կնպաստի քոլեջի առանձնահատկություններին և տարածաշրջանի գործատուների կարիքներին համապատասխան կրթական ծրագրերի մշակմանը, ինչպես նաև շրջանավարտների մրցունակությանը և դիմորդների աճին:

Փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում այն հանգամանքը, որ կրթական ծրագրերում առկա ուսումնառության արդյունքների և ՈԱՇ բնութագրիչների համադրություններում առկա են խզումներ, իրականացվող մոդուլները դեռևս ամբողջովին կապակցված չեն ՄԿԾ ուսումնառության արդյունքներին, ինչը կարող է խոչընդոտներ առաջացնել դրանց համար նախատեսված ուսումնառության նյութերը մշակելիս, ինչպես նաև միջառարկայական կապեր ձևավորելիս: Մյուս կողմից քոլեջը պետք է հստակ տարանջատի մոդուլային ուսումնառության արդյունքները ՄԿԾ վերջնարդյունքներից, որը կհանգեցնի շահակիցների ճիշտ ընկալումների ձևավորմանը ՄԿԾ վերջնարդյունքների վերաբերյալ:

Փորձագիտական խումբը կարևորում է, որ կրթական ծրագրերի լավարկումը քոլեջի ուշադրության կենտրոնում է, ինչի մասին են վկայում կրթական ծրագրերում ընթացիկ կատարվող փոփոխությունները պահուստային ժամերի կիրառմամբ: Կրթական ծրագրերի արդյունավետությանը նպաստող հանգամանքներից է նաև դասավանդման գործընթացում բժիշկ-դասախոսների ներգրավումը, ինչը նպաստում է պրակտիկ փորձառության փոխանցմանը և ուսանողների գործնական կարողությունների զարգացմանը:

Փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը պետք է ուշադրություն դարձնի նաև ընտրովի և նախասիրական առարկաների ներդրմանը և տեղաբաշխմանը կրթական ծրագրերում, որտեղ կարևոր է գործատուների հետ հետադարձ կապի ապահովումը և կարիքների բացահայտումը, ինչը հնարավորություն կտա ուսանողներին ավելի պատրաստ լինել աշխատաշուկա մուտք գործելուն և մասնագիտական կարողություններից զատ ունենալ նաև փոխանցելի հմտություններ աշխատաշուկայում իրացվելու համար:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջը մշակել է դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն, սակայն այն դեռևս չի գործարկվել և չի հանգեցրել մեթոդների ընտրության էական բարելավումների:

Փորձագիտական խումբը գտնում է, որ այս ուղղությամբ կարիք կա ուշադրություն դարձնելու ըստ մասնագիտությունների և մոդուլային ծրագրերի առանձնահատկությունների մեթոդների տարանջատմանը և դասախոսների կողմից կիրառվող մեթոդների հստակեցմանը, ինչը կնպաստի ուսումնառության արդյունքների ձեռքբերման գործընթացը դարձնել ավելի պլանավորված և կնպաստի ՊԿՉ-ներով նախատեսված արդյունքների ձեռքբերմանը:

Փորձագիտական խումբը կարևոր է համարում նաև ուսանողներին տրամադրվող առաջադրանքների պլանավորումը և փոխկապակցումը ուսումնական հաստատության և գործատուների հետ համատեղ կիրառվող ռեսուրսներին, ինչը թույլ կտա տեսական գիտելիքների յուրացումը զուգակցել գործնական կարողությունների ձեռքբերմամբ: Հատկանշական է, որ քոլեջն իրականացնում է դասավանդման և ուսումնառության մեթոդների կիրառման գնահատում դասալսումների միջոցով, որոնց հետևում են քննարկումները: Այս համատեքստում փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում, որ դրանց արդյունքները համապարփակ վերլուծության չեն ենթարկվում, հաշվետվություններում ներկայացված խնդիրները ամբողջապես չեն վերլուծվում քոլեջի կողմից, ինչը կարող է խոչընդոտել մեթոդների կիրառման քաղաքականության շարունակական բարելավմանը, ինչպես նաև նախատեսված վերջնարդյունքների ձեռքբերմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջը համակարգել է ուսանողների գնահատման գործընթացը, սահմանել է միավորների ձևավորման համապատասխան չափանիշները, սակայն դրանք տեղայանացված չեն հանձնարարվող առաջադրանքների գնահատման համար, ինչը վտանգում է գնահատման գործընթացի թափանցիկությունը: Այսուհանդերձ, գնահատման չափանիշների ոչ լիարժեք գործարկումը և շահակիցների շրջանում դրանց վերաբերյալ առկա տարընկալումները կարող են թույլ չտալ դրանք արդյունավետորեն կիրառել: Փորձագիտական խումբը շեշտադրում է նաև հետազոտական աշխատանքների գնահատման մեթոդների հստակեցման անհրաժեշտությունը, ինչը թույլ կտա ապահովել գնահատման օբյեկտիվությունը, չափել ուսանողի աշխատանքի ծավալը, ինչպես նաև տրամադրել անհրաժեշտ հետադարձ կապ:

Դրական հանգամանք է նաև գնահատման մեթոդների սահմանումը և քարտեզագրումը, սակայն բոլոր մասնագիտությունների և ուսումնառության արդյունքների համար նույն մեթոդների առանձնացումը քոլեջի կողմից թույլ չի տալիս դիտարկել գնահատման մեթոդի և վերջնարդյունքի համապատասխանությունը և չափելի դարձնել գնահատման արժանահավատությունը, այս համատեքստում կարևոր է գնահատման մեթոդների փոխկապակցումը ուսումնառության արդյունքների հետ դրանց լիարժեք ձեռքբերման և ուսանողի առաջընթացի պլանավորման համար:

Պրակտիկաների գործընթացում կիրառվող ռուբրիկները և ալգորիթմները կարևոր են ուսանողի աշխատանքի պլանավորման և գործողությունների հաջորդական իրականացման համար, սակայն կարևոր հանգամանք է նաև նախատեսված գործողությունների համար տրամադրվող ժամերի բաշխումը, ինչը չափելի կդարձնի իրականացվող գործողությունները և ուսանողների կողմից արդյունքների յուրացումը:

Հատկանշական է, որ քոլեջը քայլեր է ձեռնարկել ակադեմիական ազնվության քաղաքականության սահմանման ուղղությամբ, առանձնացրել պահպանման սկզբունքները: Փորձագիտական խումբը գտնում է, որ կարգի գործարկումը հնարավորություն կտա բացառել գրագողության դեպքերը և պահպանել ակադեմիական ազնվությունը: Փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջի կողմից ակադեմիական ազնվության պահպանմանն ուղղված չափանիշների սահմանումը կարևոր է նաև դասախոսների հետազոտական աշխատանքների գնահատման և դրանց որակի բարձրացման համար: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ուսանողների գործնական հմտությունները ստուգվում են նաև ամփոփիչ ատեստավորման քննությունների ժամանակ գործնական առաջադրանքների տրամադրման, մանիպուլյացիաների իրականացման միջոցով:

Փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում, որ քոլեջը դեռևս չի իրականացրել կրթական ծրագրերի համեմատական վերլուծություն, ինչը թույլ կտար քոլեջին վեր հանել առկա լավագույն փորձը և տեղայնացնել այն՝ հաշվի առնելով տարածաշրջանի և հաստատության առանձնահատկությունները: Փորձագիտական խումբը շեշտադրում է այն հանգամանքը, որ իրականացվող բենչմարքինգի արդյունքները կիրառելիս անհրաժեշտ է հաշվի առնել նաև հաստատության և գործատուների ռեսուրսները, ինչը հնարավորություն կտա սահմանել իրատեսական ուսումնառության արդյունքներ և մշակել համապատասխան առաջադրանքներ: Հաշվի առնելով, որ քոլեջը կարևորում է առաջավոր փորձի փոխանակումը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ բենչմարքինգի գործընթացների արդյունավետ իրականացումը կնպաստի նաև ուսանողների շարժունությանը և որոշակի խթաններ կստեղծի միջազգայնացման համար:

Փորձագիտական խումբը կարևորում է կրթական ծրագրերի գնահատման մեխանիզմների կատարելագործումը՝ գործատուների ներգրավմամբ: Աշխատաշուկայի պահանջների վերհանումը և դրա արդյունքում ինչպես կրթական ծրագրերում, այնպես էլ ուսանողներին տրվող առաջադրանքներում կատարվող փոփոխությունները կնպաստեն ուսանողների կարողությունների զարգացմանը և մասնագիտական կրթությամբ աշխատող շրջանավարտների թվի ավելացմանը: Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի հաշվետվությունների վերլուծությունը, հանձնաժողովների անդամների հետ քննարկումները ևս կարող են աջակցել քոլեջին բարելավել դասավանդման և գնահատման գործիքակազմերը:

Փորձագիտական խումբը դրական է համարում նաև ծրագրերի գնահատման և վերանայման նպատակով աշխատանքային խմբի ձևավորումը, որի գործունեությունը նպաստել է մոդուլների համար մուտքային պահանջների հստակեցմանը և կրթական ծրագրերի վերանայումներին: Հարկ է նշել, որ վերանայումների արդյունքների կապակցումը հետագա բարելավման պլանավորմանը կարող է դրականորեն ազդել կրթական ծրագրերի լավարկման վրա:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ կրթական ծրագրերի վերջնարդյունքները հստակ սահմանված չեն և լիարժեք չեն արտահայտում ՈԱՇ-ի 5-րդ մակարդակով առանձնացված նկարագրիչների և ՊԿՉ-ներով սահմանված ուսումնառության արդյունքների ձեռքբերումը,

ներդրված չեն դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության միասնական մոտեցումներ, գնահատման գործիքակազմը չի ապահովում սահմանված ուսումնառության արդյունքների գնահատումը, գնահատման չափանիշները և սանդղակները ինստիտուցիոնալ կերպով հստակեցված չեն, չի գործում կրթական ծրագրերի համեմատական վերլուծության և լավագույն փորձի տեղայնացման քաղաքականությունը, մշակված մեխանիզմները չեն նպաստում դրա իրագործմանը, մշտադիտարկման և հետագա բարելավման համար սահմանված գործիքների կիրառումը չի հանգեցնում ծրագրերի շարունակական բարելավմանն ու աշխատաշուկայի կարիքներից բխող վերջնարդյունքների ձևավորմանը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը չի բավարարում չափանիշ 3-ի պահանջները:

Եզրակացություն: ԳՊԲՔ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 3-ի պահանջներին գնահատվում է **անբավարար:**

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Փաստեր

ԳՊԲՔ ուսանողների ընդունելությունն իրականացվում է ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատությունների ընդունելության կարգի, ոլորտը կարգավորող նորմատիվ իրավական ակտերի և «Գավառի պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ի միջին մասնագիտական կրթական ծրագրով ընդունելության ընթացակարգի համաձայն: Ընդունելությունն իրականցվում է «Կենսաբանություն» առարկայից բանավոր քննության արդյունքների հիման վրա:

Ուսանողների հավաքագրման նպատակով իրականացվում են մասնագիտական կողմնորոշմանն ուղղված միջոցառումներ. այցելություններ են իրականացվում դպրոցներ, որոնց ժամանակ ներկայացվում են ՄՈՒՀ-ում իրականացվող կրթական ծրագրերը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դիմորդների հավաքագրման գործընթացները բարելավելու համար կառավարման խորհրդի անդամները նույնպես մասնակցել են մասնագիտական կողմնորոշման և ուղղորդման այցերին, ներկայացրել են մասնագիտության գրավչությունը և աշխատաշուկայում իրացվելու հնարավորությունները: Քոլեջի համար դիմորդների հավաքագրման մեկ այլ մեխանիզմ է համարվում յուրաքանչյուր տարի բաց դռների օրվա կազմակերպումը, որի ընթացքում տրամադրվում են խորհրդատվություն և տեղեկատվական նյութեր՝ մասնագիտությունների, կրթական ծրագրերի, ընդունելության կարգի, քոլեջի առօրյայի և այլ հարցերի վերաբերյալ: Դիմորդների հավաքագրման աշխատանքներին և քոլեջի ճանաչելիության բարձրացմանը նպաստում են ֆեյսբուքյան և ինստագրամյան էջերը, ուր ակտիվ լուսաբանվում է քոլեջի գործունեությունը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողների հավաքագրման աշխատանքներում, կարիերայի պատասխանատուի համակարգմամբ, ներգրավված են նաև ՈՒԽ անդամները:

Քոլեջի կողմից ներկայացված ընդունելության գործընթացի վերլուծության ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ մասնագիտական կողմնորոշման աշխատանքներ են իրականացվել տարածաշրջանի 23 հանրակրթական ուսումնական հաստատություններում 752 շրջանավարտների հետ, նրանցից քոլեջ են դիմել 46–ը (շրջանավարտների 6%), նախորդ տարվա համեմատ այդ ցուցանիշը նվազել է 2 %-ով (8%):

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այնուամենայնիվ վերջին հինգ տարիներին դիմորդների թվի դինամիկ աճ է նկատվում հատկապես «Քույրական գործ» և «Դեղագործություն» մասնագիտությունների գծով, որը, ըստ քոլեջի ներկայացուցիչների, պայմանավորված է աշխատաշուկայում վերոհիշյալ մասնագետների պահանջարկի աճով: Փորձագիտական դիտարկումները ցույց են տալիս, որ «Մանկաբարձական գործ» մասնագիտության դիմորդների/ուսանողների թվաքանակը նվազման միտում ունի: Ըստ քոլեջի ինքնավերլուծության՝ քոլեջում հիմնական և միջնակարգ կրթության հիմքով սովորում է 169 ուսանող:

Վերջին 5 տարիների վերլուծությունների արդյունքները ցույց են տալիս, որ ուսանողների հեռացումների հիմնական պատճառներ են հանդիսացել անհարգելի բացակայությունները և պայմանագրային պարտավորությունները չկատարելը: Ցուցանիշների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հեռացումները ևս ըստ տարիների նվազում են (2021-2022 ուստարի՝ 7 ուսանող, 2022-2023 ուստարի՝ 5 ուսանող): Հեռացումների քանակը նվազեցնելու համար քոլեջում իրականացվում են խորհրդատվություններ, բացատրական աշխատանքներ, զրույցներ ծնողների և ուսանողների հետ:

Գավառի պետական բժշկական քոլեջն ուսանողների կրթական կարիքների գնահատումն իրականացնում է որակի ապահովման կենտրոնի, ուսանողական խորհրդի և կուրսղեկների միջոցով: Որպես ուսանողների կրթական կարիքների վերհանման մեխանիզմ են դիտարկվում հարցումները: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ քոլեջն իրականացնում է ռեսուրսների, դասախոսական, վարչական կազմի գործունեության գնահատմանն ուղղված հարցումներ: Այսուհանդերձ, առկա հարցաշարերը մեծապես բացահայտում են ռեսուրսների համալրման խնդիրները: Ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ տեսանելի չէ նաև կապը հարցաշարերով վերհանված կարիքների և բարելավման նախատեսված գործողությունների միջև: Փորձագիտական այցից պարզ դարձավ նաև, որ որակի ապահովման պատասխանատուի կողմից իրականացվում են ոչ ֆորմալ բանավոր հարցումներ, որոնց միջոցով բացահայտված խնդիրներն առնչվում են գրականության թվաքանակի պակասին, քիմիայի լաբորատոր փորձերի համար անհրաժեշտ նյութերի ապահովմանը:

Ուսանողների կարիքների վեր հանման գործընթացում կարևոր օղակ է նաև ՈւԽ-ն: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՈւԽ-ի միջոցով ուսանողները ներկայացրել են առաջավոր փորձի ծանոթացման և տարածաշրջանից դուրս գտնվող մասնագիտացված բժշկական կենտրոններ այցելելու առաջարկները: Կարիերայի կենտրոնը կազմակերպել է ուսանողների այցելությունը Իզմիրլյան ԲԿ և Ֆարմատեկ, Էսկուլապ, Էսկոֆարմ, Լիքվոր, Անթառամ դեղագործական ընկերություններ:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողների կրթական կարիքների վերհանման նպատակով քոլեջում ներդրված է նաև կուրսղեկների ինստիտուտը, որի գործունեությունն ուղղված է ուսանողների ուսումնառության գործընթացի աջակցմանը:

Քոլեջում ըստ քննական խորհրդատվությունների կազմակերպման և անցկացման ընթացակարգի՝ իրականացվում են նախաքննական խորհրդատվություններ, որոնց համար սահմանված է հստակ ժամանակացույց: Ըստ քոլեջի կողմից իրականացված հարցումների ուսանողները կարևորում են խորհրդատվական պարապմունքների իրականացումը, և նրանց 83,6% -ն ընդգրկված է այս պարապմունքներում:

Քոլեջում առկա է քննական խորհրդատվությունների անցկացման ձևաթուղթ, որտեղ նշվում է խորհրդատվության անցկացման նպատակը, խորհրդատվության ընթացքում քննարկվող հարցերի համառոտ նկարագիրը և ակնկալվող վերջարդյունքները: Ձևաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ դրանք ներառում են ուսանողների համար անհասկանալի հարցերի պարզաբանումը՝ առանց հստակեցնելու խորհրդատվության թեման, ինչպես օրինակ հարցաշարերում առկա հարցերի պարզաբանում, քննությունների կազմակերպման, անցկացման և գնահատման ընթացակարգերի պարզաբանում, դժվար հիշվող նյութերի վերհիշում: Կուրսղեկները նույնպես իրականացնում են խորհրդատվություններ կրթական և դաստիարակչական հարցերի վերաբերյալ, ինչպես նաև խորհրդատվական գործառույթ է իրականացնում կարիերայի կենտրոնը՝ կարիերայի ուղղորդման և հետագա աճի ապահովման հարցերով:

Ուսանողների համար նախատեսված առանձին լրացուցիչ պարապմունքներ օտար լեզուների կարողությունների զարգացման ուղղությամբ քոլեջում չեն իրականացվում, սակայն, ինչպես պարզ դարձավ փորձագիտական հանդիպումներից, ըստ անհրաժեշտության դասախոսները պատրաստակամ են աջակցելու ուսանողներին, պատասխանելու նրանց հարցերին:

Քոլեջում առկա է Ուսանողների դիմումների, բողոքների, առաջարկությունների ընդունման և քննարկման կարգ, որով սահմանվում են ուսանողների դիմումների, բողոքների և առաջարկությունների ներկայացման, գրանցման, քննության և հետադարձ կապի ապահովման մեխանիզմները: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողներն ազատ են դիմելու վարչական անձնակազմին իրենց հուզող հարցերով: Ուսանողները վարձավճարների, զեղչերի մասին տեղեկացվում են կուրսղեկների միջոցով: Քոլեջը հարցումների միջոցով գնահատել է նաև վարչական անձնակազմից ուսանողների բավարարվածությունը, ըստ որի ուսանողների 80%-ը տեղեկացված է իրեն վերաբերող վարչական ծառայությունների մասին, իսկ 76.6%-ը բավարարված է այդ ծառայություններից:

Ուսանողների և շրջանավարտների կարիերային նպաստելու նպատակով քոլեջում առկա է կարիերայի ստորաբաժանում: Կարիերայի ուղղորդման պատասխանատուն պարտադիր ընդգրկվում է նաև ընդունող հանձնաժողովի կազմում՝ ապահովելու կարիերայի ուղղորդման ծառայությունների մատուցում դիմորդներին:

Կարիերայի ստորաբաժանումը կազմակերպում է ուսանողների կարճաժամկետ պրակտիկաներ, ուսուցողական այցեր, մասնագիտական գիտելիքների խորացմանը

նպաստող սեմինարներ, այցելություններ բուհեր, այսպես օրինակ՝ ստորաբաժանման կողմից կազմակերպվել է այց ԵՊԲՀ ստոմատոլոգիական ֆակուլտետ, որը նպաստել է նաև ուսանողների կրթության շարունակականությանը (4 ուսանող ընդունվել է ԵՊԲՀ)։

Քոլեջը կնքել է շուրջ 15 համաձայնագրեր բժշկական կենտրոնների, դեղագործական հաստատությունների հետ թափուր աշխատատեղերի վերաբերյալ տեղեկատվության փոխանակման շուրջ։ Կարիերայի պատասխանատուն պարբերաբար թափուր աշխատատեղերի վերաբերյալ իրազեկում է շրջանավարտներին, այդ թվում նաև քոլեջում առկա թափուր հաստիքների վերաբերյալ (մասնավորապես այս ուստարում նույն մեխանիզմով քոլեջում աշխատանքի է անցել իրենց իսկ շրջանավարտը՝ որպես դասախոս)։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ տարածաշրջանի գործատուները ունեն մասնագետների համալրման կարիք և պատրաստակամ են այդ բացը լրացնել քոլեջի շրջանավարտների միջոցով։ Կարիերայի պատասխանատուն իրականացրել է իր գործունեության արդյունքների վերլուծություն, որտեղ ներկայացվել են վերջին տարիներին ուսանողների զբաղվածության տվյալները, որոնք աշխատանքի են անցել կարիերայի պատասխանատուի օժանդակությամբ։ 2017-2022 թթ. շրջանավարտների հետագծի վերաբերյալ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 165 շրջանավարտներից 18-ը շարունակում են ուսումը բուհերում՝ համապատասխան մասնագիտությամբ, 58-ը աշխատում են, որից 46-ը իրենց մասնագիտությամբ։

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը փորձում է պարբերաբար թարմացնել շրջանավարտների բազան, սակայն դժվարություններ են առաջանում արտերկրում գտնվող շրջանավարտների հետագծի վերաբերյալ տվյալները վերանայելիս։

Անդրադառնալով ուսանողների հետազոտական աշխատանքների իրականացմանը՝ հարկ է նշել, որ 2023 թվականից քոլեջում մշակվել և գործարկվել է հետազոտական և արտալսարանային աշխատանքների իրականացման ուղեցույց, որով սահմանվել են դրանց կատարման կանոնները, հստակեցվել են այդ աշխատանքների տեսակները, դրանց ձևավորման սկզբունքները և այլն։ Ուղեցույցի կիրառմամբ ուսանողների կողմից իրականացվել են բազմաբնույթ խմբային, անհատական և հետազոտական աշխատանքներ, ինչպես ծրագրային նյութին առնչվող, այնպես էլ ընդհանուր արժեհամակարգ ձևավորող թեմաների վերաբերյալ։ Կրթական ծրագրերի ուսումնասիրությունից և դասալսումներից պարզ դարձավ, որ օրինակ «Դեղագործություն» կրթական ծրագրի շրջանակներում ուսանողները պատրաստում են հերբարիումներ, ուսումնասիրում են տարածաշրջանի դեղաբույսերը։ «Քույրական գործ» կրթական ծրագրում ուսանողների վերլուծական մտածողության զարգացման նպատակով ուսանողներին տրվում են իրավիճակային խնդիրներ, որոնց վերլուծության ընթացքում ուսանողները բնորոշում են հիվանդությունը, առաջարկում խնամքի սկզբունքները և ցուցադրում ալգորիթմին համապատասխան քայլերը։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասախոսական կազմն աջակցում է ուսանողների կողմից հետազոտական, վերլուծական աշխատանքների իրականացմանը, սակայն դրանց իրականացումը կրթական ծրագրերում հստակ պլանավորված չէ, ինչպես

նաև առանձնացված չեն հետազոտական աշխատանքի գնահատման և խրախուսման չափանիշները։

Մասնագիտական հանդիպում-քննարկումներից պարզ դարձավ նաև, որ ուսանողներին հանձնարարվում են անհատական ինքնուրույն և խմբային աշխատանքներ ինչպես մասնագիտական մոդուլներից, այնպես էլ ոչ մասնագիտական առարկաներից, այսպես օրինակ «Քաղաքագիտություն և սոցիոլոգիայի հիմունքներ» առարկայի շրջանակներում «Քույրական գործ» բաժնի ուսանողները իրականացրել են խմբային աշխատանք «Բուլինգի դրսևորումները և կանխարգելումը դպրոցում» թեմայով, որտեղ իրականացրել են դատողություններ և ներկայացրել են համապատասխան եզրահանգումներ։

Քոլեջում գործում է Ուսանողական խորհուրդ, որի գործունեության կանոնակարգը վերամշակվել է 2023 թ.-ին, որտեղ ավելացվել է ՈւԽ փոխգործակցությունը քոլեջի կառավարման մարմինների, ստորաբաժանումների, ՈւԽ գործունեության կազմակերպման կարգը, ինչպես նաև ներառվել են ՈւԽ-ի անդամ ուսանողների իրավունքների և պարտականությունների մասին դրույթներ։ Կանոնակարգի լրամշակմանն աջակցել է քոլեջի իրավախորհրդատուն։

Ուսանողական խորհուրդն իր կողմից նախատեսվող միջոցառումներն ամրագրում է տարեկան աշխատանքային պլաններում՝ նշելով նախատեսված միջոցառումների կատարման ժամկետները և պատասխանատուներին։ ՈւԽ նիստերի արձանագրությունների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ՈւԽ-ն քննարկել և պլանավորել է տարբեր տոնական օրերին նվիրված միջոցառումներ, քննարկել է նոր անդամների համալրման, նախագահի, փոխնախագահի ընտրության հարցերը և ուսանողների մասնակցության հնարավորությունները կարիերային նվիրված էքսպո ցուցահանդեսներին։ Ուսանողական խորհրդի կողմից կազմակերպվել են բուժքույրերի և դեղագործների մասնագիտական տոներին նվիրված միջոցառումներ։ Խորհրդին իր գործունեության իրականացման համար առանձին բյուջե չի հատկացվում, սակայն քոլեջի ղեկավար կազմը պատրաստակամ է անհրաժեշտության դեպքում աջակցել ուսանողներին միջացառումների կազմակերպման համար։

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ նիստերի ընթացքում ուսանողների իրավունքների խախտման կամ պաշտպանությանն ուղղված հարցեր չեն քննարկվել։ Փորձագիտական այցից պարզ դարձավ նաև, որ Ուսանողական խորհրդի աշխատանքների իրազեկման մասին միջոցառումները խիստ սակավ են։ Խորհուրդն ուսանողական համակազմի կողմից դեռևս չի ընկալվում որպես իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմին, անհրաժեշտության դեպքում ուսանողներն առավելապես դիմում են կուրսղեկներին և վարչական անձնակազմին։

Քոլեջում գործող կրթական, խորհրդատվական և այլ օժանդակող ծառայությունների գնահատման և դրանց որակի ապահովման մեխանիզմների արդյունավետությունը գնահատվում է ուսանողական հարցումների միջոցով «Հարցումների անցկացման» կարգ-ի համաձայն։ Հարցումներն իրականացվում են տարին 2 անգամ՝ յուրաքանչյուր կիսամյակի

վերջում: Հարցումների վերլուծությունների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ուսանողների կողմից վերհանված խնդիրները հիմնականում վերաբերում են նյութատեխնիկական վիճակի բարելավմանը, նոր նյութերի ձեռքբերմանը: Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ նաև, որ Կարիերայի կենտրոնի կողմից միջոցառումների ավարտից հետո ուսանողներին ևս տրամադրվում են գնահատման թերթիկեր հետագայում դրանք լավարկելու համար:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջում կանոնակարգված են ուսանողների հավաքագրման և ընդունելության մեխանիզմները, ինչը նպաստում է ուսանողների կայուն հոսքի ապահովմանը: Հատկանշական է ուսանողների հավաքագրման գործընթացներում Կառավարման խորհրդի անդամներին և գործատուներին ներգրավելու հանգամանքը, ինչը բարձրացնում է քոլեջի գրավչությունը տարածաշրջանի դպրոցների աշակերտների շրջանում և նպաստում կրթական ծրագրերի կայուն իրագործմանը: Այս տեսանկյունից դիտարկելով նաև «Մանկաբարձական գործ» կրթական ծրագրի դեպքում դիմորդների թվաքանակի նվազման հանգամանքը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը կարիք ունի գնահատելու այս ուղղությամբ ընդունելության շարունակականության ռիսկերը և ուսանողների հավաքագրման ուղղությամբ եղած մարտահրավերները: Փորձագիտական խումբը դրական է համարում քոլեջի միտումները ուսանողների կրթական կարիքներին արձագանքելու համար, ինչն առավելապես նպաստել է ռեսուրսների բարելավմանը և կրթական գործընթացի իրականացման համար անհրաժեշտ նյութերի համալրմանը: Դրական հանգամանք է նաև դասախոսական կազմի, կուրսղեկների և վարչական կազմի հասանելիությունը ուսանողներին առնչվող խնդիրներին արագ արձագանքման և լուծումներ փնտրելու տեսանկյունից: Փորձագիտական խումբը կարևորում է նաև հարցումների նպատակաուղղումը ուսանողների կրթական կարիքների վերհանման ուղղությամբ, ինչը կնպաստի կրթական միջավայրի համաչափ զարգացմանը, կրթական ծրագրի առանձնահատկություններին համահունչ բարելավման գործողությունների պլանավորմանը:

Քոլեջի կողմից օտար լեզուների բարելավմանն ուղղված լրացուցիչ պարապմունքների կազմակերպումը կարևոր է ուսանողների լեզվաիմացության մակարդակը բարձրացնելու տեսանկյունից, ինչը մեծապես կնպաստի ուսանողների կողմից օտարալեզու գրականության ուսումնասիրմանը և միջազգայնացման հնարավորությունների ստեղծմանը: Փորձագիտական խումբը կարևորում է այն հանգամանքը, որ քոլեջը շարունակաբար հետևում է կրթական միջավայրի զարգացմանը և շեշտադրում, որ հարցումների արդյունքների ներդնումը կրթական միջավայրի լավարկմանն ուղղված գործողությունների համար կարող է հիմք հանդիսանալ և ապահովել որոշումների արդյունավետությունը:

Հատկանշական է նաև, որ քոլեջի Կարիերայի կենտրոնի ակտիվ գործունեությունը նպաստում է ուսանողների մասնագիտական կողմնորոշմանը, ինչպես նաև հիմքեր ստեղծում շրջանավարտների՝ աշխատաշուկայում իրացվելու համար: Տարածաշրջանի գործատու կազմակերպությունների հետ շարունակական աշխատանքը և

համագործակցությունը ևս նպաստում են քոլեջի շրջանավարտների մասնագիտական աշխատանք գտնելու ցուցանիշների դինամիկ աճին: Փորձագիտական խումբը կարևորում է նաև, որ քոլեջը շարունակաբար թարմացնի շրջանավարտների բազան (նաև ՀՀ-ից դուրս գտնվող շրջանավարտների մասով), ինչը հնարավորություն կընձեռի հետևել շրջանավարտների մասնագիտական հետագծին, իսկ նրանց հետ կապի պահպանումը և նրանց կարիքների վերհանումը կարող է հիմք հանդիսանալ մասնագիտական կրթական ծրագրերի մշտադիտարկումն առավել արդյունավետ դարձնելու համար:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում քոլեջի ջանքերը ուսանողների վերլուծական կարողությունների ձևավորման նպատակով և նշում, որ ուսումնական գործընթացում ուսանողներին հանձնարարվող աշխատանքները և առաջադրանքները միտված են հետազոտական մտածողության ձևավորմանը: Այս տեսանկյունից փորձագիտական խումբը կարևոր է համարում դրանց արտացոլումը կրթական ծրագրերում և գնահատման չափանիշների հստակեցումը, ինչը հնարավորություն կտա ավելի չափելի դարձնել ուսանողի ծանրաբեռնվածությունը, ինչպես նաև ապահովել վերջնարդյունքահենք գնահատումը:

Քոլեջում կարևոր կառույցներից է նաև Ուսանողական խորհուրդը, որի կազմակերպած միջոցառումները մեծացնում են ուսանողական միջավայրի գրավչությունը: Կարևոր է նաև ՈւԽ ներգրավվածությունը մասնագիտական կողմնորոշման աշխատանքներում՝ ընդլայնելով դիմորդների թվաքանակը: Այսուհանդերձ, քոլեջի Ուսանողական խորհուրդը դեռևս պետք է աշխատանքներ իրականացնի ուսանողների շրջանում կառույցի գործունեության մասին իրազեկվածության բարձրացման և ուսանողների շրջանում որպես իրավունքների պաշտպանության մարմին ընկալվելու համար:

Անդրադառնալով քոլեջում գործող կրթական, խորհրդատվական ծառայությունների գնահատմանը և դրանց որակի ապահովման մեխանիզմների արդյունավետությանը՝ հարկ է նշել, որ իրականացվող տարաբնույթ հարցումների արդյունքների վերլուծությունը, դրանց քննարկումը շահակիցների հետ էապես կնպաստի այս ծառայությունների որակի բարելավմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջում ներդրված են դիմորդների հավաքագրման և ընդունելության մեխանիզմներ, առկա են կրթական կարիքների վերհանման որոշ մեխանիզմներ, քոլեջում ուսանողներին տրամադրվում է խորհրդատվություն և աջակցություն դասախոսական և վարչական կազմի կողմից, գործում են կարիերայի ուղղորդմանը միտված ծառայություններ, ուսանողներին տրվում են ստեղծագործական-վերլուծական բնույթ ունեցող առաջադրանքներ, քոլեջն ունի ուսանողներին մատուցվող ծառայությունների գնահատման որոշ մեխանիզմներ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է չափանիշ 4-ի պահանջները:

Եզրակացություն: ԳՊԲՔ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 4-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Փաստեր

Քոլեջի ռազմավարական նպատակներից է կադրային ներուժի զարգացումը և դասախոսական կազմի համալրումը բարձր որակներ ունեցող մասնագետներով: 2021 թ. -ից քոլեջում գործում է «Մանկավարժական աշխատողի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կազմակերպման և անցկացման ընթացակարգ»-ը, որով կարգավորվում են ՊԴ-ի համալրման գործընթացները: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ թափուր հաստիքների համալրման համար հայտարարվում և իրականացվում են մրցույթներ, որոնց մինչ այժմ հիմնականում մեկ թեկնածու է մասնակցել: Մրցույթի ընթացքում տեղի է ունենում բանավոր հարցազրույց թեկնածուի հետ, որից հետո մրցութային հանձնաժողովի քվեարկությամբ հաղթող ճանաչված թեկնածուն համալրում է քոլեջի դասախոսական կազմը: Քոլեջը ուսանողների պրակտիկ կարողությունների զարգացման նպատակով վերջին տարիներին դասախոսական կազմի ընտրության հարցում որդեգրել է գործատու-դասախոսներով համալրելու քաղաքականություն, մասնավորապես ներկայումս քոլեջի 9-ը դասախոս գործատուներ են: Դասախոսական կազմն են համալրում նաև քոլեջի շրջանավարտները բժշկական բարձրագույն ուսումնական հաստատություններում իրենց կրթությունը շարունակելուց հետո: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ շրջանավարտ-դասախոսները ներկայումս 4-ն են:

Դասախոսական կազմի ընտրության պահանջները սահմանված են ՊԿՉ-ներում, որոնցով առաջնորդվում է քոլեջը: Քոլեջը 2018 թ. մշակել է նաև «Դասախոսի կանոնակարգ», որտեղ ներկայացված են դասախոսի պաշտոնային պարտականությունները, իրավունքները, պատասխանատվության շրջանակը, ներկայացվող պահանջները, որոնք են.

1. ուսումնական պարապմունքներ վարող դասախոսը պետք է ունենա դասընթացի բնույթին համապատասխանող միջին կամ բարձրագույն մասնագիտական որակավորում, կամ տվյալ մասնագիտական զբաղվածության բնագավառում աշխատանքային գործունեության փորձ, եթե տվյալ դասընթացի ուղղությամբ միջին կամ բարձրագույն կրթություն Հայաստանի Հանրապետությունում չի իրականացվում: Հատուկ մասնագիտական դասընթացներ վարող դասախոսների համար մասնագիտական աշխատանքի փորձի առկայությունը ցանկալի է,
2. ուսումնական պրակտիկան վարող արտադրական ուսուցման վարպետը պետք է ունենա տվյալ մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքային փորձ և մասնագիտական կրթություն:

3. արտադրական և նախաավարտական պրակտիկաները վարում է մասնագիտական դասընթացի դասախոսը։

ՊԿՉ-ների և կանոնակարգի համադրությունը ցույց տվեց, որ ներկայացված պահանջները հիմնականում նույնական են և չեն տարանջատվում՝ ըստ քոլեջում առկա կրթական ծրագրերի դասավանդման առանձնահատկությունների։

Քոլեջում դասավանդում են 30 դասախոս, որոնցից 26-ը ունեն բարձրագույն կրթություն, 4-ը՝ միջին մասնագիտական։ Դասախոսական կազմի ընտրության ու համալրման գործընթացի ուսումնասիրությունը ցուց տվեց, որ դասախոսների մասնագիտական որակավորումները ոչ միշտ են համապատասխանում դասավանդվող առարկաներին և մոդուլներին (օրինակ՝ հայոց լեզվի և հայ գրականության ուսուցիչը դասավանդում է ընդհանուր հոգեբանության հիմունքներ, հոգեբանություն, ծառայողական վարվելակերպ, մասնագիտական իմիջ, մանկաբարձը՝ վարակիչ, մաշկային և սեռավարակ հիվանդություններ, տնտեսագետը՝ համակարգչային օպերատորություն մոդուլները)։ Ուսումնասիրություններից պարզ դարձավ նաև, որ դասախոսների մեծ մասը դասավանդում է մեկից ավելի մոդուլներ (մինչև 10), մասնավորապես բուժական գծով բժիշկ մասնագիտությամբ դասախոսը դասավանդում է հետևյալ մոդուլները՝ «Նյարդային հիվանդություններ», «Աչքի հիվանդություններ», «Քիթ, կոկորդ, ականջի հիվանդություններ», «Քույրական գործը հոգեկան հիվանդությունների ժամանակ», «Աղետների բժշկություն»։

2018 թ-.ին քոլեջում հաստատվել է «Ղեկավար և մանկավարժական աշխատողների գնահատման, նրանց խրախուսման (այդ թվում ֆինանսական շահադրման) կամ պատասխանատվության ենթարկելու» կանոնակարգ՝ համաձայն որի քոլեջում երկու տարին մեկ անգամ կառավարման խորհուրդն պետք է իրականացնի ղեկավար և մանկավարժական աշխատողների գործունեության գնահատում, որի արդյունքների հիման վրա խորհուրդը որոշում կկայացնի յուրաքանչյուր գնահատվողի նկատմամբ խրախուսանք կիրառելու, նրան պատասխանատվության ենթարկելու կամ նրա նկատմամբ որևէ միջոց չկիրառելու վերաբերյալ։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, սակայն, որ ըստ կարգի դասախոսական կազմի գնահատում քոլեջում դեռևս չի իրականացվել։

Դասախոսական կազմի գնահատման մեխանիզմ է դասալսումների իրականացումը։ Քոլեջն ունի «Դասալսումների անցկացման և արդյունքների վերլուծության ընթացակարգ», դասալսումների և փոխադարձ դասալսումների ժամանակացույց և դասալսումների անցկացման ձևաթերթ։ Դասալսման ձևաթերթով (ներդրվել է 2021-2022 ուստարուց) նախատեսվում է գնահատել դասախոսի կողմից ռեսուրսների կիրառությունը, դասաժամի օգտագործման արդյունավետությունը և մանկավարժական վարպետության վերլուծությունը, բարեվարքության և ակադեմիական ազնվության պահպանումը, խտրական վերաբերմունքի դրսևորումները, դասավանդման և գնահատման մեթոդների արդյունավետության համապատասխանությունը վերջնարդյունքներին, ուսումնական նյութերի արդիականությունը և համապատասխանությունը ուսանողների գիտելիքներին և ունակություններին, բացահայտված կարիքները, վերհանված թերությունները և դիտողությունները, պարապմունքի դրական կողմերը և գնահատումը, որի համար

հատկացվում են միավորներ՝ ըստ բաժինների։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջում իրականացվում են փոխադարձ դասալսումներ ներքին լավ փորձը տարածելու նպատակով, սակայն դասալսումների արձանագրությունների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դասալսումների արդյունքները ոչ միշտ են գնահատվում վերոնշյալ ձևաթերթի չափանիշներով։ Դասալսումների արդյունքները քննարկվում են դասախոսների հետ, անհրաժեշտության դեպքում կրկնակի դասալսման միջոցով փորձում են հետևել բացահայտված թերությունների շտկմանը։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ներքոլեջային փորձի փոխանակման միջոցառումները հստակ պլանավորված և կանոնակարգված չեն, այլ տեղի են ունենում անհրաժեշտության դեպքում։

Դասախոսական կազմի աշխատանքը գնահատվել է նաև ուսանողների կողմից հարցումների միջոցով, որոնց ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ուսանողները հիմնականում բավարարված են դասախոսների աշխատանքից, սակայն նշում են, որ ռեսուրսների բարելավումը ավելի արդյունավետ կդարձներ ուսումնական գործընթացը։

Ուսումնասիրելով փոխտնօրենի, մեթոդիստի, ՈԱ պատասխանատուի և հանրակրթական բաժնի վարիչի աշխատանքային պլանները՝ տեսանելի է դառնում, որ նշված մարմինների կողմից նախատեսված է դասալսումների անցկացումը (յուրաքանչյուրի դեպքում տարբեր ձևաչափերի ու չափանիշների կիրառմամբ), սակայն փաստաթղթերի ուսումնասիրությունից և փորձագիտական այցից պարզվեց, որ բացակայում են նշված բոլոր դասալսումների արդյունքներն իրար փոխկապակցող մեխանիզմները և դրանց արդյունքում բացահայտված կարիքների վերլուծությունները։

Քոլեջի նախահաշվի և բյուջեի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ քոլեջը ֆինանսական միջոցներ չի հատկացրել դասախոսական կազմի մասնագիտական վերապատրաստումների համար։ Քոլեջի դասախոսները պարբերաբար մասնակցում են ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից իրականացված մեթոդական վերապատրաստումներին։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի դասախոսները հիմնականում սեփական նախաձեռնությամբ մասնակցել են դեղագործական, առողջապահական կազմակերպությունների կողմից իրականացվող մասնագիտական վերապատրաստումների, սեմինարների, գիտաժողովների՝ ստանալով համապատասխան հավաստագրեր։ Վերջին տարիներին նման վերապատրաստումների մասնակցել են քոլեջի 26 դասախոսներ։

Գործատու-դասախոսները ևս պարբերաբար մասնակցում են մասնագիտական տարաբնույթ վերապատրաստումների իրենց աշխատավայրերում, այնուհետև այդ փորձառությունը կիսում են քոլեջի մյուս դասավանդողների հետ։ Փորձագիտական այցից պարզ դարձավ նաև, որ քոլեջի մեթոդիստն աշխատում է երիտասարդ դասախոսների հետ՝ նրանց աջակցելով մեթոդական և մանկավարժական առումով։

Անդրադառնալով դասախոսական կազմի կայունությանը՝ հարկ է նշել, որ դասախոսական կազմը երիտասարդացման միտում ունի։ Ներկայումս քոլեջում դասավանդողների միջին տարիքը 42 տարեկանն է։ Դասախոսական կազմի կայունության ապահովման նպատակով քոլեջը որդեգրել է դասախոսական կազմը նաև շրջանավարտներով համալրելու ավանդույթը։ Փորձագիտական ուսումնասիրությունները

ցույց տվեցին, որ կայունության ապահովման նպատակով ժամավճարային կարգով աշխատող որոշ դասախոսներ դարձել են քոլեջի հիմնական աշխատակիցներ, իսկ որոշ նախկին աշխատակիցներ և գործատուներ ներառվել են քոլեջի դասախոսական կազմի ռեզերվում: Փորձագիտական այցից պարզ դարձավ նաև, որ անհրաժեշտության դեպքում քոլեջում դեռևս չդասավանդող գործատուները ևս պատրաստակամ են դասավանդելու և իրենց փորձը ներդնելու քոլեջում:

Տարածաշրջանում մասնագետների սղությամբ պայմանավորված՝ քոլեջի հաստիքային վարչական աշխատակիցները իրենց վարչական գործառույթների իրականացմանը զուգընթաց ներգրավված են նաև դասավանդման գործընթացներում, ինչպես օրինակ գրադարանավարը դասավանդում է 9 առարկաներ և մոդուլներ (քիմիա, կենսաբանություն, լանդշաֆտագիտության և էկոլոգիայի հիմունքներ, ընդհանուր հիգիենա և էկոլոգիա, հիգիենայի հիմունքներ, անօրգանական քիմիայի հիմունքներ, օրգանական քիմիայի հիմունքներ, անալիտիկ քիմիա, բուսաբանության հիմունքներ): ՄԿԾ-ներում հատուկ մասնագիտական մոդուլների դասավանդումն իրականացվում է երկու մասնագետի կողմից, օրինակ՝ «Ատամնատեխնիկական գործ» ՄԿԾ-ում, արդյունքում դասախոսը դասավանդում մինչև 10 մոդուլներ:

Ֆինանսական միջոցների սղությունը թույլ չի տալիս քոլեջի դասախոսներին ապահովել մրցակցային աշխատավարձով, ֆինանսական խրախուսման մեխանիզմներ կիրառել:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը փորձում է ապահովել դասախոսական կազմի մասնագիտական առաջընթացը. առկա են դեպքեր երբ դասախոսը սկսել է լաբորանտի աշխատանքից, այնուհետև սկսել է դասավանդել քոլեջում, կամ դասավանդելու փորձառությունը դիտարկելով դարձել է ամբիոնի վարիչ: Ներկայումս քոլեջն ունի երկու լաբորանտ: Ուսումնաօժանդակ և վարչական կազմերի ներկայացուցիչների գործառույթները սահմանվում են պայմանագրերով և պաշտոնների նկարագրերով: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ներկայումս քոլեջում չհամալրված պաշտոններ չկան, գործառույթներն իրականացվում են ըստ սահմանված ուղղությունների:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջը շարունակաբար փորձում է համալրել իր դասախոսական կազմը որակյալ և մասնագիտական բարձր որակներ ունեցող դասախոսներով, ինչը մեծապես նպաստում է սահմանված վերջնարդյունքների ձեռքբերմանը: Դասախոսական կազմը գործատու ներկայացուցիչներով համալրելու հանգամանքը ևս գնահատելի է ուսանողների պրակտիկ հմտությունների զարգացման համար: Փորձագիտական խումբը գտնում է, որ սահմանված պահանջների տարանջատումը ըստ կրթական ծրագրերի առանձնահատկությունների կարող է նպաստել դասախոսական կազմի համալրման արդյունավետության բարձրացմանը, նեղ մասնագիտական ուղղություններով մոդուլների դասավանդման որակի բարելավմանը: Փորձագիտական խումբը շեշտադրում է նաև մեկ դասախոսի կողմից դասավանդվող

առարկաների/մոդուլների քանակի նվազման անհրաժեշտությունը, ինչը էականորեն կբարելավի դասավանդման գործընթացները:

Փորձագիտական խումբը, դիտարկելով դասախոսական կազմի գնահատման մեխանիզմները, հարկ է համարում ընդգծել, որ դրանց բազմազանեցումը, քոլեջի կողմից նոր մեխանիզմների ներդրումը, դասալսումներից զատ նոր գործիքներ փնտրելը որոշակիորեն նպաստել են դասախոսական կազմի կարիքների գնահատմանը: Դասալսումները կարևոր գործիք են քոլեջում դասավանդման և ուսուցման գործընթացները վերահսկելու և գնահատելու համար: Այնուամենայնիվ, փորձագիտական խումբը գտնում է, որ տարբեր օղակների կողմից իրականացվող դասալսումների նպատակների, չափանիշների, ձևաչափերի հստակեցումը կարևոր է դրանցից ակնկալվող արդյունքների սահմանման համար: Հարկ է նշել նաև, որ դասալսումների արդյունքների մեկտեղումը, դրանց համապարփակ վերլուծությունը, ըստ տարիների դինամիկայի խնդիրների տարանջատումը քոլեջին հնարավորություն կտան ստանալ օբյեկտիվ ու ամբողջական պատկեր դասախոսական կազմի մասնագիտական որակների, նրանց պահանջների ու կարիքների վերաբերյալ: Կարևոր է նաև դրանց հիմքով վերապատրաստումների, փորձի փոխանակման միջոցառումների պլանավորումը գործընթացի շարունակականությունը երաշխավորելու համար: Փորձագիտական խումբը գտնում է, որ վերոնշյալ խնդիրներին լուծում տալը մեծապես կնպաստի կրթական ծրագրերի կառավարման արդյունավետության բարձրացմանը:

Փորձագիտական խմբի կողմից դրական է գնահատվում նաև երիտասարդ կադրերով և շրջանավարտներով քոլեջի դասախոսական կազմը համարելու քաղաքականությունը, ինչը նպաստում է դասախոսական կազմի անխոչընդոտ սերնդափոխությանը և երաշխավորում կրթական ծրագրերի իրականացման կայունությունը: Այս տեսանկյունից գնահատելի են նաև երիտասարդ դասավանդողների հետ տարվող աշխատանքները նրանց մեթոդապես պատրաստելու և աջակցելու մանկավարժական գործունեություն ծավալել: Փորձագիտական խումբը գտնում է, որ այս գործընթացները կարիք ունեն ավելի համակարգված կառավարվելու, դրանց պլանավորումը և պատասխանատվությունների բաշխումը կնպաստեն երիտասարդ դասավանդողների առավել դյուրին ինտեգրմանը և կնպաստեն կրթական ծրագրերի նպատակների իրագործմանը: Կարևոր հանգամանք է դասախոսական կազմի ռեզերվի առկայությունը, գործընկերային կապերի օգտագործումը դասախոսական կազմի համալրման նպատակով, ինչը նպաստում է դասախոսական կազմի կայունությանը:

Փորձագիտական խումբը շեշտադրում է մասնագիտական վերապատրաստումների կարևորությունը: Հատկանշական է քոլեջի գործատու-դասավանդողների՝ մասնագիտական վերապատրաստումներից հետո իրենց փորձառությամբ կիսվելու գործընթացը, որը քոլեջի ֆինանսական սուղ միջոցների պայմաններում կարևոր է մյուս դասավանդողների մասնագիտական աճն ապահովելու համար: Այսուհանդերձ, ֆինանսավորման այլ աղբյուրների որոնումը, գործընկերային կապերի կիրառումը կարող են քոլեջին հնարավորություն ընձեռել մասնագիտական վերապատրաստումների գործընթացը դարձնել առավել հասանելի քոլեջի բոլոր դասախոսների համար՝ կազմակերպելով մասնագիտական

քննարկումներ, հրավիրված գործատու ներկայացուցիչների կողմից կազմակերպված դասախոսություններ և այլն:

Փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը կարիք ունի գնահատելու նաև յուրաքանչյուր կրթական ծրագրում նեղ մասնագիտական ուղղությամբ դասավանդողի կողմից դասավանդվող մոդուլների քանակը, ինչը թույլ կտա գնահատել դրա հնարավոր վտանգները և կնպաստի դասախոսների ծանրաբեռնվածության օպտիմալ բաշխմանը և նեղ մասնագիտական մոդուլների առավել արդյունավետ դասավանդմանը: Փորձագիտական խումբը կարևորում է նաև դասախոսական կազմի խրախուսման միջոցառումների իրականացումը, ինչը ևս կարող է հանգեցնել դասավանդման գործընթացի արդյունավետության բարձրացմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջն ապահովված է անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ կազմով, ինչը թույլ է տալիս ապահովել ռազմավարական առաջնահերթություններով պայմանավորված գործընթացների իրականացումը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջն ունի դասախոսական կազմի ընտրության քաղաքականություն, կազմը շարունակաբար համալրվում է պրակտիկ ոլորտի գործատու մասնագետներով, իրականացնում է դասախոսական կազմի աշխատանքների պարբերաբար գնահատում, իրականացվում են լավ փորձի տարածման ներքին միջոցառումներ, ներդրվում են դասախոսական կազմի կայունությանը նպաստող մեխանիզմներ, քոլեջը վարում է դասախոսական կազմի երիտասարդացման քաղաքականություն, ունի բավարար վարչական և ՈւՕ կազմ ուսումնական գործընթացին աջակցելու համար՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է չափանիշ 5-ի պահանջները:

Եզրակացություն: ԳՊԲՔ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 5-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Փաստեր

2023-2028 ՌԾ-ի համաձայն՝ քոլեջը նախատեսել է ստեղծել հստակ մեխանիզմներ հետազոտական աշխատանքներում սովորողների ներգրավումը ապահովելու նպատակով: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը նպաստում է ուսանողների հետազոտությունների միջոցով բժշկության ոլորտի ուսումնասիրությանը և քայլեր իրականացնում ապահովելու արդյունքների օգտագործումն ուսումնական գործընթացում: Մասնավորապես հնարավորություններ է ընձեռում ուսանողներին այցելելու ՀՀ այլ բժշկական քոլեջներ, բուժհաստատություններ, դեղագործական կազմակերպություններ և տեղում ուսումնասիրել մասնագիտական փորձը, առաջադրում է կիրառական

հետազոտական թեմաներ, որոնք միտված են արդի իրավիճակի վերլուծությանը: Բժշկական միջին մասնագիտական կրթության ոլորտում հետազոտական գործունեությունը սահմանելիս քոլեջը շեշտադրում է այն հանգամանքը, որ ուսումնական գործընթացը հնարավոր չէ իրականացնել առանց հետազոտական բաղադրիչի: Հետազոտական գործընթացները կանոնակարգելու նպատակով 2023 թ.-ից քոլեջում մշակվել և գործարկվում է հետազոտական աշխատանքների իրականացման ուղեցույց, որտեղ պարզաբանում են ուսանողների համար հետազոտական և արտալսարանային աշխատանքների տեսակները, անհատական և խմբային հետազոտական աշխատանքների կատարման չափանիշները, պահանջները, ներկայացված է հետազոտական աշխատանքներ կատարելու օրինակելի պլանը: Փորձագիտական այցը ցույց տվեց, որ ուսանողներն իրենց կատարած աշխատանքներում առաջնորդվում են ուղեցույցի պահանջներով, մասնավորապես կատարված հետազոտական աշխատանքներում պահպանված է ուղեցույցով սահմանված ձևաչափը, նշված են օգտագործված գրականության հղումները, կցված են տվյալների հավաքագրման աղբյուրները /հարցումները/: Դասալսումները և կրթական ծրագրերի դիտարկումը ցույց տվեցին, որ քոլեջում հետազոտական աշխատանքները կատարվում են դասախոսների նախաձեռնությամբ և ուղղորդմամբ, որոնք ուսուցանվող կրթական ծրագրերի շրջանակներում ուսանողներին հանձնարարում են հետազոտական բաղադրիչ պարունակող առաջադրանքներ և աշխատանքներ:

Դասալսումներից և մասնագիտական քննարկում-զրույցներից պարզ դարձավ, որ ուսանողները հետազոտական բնույթի առաջադրանքներ են իրականացնում ինչպես մասնագիտական, այնպես էլ ոչ մասնագիտական մոդուլներից հայերենով, ռուսերենով, անգլերենով: Մասնավորապես, «Դեղագործություն» կրթական ծրագրի ուսանողները իրականացրել են խմբային հետազոտական աշխատանք «Հայաստանի դեղարտադրությունը և սպառողի վերաբերմունքը տեղական արտադրության դեղերին» թեմայով՝ իրականացնելով լայնածավալ հարցումներ, պատրաստել են հերբարիումներ, ուսումնասիրել են տարածաշրջանի դեղաբույսերը, գործնական պարապմունքների ընթացքում պատրաստել, փաթեթավորել և պիտակավորել են փոշի և հեղուկ դեղաձևեր:

«Քույրական գործ» կրթական ծրագրի ուսանողները մասնագիտական մոդուլների շրջանակներում իրականացրել են «Աուտիզմ և քույրական խնամքը աուտիզմի ժամանակ», «Կարմրուկ և քույրական խնամքը կարմրուկի ժամանակ», «Ռացիոնալ սնունդ» և այլ թեմաներով աշխատանքներ, իսկ ոչ մասնագիտական մոդուլներից՝ «Բուլինգի դրսևորումները և կանխարգելումը դպրոցում» թեմայով աշխատանքներ: Խմբային աշխատանքի օրինակ է «Բանկոմատների բացակայությունը համայքներում» թեմայով հետազոտական աշխատանքը, որի ընթացքում ուսանողները իրականացրել են հարցումներ տարածաշրջանի գյուղերում, ներկայացրել հիմնավորումներ և եզրահանգումներ՝ շեշտադրելով տարածաշրջանի սոցիալ-տնտեսական կարիքները և մարդկանց մտածելակերպի առանձնահատկությունները:

Հետազոտական աշխատանքների ուսումնասիրությունը փորձագիտական խմբի կողմից ցույց տվեց, որ դրանցում առկա է վերլուծական բաղադրիչ, տվյալների հավաքագրում,

ուսումնասիրություն, վերլուծություններ և եզրահանգումներ, այսուհանդերձ եզրակացությունները ոչ միշտ են արտացոլում հետազոտության նպատակը և հիմնվում հավաքագրված տվյալների վերլուծության վրա։

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտության ուսանողները հետազոտական բնույթի աշխատանքներ իրականացնում են գործնական պարապմունքների և պրակտիկայի ընթացքում՝ պատրաստելով պրոթեզների մոդելներ։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջում առկա են ուսանողների կողմից պատրաստված բազմաթիվ ստենդներ և պլակատներ, որոնք նույնպես ուսանողների հետազոտությունների իրականացման օրինակներ են։

Քոլեջում դեռևս հետազոտական աշխատանքների գնահատման, խրախուսման, հրապարակայնության ապահովման մեխանիզմները հստակեցված և համակարգված չեն, այսուհանդերձ փորձագիտական այցից պարզ դարձավ, որ հետազոտական աշխատանք իրականացրած ուսանողները բանավոր խրախուսվել կամ գնահատվել են կատարած աշխատանքների համար։

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողների կատարած բոլոր աշխատանքները համակարգվում են դասախոսների կողմից, ինչպես նաև դասախոսներն աջակցում են ուսանողներին հետազոտական մեթոդների ընտրության, թեմաների հստակեցման, նպատակների սահմանման նպատակով։ Այսուհանդերձ, հարկ է նշել, որ քոլեջը դեռևս չունի դասախոսների հետազոտական գործունեությունը խրախուսող մեխանիզմներ և ընթացակարգեր։ 2018թ. գործող «Դասախոսի կանոնակարգ»-ով ևս սահմանված չեն դասախոսների հետազոտություն իրականացնելու պահանջներ։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասախոսական կազմի՝ հետազոտությամբ զբաղվելու խթանման ընթացակարգեր չեն գործում։ Դասախոսների հետազոտական գործունեությունը սահմանափակվում է ուսանողների կատարած աշխատանքների ուղղորդմամբ և վերահսկմամբ, դասերի ժամանակ հետազոտական բաղադրիչ պարունակող, ուսանողների մտածողությունը և վերլուծելու կարողությունը զարգացնող առաջադրանքների, ինտերակտիվ մեթոդների կիրառմամբ։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասախոսները մշակում են ուսումնառության նյութերը, պատրաստում ուղեցույցներ քոլեջի ներքին կիրառման համար, որոնք սակայն չեն տպագրվում որպես ձեռնարկներ և մեթոդական ուղեցույցներ։ Քոլեջում չկան գիտական աստիճան ունեցող դասավանդողներ։ Փորձագիտական հանդիպումները ցույց տվեցին նաև, որ քոլեջում միջազգային փորձի ուսումնասիրման և կրթական ծրագրերում դրա տեղայնացման գործուն մեխանիզմները դեռևս առկա չեն։

Անդրադառնալով հետազոտական գործունեության և ուսումնառության փոխկապակցման մեխանիզմներին՝ կարելի է նշել, որ ուսանողների կողմից իրականացված վերլուծական աշխատանքները բացի դասընթացի շրջանակներում ներկայացվելուց քննարկվում են նաև քոլեջի կողմից նախաձեռնված սեմինարների, ուսանողական միջոցառումների շրջանակներում։ Կարելի է առանձնացնել շաքարային դիաբետին, հակաբիոտիկների կիրառմանը, մարդու հենաշարժիչ համակարգի պատկերմանը նվիրված

առաջադրանքների իրականացումն ուսանողների կողմից և դրանց վերաբերյալ քննարկումների իրականացումը։

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջն իր ռազմավարության համաձայն փորձել է կանոնակարգել հետազոտական աշխատանքների իրականացման մեխանիզմները՝ նպաստելու ուսանողների առավել լայն շրջանակի ներգրավմանը հետազոտական բնույթի աշխատանքներում։ Հետազոտական գործընթացների համակարգմանն են նպաստել նաև քոլեջի կողմից միջին մասնագիտական կրթության ոլորտում հետազոտության իրականացման սահմանումը, հետազոտական բաղադրիչի պարտադիր ներգրավումը ուսանողներին տրվող առաջադրանքներում, ինչի հետևանքով ուսանողների մոտ զարգանում են վերլուծական կարողությունները, արդյունքում նրանք կարողանում են իրականացնել ուսումնասիրություններ և անել եզրահանգումներ։ Այս տեսանկյունից կարևոր հանգամանք է նաև հետազոտական գործունեությունը համապատասխան ուղեցույցով կանոնակարգելու հանգամանքը, որը դիտարկելիս փորձագիտական խումբը գտնում է, որ իրականացված վերլուծությունների և կատարված եզրահանգումների առավել խորքային համապատասխանեցումը կարող են մեծապես բարելավել քոլեջում առկա հետազոտությունների որակը։ Փորձագիտական խմբի գնահատմամբ հետազոտական գործունեության խթանմանն են նպաստում նաև բժշկական ոլորտի հաստատություններ այցելությունները, դրանցից հետո ուսանողներին տրվող պարտադիր և արտալսարանային առաջադրանքները, որոնք նպաստում են ուսանողների վերլուծական մտքի զարգացմանը։

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով քոլեջում իրականացվող կրթական ծրագրերի շրջանակներում ուսանողներին տրամադրվող հետազոտական աշխատանքները, դրականորեն նշում է, որ դրանք իրականացվում են բոլոր կրթական ծրագրերի շրջանակներում, ինչը նպաստում է բոլոր ուսանողների մոտ այս հմտությունների ձևավորմանը։ Այս հանգամանքը կարևոր է կրթական ծրագրերի համաչափ զարգացման համար։ Փորձագիտական խումբը շեշտադրում է, որ քոլեջի կողմից հետազոտական աշխատանքների խրախուսման և դրանց գնահատման չափանիշների հստակեցումը կնպաստի հետազոտական գործունեության առավել պլանավորված իրականացմանը և ռազմավարական ծրագրով նախատեսված խնդիրների հաղթահարմանը։

Փորձագիտական խումբը դրական է գնահատում դասախոսների դերն ու ներգրավվածությունը ուսանողներին տրվող առաջադրանքների համակարգման, նրանց կարողությունների զարգացման նպատակով, և նշում, որ դասախոսական կազմի հետազոտական գործունեության խրախուսումը կարևոր է նրանց մասնագիտական որակների շարունակական բարելավումը խթանելու համար։ Դիտարկելով քոլեջի դերը տարածաշրջանում և քոլեջի դասախոսների ներուժը ուսումնառության նյութեր, տարբեր իրավիճակային խնդիրներ, մասնագիտական խաղեր մշակելու տեսանկյունից՝ կարևոր է նրանց ներուժի ամբողջական կիրառումը մասնագիտական ուսումնասիրությունների իրականացման համար։ Հաշվի առնելով դասախոսական կազմի դասավանդման

փորձառությունը՝ քոլեջը կարող է խթանել նաև դասախոսների կողմից մեթոդական, իրենց մանկավարժական փորձի արդյունքների ուսումնասիրությունը դասավանդման գործընթացների լավագույն փորձի տարածման, դասավանդման մեթոդների կիրառման, նոր խնդիրների սահմանման նպատակով: Փորձագիտական խումբը գտնում է, որ այս տեսանկյունից կարևոր գործառույթ ունեն նաև քոլեջի ամբիոնները հետազոտական գործունեության կառավարման գործընթացների համակարգման համար: Ըստ մասնագիտական ուղղությունների հետազոտական թեմաների սահմանումը էապես կնպաստի դրանց պլանավորման հստակեցմանը, նաև ամբիոնային ուղղությունների հստակեցումը կարող է նպաստել ուսումնառության և հետազոտական գործունեության փոխկապակցվածությանը՝ ներգրավելով ուսանողների ավելի լայն շրջանակի: Դասախոսական կազմի՝ հետազոտությամբ զբաղվելու, դրանց արդյունքների տպագրման խրախուսումը կարևոր կարող են լինել նաև քոլեջի փորձառությունը այլ համանման քոլեջին ներկայացնելու, լավ փորձը տարածելու համար:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջը կանոնակարգել է հետազոտական աշխատանքների իրականացման ընթացակարգերը, բժշկական կրթության առանձնահատկություններին համահունչ սահմանել է հետազոտության իրականացումը ուսանողների շրջանում, ուսանողները ներգրավված են հետազոտական բնույթի աշխատանքներում, դասախոսներն աջակցում են ուսանողների վերլուծական անհատական և խմբային աշխատանքների իրականացմանը, ուսանողներին տրվող առաջադրանքները նպաստում են ուսանողների վերլուծական և հետազոտական կարողությունների ձևավորմանը, առկա են ուսումնական գործընթացի և հետազոտական գործունեության փոխկապակցման մեխանիզմներ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է չափանիշ 6-ի պահանջները:

Եզրակացություն: ԳՊԲՔ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 6-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

Փաստեր

Քոլեջն իր ռազմավարական ծրագրում որպես հիմնախնդիր առանձնացրել է նյութատեխնիկական բազայի շարունակական համալրումը ժամանակակից ռեսուրսներով: Սահմանված հիմնախնդրի նպատակն է նպաստել կրթության որակի ապահովմանը, որակյալ, արհեստավարժ մասնագետների պատրաստմանը, ուսումնական լսարանների, լաբորատորիաների առկա նյութատեխնիկական ռեսուրսների շարունակական համալրման միջոցով: Փորձագիտական այցի արդյունքների և քոլեջի ներկայացրած ինքնավերլուծության տվյալների համադրումից պարզ դարձավ, որ քոլեջը գործում է մանկական պոլիկլինիկայի տարածքում անհատույց տնօրինման հնարավորությամբ: Քոլեջի ուսումնական մասնաշենքում տեղակայված են 5 լաբորատորիաները, լսարանները, գրադարանը, բուժկետը, մարզադահլիճը և վարչական աշխատակիցների համար նախատեսված աշխատասենյակները:

Նյութատեխնիկական բազայի դիտարկումները ցույց տվեցին, որ քոլեջն ունի համապատասխան նվազագույն ռեսուրսներ ուսումնական գործընթացի կազմակերպման և մասնագիտական առարկաների ուսումնառության համար: Վերջին տարիներին խնայողությունները ևս ուղղել են միջավայրի բարելավմանը, ինչի արդյունքում վերանորգվել են մի շարք լսարաններ, ձեռք է բերվել որոշակի գույք, ուսումնական գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ նյութեր: Այսպիսով, դիտարկելով քոլեջում առկա նյութատեխնիկական բազան և համադրելով այն կրթական ծրագրերի վերջնարդյունքների ձեռքբերման համար անհրաժեշտ ռեսուրսների հետ՝ կարելի է նշել.

- Հագեցած են դեղագործական մոդուլների լաբորատորիաները, առկա են հերբարիումներ, հումքեր, պլակատներ, դեղերի տեխնոլոգիա առարկայի լաբորատոր աշխատանքների կազմակերպման համար նյութեր: Մանրադիտակները սակավ են:
- Մանրէաբանության լաբորատորիա առանձնացված չէ, ինչպես նաև ավտոկլավը չի կիրառվում ուսանողների կողմից:
- Քիմիայի լաբարատորիան թերի է հագեցված. կրթական ծրագրերում առկա մոդուլների /անօրգանական, օրգանական, անալիտիկ, դեղագործական քիմիա/ առաջադրանքների իրականացման համար օգտվում են նույն լաբորատորիայից, որում բավական սուղ են միջոցները, փորձ անելու հնարավորությունները սակավ են:
- Անատոմիայի կաբինետում առկա են բոլոր օրգան համակարգերի ուսումնառության համար նախատեսված մուլյաժներ, պաստառներ, դիտողական պարագաներ, կմախքի ոսկրեր, որոնք հասանելի են ուսանողներին ինչպես դասապրոցեսի ընթացքում, այնպես էլ դասապրոցեսից դուրս:
- Քույրական գործի հիմունքների լսարանում առկա են մինիմալ քանակի և տեսակի մուլյաժներ, տիկնիկ, ձեռքի մուլյաժ, կենսաբանական չափին և ձևին համապատասխան մարդու մուլյաժներ, որոնց վրա ուսանողները ձեռք են բերում

նախնական կարողություններ, որոնք հետո կատարելագործում են Գավառ Բժշկական կենտրոնի բոլոր բաժանմունքներում:

- Ուսանողներին հասանելի են գործընկեր կազմակերպությունների բոլոր ռեսուրսները, ուսանողները հնարավորություն են ունենում կիրառել դրանք հաստատության բուժառուների հետ աշխատելու ընթացքում:
- Ատամնատեխնիկական գործ մասնագիտության համար նախատեսված է ատամնատեխնիկական լսարան և լաբորատորիա, որտեղ առկա են բոլոր ուսանողների համար նախատեսված գործիքակազմ, նյութեր: Համատեղ կիրառում են նաև քոլեջի գործընկեր Դաշտոյան ատամնաբուժարանի ռեսուրսները:
- Քոլեջում առկա է բուժական կոսմետոլոգիայի լսարան, որտեղ մասնակիորեն առկա են գեղազարդական կոսմետոլոգիայի, մատնահարդարման մոդուլների ուսումնասիրման համար անհրաժեշտ պարագաներ, սակայն տարածաշրջանում Կոսմետոլոգիական կենտրոն առկա չէ, և ուսանողները գործնական կարողությունների պրակտիկ կիրառման նպատակով այցելում են Երևանյան կենտրոններ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի նախաձեռնությամբ մի խումբ ուսանողներ այցելել են «Oxygen» կենտրոն:
- Համակարգչային կաբինետը համալրված է շարժական 11 համակարգչով, հասանելի է տարբեր առարկաների դասերի անցկացման համար: Քոլեջի բոլոր լսարաններում հասանելի է ինտերնետ կապ, ինչը հնարավորություն է տալիս դասախոսներին ուսումնական գործընթացում կիրառել ինտերակտիվ մեթոդներ, ցուցադրել դասի տվյալ թեմային համապատասխան տեսանյութեր:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Գավառ բժշկական կենտրոնի, գործընկեր ատամնաբուժարանների, դեղատների ռեսուրսները հասանելի են ուսանողների համար ինչպես գործնական հմտությունների ձեռքբերման համար անհրաժեշտ դասընթացների կազմակերպման, այնպես էլ պրակտիկայի հնարավորություններ ընձեռելու տեսանկյունից:

Փորձագիտական դիտարկումներից պարզ դարձավ, որ քոլեջի գրադարանը համալրված է շուրջ 2200 ինչպես հայալեզու, այնպես էլ օտարալեզու մասնագիտական գրականությամբ: Գրադարանում առկա է նաև հանրակրթական բլոկի համար նախատեսված գրականություն: Գրադարանը չի անդամակցում էլեկտրոնային գրադարանային աղբյուրների և ցանցերի: Գրադարանում առկա գրականությունը թվայնացված չէ: Քոլեջում առկա չէ ընթերցասրահ: Այցի ընթացքում պարզ դարձավ, որ ուսանողները գրադարանից քիչ են օգտվում, անհրաժեշտության դեպքում անհրաժեշտ նյութերը պատճենահանում են: Երբեմն չեն բավարարում հանրակրթական առարկաների դասագրքերը, որոնց պակասը փորձում են լրացնել դպրոցների գրադարանների հետ նախնական պայմանավորվածության սահմաններում:

Քոլեջն ունի մարզադահլիճ, որը սակայն ունի հիմնանորոգման կարիք և հագեցած չէ մարզագույքով: Քոլեջում 2023 թվականից գործում է սննդի կետ:

Անդրադառնալով քոլեջի ֆինանսական միջոցների պլանավորմանը՝ հարկ է նշել, որ քոլեջի բյուջեն ձևավորվում է պետպատվերով սովորող ուսանողների ծախսերի

հատուցումից (75,7%) և ուսանողների վարձավճարից (24,3 %), որի 83,4 %-ը ուղղվում է աշխատավարձերի վճարմանը, պրակտիկայի կազմակերպմանը (0,09%), ուսումնական սարքավորումների և գույքի ձեռքբերմանը (1,47%), լաբորատոր սարքավորումների և նյութերի ձեռք բերմանը (0,80%)։

Այլ ֆինանսական մուտքեր ԳՊԲՔ-ն չունի: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ֆինանսական հոսքերի ապահովման համար Քոլեջը փորձում է ներգրավել հովանավորների, սակայն արդյունքներ դեռևս առկա չեն: Հաստատությունը իր խնայողությունները ևս ուղղում է ռեսուրսների որոշակի բարելավմանը, նյութատեխնիկական բազայի արդիականացմանը, ընթացիկ նյութերի ձեռքբերմանը (3 մլն ՀՀ դրամ՝ վերջին տարվա ընթացքում)։ Ֆինանսական ռեսուրսների դիվերսիֆիկացիայի հնարավորությունները սահմանափակ են, քոլեջը դիտարկում է կարճաժամկետ ծրագրեր իրականացնելու հնարավորությունները։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ներկայումս այդպիսի ծրագրեր չեն իրականացվում։

Քոլեջի շենքը հիմնանորոգման ենթակա է՝ կառավարության ծրագրի շրջանակներում։ Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ քոլեջը չի իրականացնում ռեսուրսների երկարաժամկետ պլանավորում և ռեսուրսների պահպանման վերաբերյալ վերլուծություններ:

Ֆինանսական միջոցների պլանավորման համար առաջնորդվում են հաշվապահական հաշվառման քաղաքականությամբ։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի կառավարման խորհրդի կողմից դիտարկվել է վարձավճարի բարձրացման հանգամանքը, հաշվի են առնվել ուսանողների վճարունակությունը, մարզի սոցիալ-տնտեսական վիճակը և ծրագրերի իրականացման համար պահանջվող նվազագույն ռեսուրսները, վարձավճարն ավելացվել է 10.000 դրամով։ Քոլեջի բոլոր 5 մասնագիտությունների համար սահմանված վարձավճարը 250.000 ՀՀ դրամն է։

Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ քոլեջը չի հաշվարկել յուրաքանչյուր կրթական ծրագրի համար անհրաժեշտ ֆինանսական նվազագույն միջոցները, բյուջեի բաշխումը չի իրականացվել՝ ըստ ռազմավարական ուղղությունների և մասնագիտական կրթական ծրագրերի: Ըստ անհրաժեշտության դասախոսների պահանջների հիման վրա քոլեջը փորձում է ձեռք բերել անհրաժեշտ նյութերը ուսումնական գործընթացի կազմակերպման համար։

Քոլեջում տեղեկատվության և ներքին փաստաթղթաշրջանառության գործընթացը կազմակերպելու համար 2023թ. մշակվել է «Քոլեջի փաստաթղթաշրջանառության և գործավարության կանոնակարգ»-ը, ըստ որի գործավարության աշխատանքի կազմակերպման պատասխանատվությունը դրվում է տնօրենի և գործավարի վրա, սահմանվում են փաստաթղթերի տեսակները և դրանց կատարման ժամկետները։ Փաստաթղթավորման գործընթացների կառավարման նպատակով քոլեջը մշակել է նաև «Արխիվի կանոնակարգ»-ը։ Այս փաստաթղթերը հիմք ընդունելով՝ քոլեջում իրականացվում է ստացած փաստաթղթերի ընդունումը, գրանցումը և շարժը, սահմանվում են դիմումներին և գրություններին պատասխանելու ժամկետները, ելից թղթակցության ձևակերպումը,

փաստաթղթերի պահպանման կարգը, իրավական ակտերի ձևակերպումը, դիմում-բողոքների քննարկման և ընթացք տալու գործընթացը և այլն: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ չնայած քոլեջում առկա է արխիվ, սակայն արխիվի կառավարման համար համապատասխան հաստիքով համալրում դեռևս տեղի չի ունեցել:

2013 թվականից քոլեջում գործում է «Mulberry» էլեկտրոնային համակարգը, որը հնարավորություն է տալիս իրականացնել արտաքին փաստաթղթաշրջանառությունը, էլեկտրոնային վերահսկումը: Քոլեջում ներքին փաստաթղթավորման գործընթացների կազմակերպման համար էլեկտրոնային համակարգ չի ներդրվել:

Քոլեջում անվտանգ միջավայր ապահովելու համար գործում է պահակակետ: Առաջին բուժօգնության ապահովման նպատակով քոլեջում գործում է բուժկետ, որտեղ հաշվառվում են ներքին շահակիցների այցելությունները: Փորձագիտական խմբի կողմից ռեսուրսների դիտարկումից պարզ դարձավ, որ քոլեջում փակցված են տարհանման պլանները, առկա են հակահրդեհային պաշտպանության միջոցներ: Քոլեջը, Քաղպաշտպանության շտաբի աշխատանքային պլանի համաձայն, իրականացնում է նաև տարհանման միջոցառումներ՝ օգտագործելով հարակից շենքի ապաստարանը:

Փորձագիտական դիտարկումներից պարզ դարձավ նաև, որ լաբորատորիաներում փակցված են լաբորատորիայում աշխատելու անվտանգության կանոնները, որոնք նաև ներկայացվում են ուսանողներին դասընթացի մեկնարկից առաջ: Անվտանգության տեսանկյունից լաբորատորիաներում բացակայում է քարշիչ պահարանը կամ օդափոխման համակարգը:

Հատուկ կարիքներ ունեցող ուսանողների ներգրավման համար քոլեջում առկա չեն թեքահարթակներ: Փորձագիտական այցից պարզ դարձավ նաև, որ ներկայումս քոլեջում չեն սովորում հատուկ կարիքներ ունեցող ուսանողներ:

Ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, և արդյունավետության գնահատման նպատակով քոլեջում ուսանողների, շրջանավարտների և դասախոսների շրջանում իրականացվում են հարցումներ որակի ապահովման պատասխանատուի կողմից: Փորձագիտական դիտարկումները ցույց տվեցին, որ դրանց արդյունքում քոլեջի ռեսուրսները բարելավվել են, այսպես օրինակ վերանորոգվել են լսարաններ, փոխարինվել է գույքը, ձեռք են բերվել համակարգիչներ և այլն:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջը ռեսուրսների համալրումը, կրթական միջավայրի շարունակական բարելավումը համարում է զարգացման ռազմավարական խնդիր, ինչի ուղղությամբ շարունակաբար իրականացվող աշխատանքները նպաստել են ենթակառուցվածքների բարելավմանը և ռեսուրսների համալրմանը:

Փորձագիտական խումբը կարևորում է այն հանգամանքը, որ քոլեջում առկա լաբորատորիաների հիմնական մասը հագեցած են դասավանդման համար անհրաժեշտ ռեսուրսներով, մուլյաժներով և նյութերով, ինչը հնարավորություն է տալիս քոլեջին իրականացնել առկա կրթական ծրագրերով նախատեսված մոդուլները: Քոլեջի տարածքում

ինտերնետ կապի և համակարգչային կաբինետի առկայությունը նպաստում է տարբեր առարկաների և մոդուլների դասավանդման գործընթացում ուսանողների կարողությունների զարգացմանը: Այսուհանդերձ, փորձագիտական խումբը խնդրահարույց է համարում ուսումնական պլաններով նախատեսված մանրէաբանության լաբորատորիայի բացակայությունը, քիմիայի լաբորատորիայի թերհագեցվածությունը, քիմիայի ուղղությամբ առարկաների լաբորատոր սուղ միջոցները և փորձեր անելու հնարավորությունների սակավությունը, որոնց առկայությունն անհրաժեշտ է մի քանի առարկաների լաբորատորիաների համար միաժամանակ ապահովելու ուսանողների համար նախատեսված վերջնարդյունքները: Փորձագիտական խումբն անհրաժեշտ է համարում վերազինել անատոմիայի լաբորատորիան, համալրել բուժական կոսմետոլոգիայի ռեսուրսները՝ դրանք համապատասխանեցնելով արդի պահանջներին: Մասնագիտական գրականության թարմացումը և նոր գրականությամբ համալրումը կարող է իրականացվել նաև էլեկտրոնային գրադարաններին անդամակցության միջոցով:

Փորձագիտական խումբը կարևորում է այն հանգամանքը, որ բացի քոլեջի սեփական ռեսուրսներից ձեռք բերված պայմանագրերի համաձայն՝ ուսանողներին հասանելի են Գավառ բժշկական կենտրոնի, գործընկեր ատամնաբուժարանների, դեղատների ռեսուրսները՝ ինչպես գործնական հմտությունների ձեռքբերման, այնպես էլ պրակտիկայի հնարավորություններ ընձեռելու տեսանկյունից: Քոլեջի հաստատած գործընկերային կապերը բուժհաստատությունների և դեղագործական ընկերությունների հետ մեծապես նպաստում են ռեսուրսների համատեղ օգտագործման շնորհիվ ուսանողների գործնական հմտությունների զարգացմանը և ուսումնառության գործընթացից սկսած մասնագիտական միջավայրին ինտեգրմանը: Փորձագիտական խումբը կարևորում է այս կապերի շարունակական զարգացումը և ընդլայնումը, ինչը էապես խթանում է ուսանողների մասնագիտական կարողությունների զարգացումը:

Փորձագիտական խումբը կարևորում է այն հանգամանքը, որ քոլեջը փորձում է հնարավորության սահմաններում ֆինանսական ռեսուրսներ հատկացնել նոր սարքավորումների, ուսումնական գործընթացում անհրաժեշտ նյութերի ձեռքբերման համար, սակայն դիտարկելով քոլեջի բյուջեից այս գործընթացներին հատկացվող սուղ միջոցները՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ՌԾ-ով և առաքելությամբ սահմանված նշանակետերին հասնելու և միջին մասնագիտական կրթության ժամանակակից պահանջները բավարարելու համար քոլեջը պետք է փորձի ներգրավել ֆինանսական այլընտրանքային աղբյուրներ: Ֆինանսական մուտքերի բազմազանեցմանն ուղղած գործընթացներում Կառավարման խորհրդի անդամների և քոլեջի գործատու շահակիցների ներգրավումը կարող է նոր հնարավորություններ ընձեռել, իսկ հաստատված կապերն ուղղել նաև նոր ռեսուրսների ներգրավմանը: Մյուս կողմից փորձագիտական խումբը կարևորում է նաև ըստ կրթական ծրագրերի պահանջվող ռեսուրսների հաշվառումը, իսկ ծախսարդյունավետության գնահատման մեխանիզմների կիրառումը կնպաստի առկա մարդկային նյութական և ֆինանսական ռեսուրսների արդյունավետ կառավարմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում այն փաստը, որ քոլեջում տեղեկատվության և ներքին փաստաթղթաշրջանառության գործընթացները կազմակերպվում են ըստ համապատասխան կանոնակարգերի և գտնում, որ ներքին ցանցի առկայությունը, էլեկտրոնային փաստաթղթավորման ամբողջական անցումը կնպաստի գործընթացների կանոնակարգմանը ապահովելով ինստիտուցիոնալ և պարբերական կիրառություն ունեցող գործընթացների շարունակականությունը՝ անկախ ստորաբաժանման ղեկավարների փոփոխությունից:

Փորձագիտական խումբը կարևորում է, որ քոլեջն իր ուշադրության կենտրոնում է պահում ներքին շահակիցների անվտանգությանն ուղղված միջոցառումների իրականացումը և շեշտադրում նաև լաբորատորիաներում անվտանգային միջավայրի ապահովման կարևորությունը մասնագիտական առաջադրանքների կատարումը ու լաբարատոր փորձերը առավել անվտանգ դարձնելու համար: Առաջիկայում կառուցվող նոր մասնաշենքում հատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար համապատասխան պայմանների և թեքահարթակների ստեղծումը ևս կարևոր են նման առանձնահատկություն ունեցող ուսանողների ուսումնառության ապահովման համար:

Փորձագիտական խումբը դրական է համարում ռեսուրսներից բավարարվածության վերաբերյալ հարցումների անցկացումը, որոնց շարունակական կազմակերպումը և արդյունքների նկատմամբ հետևողականությունը կարող են նպաստել ընթացիկ կարիքների վերհանմանը և ըստ քոլեջի հնարավորությունների դրանց համալրմանն ու բարելավմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ կրթական ծրագրերի իրականացման համար քոլեջում հիմնականում առկա են անհրաժեշտ նյութատեխնիկական ռեսուրսներ, քոլեջն իր ֆինանսական միջոցների շնորհիվ փորձում է շարունակաբար զարգացնել իր ենթակառուցվածքներն ու ռեսուրսները, լիարժեք և օպտիմալ կերպով օգտագործում է գործընկեր կազմակերպությունների ռեսուրսները, քոլեջը ստեղծում է անվտանգ միջավայր առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված գործընթացների միջոցով, կանոնակարգվում են փաստաթղթաշրջանառության գործընթացները, ներդրվել են ռեսուրսների կիրառելիության գնահատման և որակի ապահովման որոշ գործիքներ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է չափանիշ 7-ի պահանջները:

Եզրակացություն: ԳՊԲՔ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 7-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Փաստեր

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ՄՈՒՀ-ում գործում է հաշվետվողականության ներքնից վերև համակարգ: Քոլեջի ստորաբաժանումները կիսամյակային և տարեկան կտրվածքով ներկայացնում են իրենց գործունեության հաշվետվությունը ՄՈՒՀ-ի կազմակերպական կառուցվածքով նախատեսված իրենց ղեկավարին: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ներկայացված հաշվետվությունները կրում են հիմնականում նկարագրական բնույթ իրականացված գործընթացների վերաբերյալ: Ոչ բոլոր ստորաբաժանումների հաշվետվություններն ունեն վերլուծական բնույթ և ըստ տարիների կրկնում են իրականացված գործընթացները /օրինակ՝ մեթոդիստի հաշվետվությունը/:

Բոլոր ստորաբաժանումների կատարած աշխատանքների վերաբերյալ հավաքական տեղեկատվության և արդյունքների վերլուծության հիման վրա յուրաքանչյուր տարի տնօրենի կողմից կազմվում և կառավարման խորհրդին է ներկայացվում հաշվետվություն՝ տարեկան գործունեության և ռազմավարական ծրագրի կատարողականի վերաբերյալ, որը քոլեջի գործունեության մասին հիմնական հաշվետու փաստաթուղթն է: Տնօրենը հաշվետու է կառավարման, տնօրինական և մանկավարժական խորհուրդներին:

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ տնօրենի հաշվետվությունները ունեն վերլուծական հիմք. ըստ տարիների ներկայացված են վիճակագրական տվյալներ՝ դիմորդների, ուսանողների, խմբերի թվաքանակների, ընդունելության արդյունքների, տարբեր տարիների որակական առաջադիմության ցուցանիշների զարգացման դինամիկայի վերաբերյալ, սակայն այդ հաշվետվություններում արտահայտված չեն իրականացված գործողությունների հետևանքով տեղի ունեցած փոփոխությունները և դրանց արդյունքները:

Քոլեջը, դիտարկելով հաշվետվությունների պլանի բարելավման անհրաժեշտությունը, վերանայել է պլանավորման և հաշվետվությունների ձևաչափերը: Քոլեջում գործում է ներքին հաշվետվողականության վերլուծման և գնահատման քաղաքականություն՝ յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո բոլոր ստորաբաժանումների ղեկավարները տնօրենին են ներկայացնում կատարված աշխատանքների արդյունքները, որոնք համակարգում է որակի ապահովման պատասխանատուն: Վերջինիս գործառույթներից է քոլեջի ներքին գնահատման իրականացումը, որը նպատակ ունի վեր հանել քոլեջի կարիքները՝ հետագայում դրանց բավարարմանն ուղղված քայլեր ձեռնարկելու նպատակով:

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ տարբեր ստորաբաժանումների գործունեության արդյունքները արտացոլվում են այս հաշվետվություններում, Ներքին գնահատման շրջանակներում, և հաճախ գրեթե կրկնում են ՈԱ պատասխանատուի իրականացրած վերլուծությունը:

Օրենքով սահմանված կարգով տարվա ընթացքում ՄՈՒՀ-ը հաշվետվություն է ներկայացնում ԿԳՄՍ նախարարություն: Բացի այդ, քոլեջը հաշվետվություն է ներկայացնում նաև ՀՀ վիճակագրական կոմիտե և այլ պետական գերատեսչություններ՝ ըստ անհրաժեշտության:

Քոլեջն ապահովում է ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը՝ որպես տեղեկատվական հարթակներ օգտագործելով Ֆեյսբուք և Ինստագրամ սոցիալական ցանցերը, առկա է անընդհատ թարմացվող տեղեկատվություն ընդունելության պայմանների, մասնագիտությունների, ընդունելության քննության, վարձավճարների և այլնի վերաբերյալ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջում ընթացող գործընթացների մասին լուսաբանում է նաև Գավառ ԲԿ-ի ֆեսբուքյան էջը՝ տեղեկատվություն տրամադրելով Կառավարման խորհրդի նիստերի մասին:

2023-2024 ուս տարվանից քոլեջում գործարկվել է տեղեկատվության հասանելիությունն ու թափանցիկությունն ապահովող նոր հարթակ՝ պաշտոնական կայքէջ, որի ստեղծման համար գնումների գործընթացի կազմակերպման միջոցով քոլեջի կողմից հատկացվել են ֆինանսական ռեսուրսներ: Կայքէջի գործարկումից հետո հաստիքակազմը համալրվել է նաև համապատասխան մասնագետով, սակայն ամբողջական գործարկման աշխատանքները դեռ ընթացքում են:

Քոլեջի պատերին պաստառներով, հայտարարություններով ներկայացված են քոլեջի գործընթացների վերաբերյալ ներքին փաստաթղթերը, զեղչերի և ուսումնական գործընթացին առնչվող տեղեկատվությունը:

Հասարակության հետ հետադարձ կապի հաստատման միջոցների ուսումնասիրությունից և փորձագիտական այցի ընթացքում շահակիցների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ում գործում են հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմներ: Մասնավորապես կարելի է առանձնացնել գործատուների հետ կապերը՝ պրակտիկաների կազմակերպման, գործատուների կազմակերպություններում առկա ռեսուրսների համատեղ օգտագործման, դասավանդման գործում գործատու-դասախոսների ներգրավման գործընթացներում: Փորձագիտական այցից պարզ դարձավ նաև, որ քննարկումների արդյունքում քոլեջը նախատեսել է ներգրավել գործատուներին և շրջանավարտներին դիմորդների հավաքագրման համար նախատեսված միջոցառումներում (Կարիերայի կենտրոնի կողմից կազմակերպված բաց դռների օրեր, այցելություններ դպրոցներ, այլ կազմակերպություններ): Գործատուների հետ հետադարձ կապն ամրագրվում է նաև Գործատուների արձագանքների գրքի միջոցով, որտեղ գործատուները կարծիք են հայտնում շրջանավարտների մասնագիտական կարողությունների վերաբերյալ:

Հասարակության հետ հետադարձ կապ հաստատելու և հաշվետվողականություն ապահովող միջոցներ են ֆեյսբուքյան և ինստագրամյան էջերը, որոնց միջոցով պարբերաբար լուսաբանվում են քոլեջի գործունեությունը ներկայացնող տարաբնույթ միջոցառումներ, տեղադրվում են հայտարարություններ, տեղեկատվական, մասնագիտական, ուսուցողական

նյութեր, լուսանկարներ, տեսանյութեր և այլ բնույթի տեղեկատվություն: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ քոլեջի ֆեյսբուքյան և ինստագրամյան էջերի հաղորդագրության հարթակներով քոլեջի հետ հաղորդակցվում են հիմնականում դիմորդները ընդունելությանն առնչվող հարցերով: Որակի ապահովման և կարիերայի կենտրոնի պատասխանատուների կողմից անցկացված հարցումների վերլուծության համաձայն՝ արտաքին և ներքին շահակիցների հետ հետադարձ կապի ապահովման մեխանիզմները թերի են և չեն ապահովում լիարժեք հաշվետվողականություն: Սակավաթիվ են քննարկումներն արտաքին շահակիցների հետ քոլեջի կարիքները բացահայտելու, դրանց բավարարելու ուղղությամբ:

Հետադարձ կապն ապահովվում է նաև դպրոցներ և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ կարիերայի կենտրոնի կողմից պարբերաբար կազմակերպվող ուսուցողական այցերի միջոցով: Այնուհետև, քոլեջի Կարիերայի կենտրոնը վերլուծում է կատարված այցերի արդյունքները՝ հստակեցնելով, թե քանի դիմորդ է ընդունվել ուսումնական հաստատություն այդ միջոցառումների շնորհիվ:

Փորձագիտական այցից պարզ դարձավ նաև, որ քոլեջի ուսանողները, Կարիերայի կենտրոնի նախաձեռնությամբ, Պարույր Սևակի տուն-թանգարանի հետ համատեղ կազմակերպել են եռալեզու միջոցառում, որին մասնակցել են այցելուներ, դպրոցականներ, զբոսաշրջիկներ:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ի կողմից կազմակերպվում են հասարակությանը գիտելիքների (արժեքների) փոխանցմանը միտված միջոցառումներ: Մասնավորապես՝ դպրոցների և Երիտասարդների կենտրոնի հետ համատեղ կազմակերպվել է առաջին բուժօգնության վերաբերյալ ուսուցողական միջոցառում: ԱԻՆ-ի հետ համատեղ կազմակերպվել են միջոցառումներ՝ նվիրված տարաբնույթ աղետների կանխարգելմանը:

Երաժշտական քոլեջի հետ համատեղ կազմակերպված միջոցառման ընթացքում ուսանողները կիսվել են գիտելիքների ձեռքբերման համար անհրաժեշտ փորձառությամբ, միմյանց ներկայացրել իրենց ձեռքբերումները, իսկ միջոցառման վերջում Բուժական կոսմետոլոգիա կրթական ծրագրի ուսանողները ցուցադրել են իրենց հմտությունները՝ տեղում պատրաստելով և ներկաներին նվիրելով տարաբնույթ կոսմետիկ միջոցներ, դիմակներ:

Քոլեջի հասարակական պատասխանատվության մասին է վկայում նաև ATP կազմակերպության հետ համատեղ պարբերաբար իրականացվող էկոլոգիային և շրջակա միջավայրի պաշտպանությանը նվիրված միջոցառումների իրականացումը:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ՄՈՒՀ-ում գործում է հաշվետվողականության ներքևից վերև համակարգ, առկա են ներքին և արտաքին հաշվետվողականության որոշակի մեխանիզմներ, որոնք թույլ են տալիս քոլեջում իրականացվող գործընթացների մասին տեղեկատվությունը հասանելի դարձնել քոլեջի հիմնական շահակիցներին: Միաժամանակ, փորձագիտական խումբը գտնում է, որ

հաշվետվություններում վերլուծական բաղադրիչի զարգացումը կնպաստի քոլեջի կարիքների և խնդիրների վերհանմանը և հաշվետվողականության գործընթացների արդյունավետության բարձրացմանը: Քոլեջի կողմից իրականացված գործողությունների հետևանքով տեղի ունեցած փոփոխությունների արտացոլումը հաշվետվություններում և դրանց հիմքով հետագա պլանավորումների իրականացումը կարևոր ազդակներ կարող են ստեղծել պլանավորման և հաշվետվողականության գործընթացների արդյունավետության բարձրացման համար:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում ներքին և արտաքին շահակիցներին ՄՈՒՀ-ի գործունեության վերաբերյալ տեղեկատվության հասանելիությունը և թափանցիկությունն ապահովող մեխանիզմների առկայությունը, ֆեյսբուքյան և ինստագրամյան էջերի օգտագործումը տեղեկատվության տարածման նպատակով, ինչպես նաև դրական է, որ քոլեջը կարիքների գնահատման արդյունքում գործարկել է պաշտոնական կայքէջը, որը հնարավորություն կտա հաստատությանը ապահովել ՄԿԾ-ների իրականացման ընթացքի, ՈԱ գործընթացների և շահակիցների համար կարևոր այլ տեղեկատվության հրապարակայնությունը: Փորձագիտական խումբը շեշտադրում է, որ վերոնշյալ հարթակների հնարավորությունների օպտիմալ օգտագործումը, քոլեջի, նրա շրջանավարտների, մասնագիտական կրթություն ստանալու հնարավորությունների մասին առավել ընդգրկուն տեղեկատվության հրապարակումները ավելի ճանաչելի կդարձնեն քոլեջը ՀՀ-ում և տարածաշրջանում, կնպաստեն արտաքին շահակիցների հետ կապերի ամրապնդմանը, դիմորդների թվի ավելացմանը:

Փորձագիտական խումբը նշում է, որ շահակիցների հետ հետադարձ կապի հաստատման գործիքակազմի զարգացումը, նրանց շարունակական ներգրավումը քոլեջի կրթական ծրագրերի լավարկման գործընթացներում, էականորեն կնպաստեն ուսանողների մասնագիտական կարողությունների զարգացմանը և առաջընթացի պլանավորմանը: Արտաքին շահակիցների՝ հատկապես գործատուների հետ հետադարձ կապի մեխանիզմների առավել ակտիվացումը կնպաստի շահակիցների կարիքների լիարժեք բացահայտմանը և դրանց լուծման ուղիների մշակմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում նաև այն հանգամանքը, որ ՄՈՒՀ-ի կողմից կազմակերպվում են հասարակությանը գիտելիքների (արժեքների) փոխանցմանը միտված միջոցառումներ՝ դասախոսական և ուսանողական համակազմերի ներուժի լայնորեն կիրառմամբ: Միջոցառումների պարբերաբար իրականացումը վկայում է քոլեջի հասարակական պատասխանատվության մասին, ինչպես նաև նպաստում արտաքին կապերի ու համագործակցության շրջանակների ընդլայնմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջում կանոնակարգված են հաշվետվողականության գործընթացները, ձևավորվել են գործընթացների թափանցիկության և հասարակությանը հասանելիության ապահովման գործիքներ, առկա են հետադարձ կապի ապահովման որոշ մեխանիզմներ, քոլեջն իրականացնում է հասարակությանը գիտելիքների

և արժեքների փոխանցման միջոցառումներ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է չափանիշ 8-ի պահանջները:

Եզրակացություն: ԳՊԲՔ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 8-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

Փաստեր

ԳՊԲՔ-ն նոր ռազմավարական ծրագրով իր առջև խնդիր է դրել ստեղծել նախադրյալներ արտաքին կապերի ստեղծման և միջազգայնացման գործընթաց իրականացնելու համար: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը դեռևս չունի միջազգայնացման գործընթացը կարգավորող հստակ քաղաքականություն և ընթացակարգեր, սակայն քոլեջը կարիերայի պատասխանատուին դիտարկում է որպես արտաքին կապերի պատասխանատու: Համաձայն «Մասնագիտական կողմնորոշման և կարիերայի կանոնակարգ»-ի՝ նրան է վերապահվում այլ ուսումնական հաստատությունների հետ փոխադարձ այցերի կազմակերպումը, կապերի հաստատումը սոցիալական գործընկերների՝ գործատուների և արհմիությունների հետ, քոլեջի գործունեությունը ճանաչելի դարձնելու և բարձր վարկանիշ ապահովելու գործընթացներին միտված միջոցառումների իրականացումը: Փորձագիտական այցի և ինքնավերլուծության տվյալների համադրումից պարզ դարձավ, որ քոլեջի կարիերայի կենտրոնի պատասխանատուի կողմից համակարգվում է համագործակցային կապերի ստեղծումը արտաքին շահակիցների հետ՝ կազմակերպելով ուսանողների կարճաժամկետ պրակտիկաներ, ուսուցողական և ճանաչողական այցեր: Տնօրենը ևս աջակցում է արտաքին կապերի միջոցառումների կազմակերպմանը:

Քոլեջը համագործակցում է հանրապետության միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ և ունի երկկողմանի կնքված համաձայնագրեր մի շարք հասարակական, առողջապահական, դեղագործական կազմակերպությունների և կոսմետիկ միջամտություն իրականացնող ընկերությունների հետ (թվով՝ 47), որոնց շրջանակներում կազմակերպվում են տարաբնույթ դասընթացներ, ուսուցողական այցեր, քննարկումներ, կլոր սեղաններ և միջոցառումներ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը համագործակցում է տարածաշրջանի գործատուների հետ, ինչի արդյունքում կարողանում է կազմակերպել ուսանողների պրակտիկաները, դասավանդման գործընթացում ներգրավել գործատու-դասախոսների: Այդ համագործակցությունների շրջանակներում քոլեջը ներկայացրել է իրականացվելիք միջոցառումների պլան-ժամանակացույց: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ վերջին մեկ տարվա ընթացքում քոլեջը կնքել է շուրջ 18 պայմանագրեր, որոնցից

15-ը թափուր աշխատատեղերի մասին տեղեկատվությանն են առնչվում: Ուսումնական պրակտիկայի անցկացման համար կնքվել են պայմանագրեր Գավառ ԲԿ-ի, Գավառի պոլիկլինիկայի, Գեղամա ՍՊԸ դեղատան և Սիլվի գեղեցկության սրահի հետ: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ համագործակցությունները հնարավորություն են տալիս քոլեջին համատեղ կիրառել նաև նշված հաստատությունների ռեսուրսները գործնական պարապմունքները բուժհաստատություններում կազմակերպելու համար:

Քոլեջը միջազգայնացման և շարժունության իրականացման համար կարևորում է նաև բենչմարքինգի իրականացումը, սակայն փորձագիտական այցից և քոլեջի ներկայացուցիչների հետ մասնագիտական քննարկումներից պարզ դարձավ նաև, որ քոլեջը դեռևս չի իրականացնում կրթական ծրագրերի համապարփակ բենչմարքինգ այլ ուսումնական հաստատությունների առաջավոր փորձի տեղայնացման ու քոլեջում ներդրման նպատակով:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը համագործակցում է իր ամենամեծ գործատուի՝ Գավառ ԲԿ-ի հետ՝ օգտագործելով ԲԿ-ի ռեսուրսները, այստեղից նաև ներգրավվում են դասախոսներ: Համագործակցության հաստատման շնորհիվ քոլեջում ընթացող պրակտիկաները Գավառ ԲԿ-ում կազմակերպվում են անվճար հիմունքներով: ԲԿ-ն նաև քոլեջի շրջանավարտների հիմնական գուծատուն է: Ուսումնական պրակտիկան անվճար է կազմակերպվում նաև Գեղամա-96 դեղատանը: Քոլեջը համագործակցում է նաև այլ դեղատնային ցանցերի հետ՝ դրանց բազայի հիման վրա կազմակերպելով ուսումնական պրակտիկաները:

Քոլեջը սերտորեն համագործակցում է նաև տարածաշրջանի դպրոցների հետ, կազմակերպում մասնագիտական կողմնորոշման այցեր՝ գործատուների և շրջանավարտների մասնակցությամբ: Իրականացված հաշվետվությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք նպաստել են ուսանողների թվաքանակի աճին: Սերտ է նաև համագործակցությունը Կառավարման խորհրդում ներգրավված այլ գործատուների և արտաքին շահակիցների հետ, որոնք ևս հնարավորինս աջակցում են քոլեջի գործունեությանը: Մասնավորապես՝ մարզպետարանի զբաղվածության կենտրոնը, տարածաշրջանի գյուղերի ամբուլատորիաների ղեկավարներն ակտիվորեն աջակցում են շրջանավարտների աշխատանքի տեղավորմանը:

Կարմիր Խաչի հայաստանյան գրասենյակի և «Գավառի երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ԵՀԿ-ի հետ համագործակցության շրջանակներում կազմակերպվել են առաջին բուժօգնության դասընթացներ: Հայկական «Կարիտաս» բարեգործական հասարակական կազմակերպության և «Ա.Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության կենտրոն» -ի հետ համատեղ իրականացվել են կարճաժամկետ ծրագրեր՝ «Ծերունական խնամք», «Մեդիագրագիտություն» թեմաներով, որոնց մասնակցել են թվով 113 ուսանողներ: «Կարիտաս»-ը քոլեջին նվիրել է նաև որոշ ուսումնական ռեսուրսներ:

Կարիերայի կենտրոնի կողմից հաստատված համագործակցային կապերի շնորհիվ կազմակերպվել են ուսուցողական և ճանաչողական այցեր ԵՊԲՀ ստոմատոլոգիական գերազանցության կենտրոն, Իզմիրլյան ԲԿ, Դիլիջանի միջազգային դպրոց, ՀՀ ԳԱԱ Կենսատեխնոլոգիայի ինստիտուտ, «Էսկոֆարմ» դեղագործական կազմակերպություն, ՀՀ ԳԱԱ Բուսաբանական այգի: Ուսանողներն այցելել են նաև Պարույր Սևակի տուն-թանգարան, որտեղ կազմակերպել են Պ. Սևակի գրական գործունեությանը նվիրված եռալեզու միջոցառում՝ բազմաթիվ հյուրերի, այցելուների մասնակցությամբ:

Կարևորելով միջազգայնացման գործընթացում Erasmus+ ծրագրի ընձեռած հնարավորությունները՝ քոլեջը մասնակցել է Հայաստանում Erasmus+ գրասենյակի կողմից կազմակերպվող դասընթացներին՝ մտադրություն ունենալով ներգրավվել ՄԿՈՒ հաստատությունների կարողությունների զարգացմանը օժանդակող, միջազգային կրեդիտային շարժունության ծրագրերին: Բացի այդ քոլեջի դասախոսները, և հատկապես բժիշկ-դասախոսներն իրենց նախաձեռնությամբ պարբերաբար մասնակցում են ինչպես արտերկրում, այնպես էլ Հայաստանում գործող միջազգային դեղագործական, առողջապահական կազմակերպությունների կողմից իրականացվող մասնագիտական քննարկումների, սեմինարների, գիտաժողովների՝ ստանալով համապատասխան հավաստագրեր: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ձեռք բերված կարողությունները դասախոսները փորձում են ներդնել ուսումնական գործընթացում: Վերջին տարիներին նման վերապատրաստումների մասնակցել է քոլեջի շուրջ 26 դասախոս:

Քոլեջը միջազգայնացման փորձ չունենալով հանդերձ՝ ակտիվ համագործակցում է ՀՀ-ում գործող միջազգային կառույցների (ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալություն, Սեյվ դը չիլդրեն, Վորլդ վիժն) հայաստանյան գրասենյակների հետ՝ իրականացնելով դասընթացներ, վերապատրաստումներ և տարաբնույթ նախաձեռնություններ:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի միջազգայնացման գործընթացների իրականացմանը խոչընդոտում են մի շարք գործոններ, ինչպիսիք են փորձի պակասը, օտար լեզուների ոչ բավարար իմացությունը:

Հաշվի առնելով, որ նոր ռազմավարական ծրագրով որպես նպատակ սահմանվել է միջազգայնացման գործընթացը, ուստի օտար լեզվի իմացությունը թե՛ դասախոսների, թե՛ ուսանողների շրջանում քոլեջի կողմից դիտվում է այդ գործընթացի իրականացման կարևոր բաղադրիչ: Ինքնավերլուծության ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ քոլեջի կողմից կատարվել է դասախոսների և ուսանողների օտար լեզվի իմացության նախնական ստուգում, որն իրականացվել է տվյալ լեզուների դասախոսների կողմից մշակված թեստերի միջոցով: Ուսանողներին և դասախոսներին տրվել են տարբեր բարդության թեստեր, որոնց վերլուծության արդյունքում պարզ է դարձել, որ դասավանդողների 50 % տիրապետում է անգլերենին, իսկ 80%՝ ռուսերենին: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ հստակեցված չէ, թե որ մակարդակով են ներքին շահակիցները տիրապետում նշված օտար լեզուներին:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ առաջիկայում օտար լեզվի իմացության մակարդակի բարելավման նպատակով նախատեսվում է մշակել և ներդնել գործուն

մեխանիզմներ և գործիքակազմ (գործողությունների պլան, ժամանակացույց), ինչպես նաև ստեղծել համապատասխան միջավայր դասավանդողների և ուսանողների համար անգլերենի և ռուսերենի իմացությունը բարելավելու, մոտիվացիան բարձրացնելու նպատակով: Փորձագիտական այցից պարզ դարձավ նաև, որ նախկինում ևս կազմակերպվել են որոշ դասընթացներ դասախոսների անգլերենի և ռուսերենի իմացությունը բարելավելու համար, սակայն ներկայումս նման միջոցառումներ չեն կազմակերպվում:

Ուսանողների շրջանում այս խնդրի լուծմանն ուղղված միակ միջոցառումը, թերևս, ռուսերենով և անգլերենով ուսանողների հետազոտական աշխատանքների իրականացման խրախուսումն է:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջը կարևորում է արտաքին կապերի դերը և նոր ռազմավարական ծրագրով իր առջև խնդիր է դրել ստեղծել նախադրյալներ արտաքին կապերի ստեղծման և միջազգայնացման համար: Փորձագիտական խումբը գտնում է, որ այս խնդրի լուծման համար քոլեջն անհրաժեշտություն ունի հստակեցնելու միջազգայնացման ուղղությունները՝ քոլեջի ներուժի գնահատմամբ, ինչը հնարավորություն կտա այն դարձնել առավել ուղղորդված և կնպաստի քոլեջի որդեգրած սկզբունքների և առաջադրած խնդիրների իրագործմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում այն կարևոր հանգամանքը, որ քոլեջը համագործակցում է հանրապետության միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ և ունի երկկողմանի կնքված համաձայնագրեր մի շարք հասարակական, առողջապահական, դեղագործական կազմակերպությունների և կոսմետիկ միջամտություն իրականացնող ընկերությունների հետ, ինչի արդյունքում կարողանում է կազմակերպել ուսանողների պրակտիկաները, դասավանդման գործընթացում ներգրավել գործատու-դասախոսների և նպաստել ուսանողների գործնական հմտությունների ձևավորմանը: Փորձագիտական խումբը հատկանշական է համարում տարածաշրջանի գործատուների հետ հաստատված կապերը, ինչը հնարավորություն է տալիս քոլեջին համատեղ օգտագործելու գործընկեր կազմակերպությունների ռեսուրսները: Այս տեսանկյունից կապերի շարունակաբար զարգացումը, գործատուների կարիքների վերհանումը և նրանց առավել լայն շրջանակի ներգրավումը քոլեջի համար ռազմավարական համարվող ուղղությունների զարգացման գործում կարող են նպաստել քոլեջի կարողությունների զարգացմանը, շրջանավարտների մասնագիտական զբաղվածության մակարդակի բարձրացմանը և քոլեջի հեղինակության շարունակաբար աճին տարածաշրջանում:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ Կարիերայի կենտրոնի կողմից արտաքին կապերի ձեռքբերման և ընդլայնման շնորհիվ ապահովվում է արդյունավետ, բազմակողմանի փոխգործակցություն՝ նպաստելով ուսանողների մասնագիտական կոմպետենցիաների ձևավորմանը և արտաքին կապերի հաստատմանը:

Փորձագիտական խումբը քոլեջի միջազգայնացման համար կարևոր է համարում նաև համագործակցությունների արդյունքների կիրառումը կրթական ծրագրերի

բենչմարքինգի իրականացման, դասախոսական վերապատրաստումների ակտիվացման, ուսանողների և դասախոսների համար շարժունության հնարավորությունների ստեղծման, համատեղ ծրագրերի իրականացման համար:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ՄՈՒՀ-ը պլանավորում է դասախոսական անձնակազմի և ուսանողների շրջանում օտար լեզուների իմացության մակարդակի բարելավում՝ սեփական միջոցների հաշվին, ինչը կնպաստի ՄԿԾ-ների շրջանակներում դասախոսների և ուսանողների շարժունության ապահովմանը, քոլեջի նախանշած ուղղությունների արդյունավետ ու ամբողջական իրականացմանը և լավագույն փորձի ներդրմանը քոլեջում:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջը համագործակցում է տարածաշրջանում առկա բժշկական հաստատությունների և դեղագործական կազմակերպությունների հետ, համատեղ օգտագործում է նրանց ռեսուրսները ուսանողների պրակտիկ կարողությունների ու հմտությունների ձևավորման նպատակով, սահմանել է արտաքին կապերի ձևավորման պատասխանատվության շրջանակ, շարունակաբար ընդլայնում է ՀՀ-ում գործընկեր կազմակերպությունների շրջանակը, գործատուների հետ փոխգործակցությամբ դասավանդման գործընթացներում ներգրավում է նաև պրակտիկ ոլորտից դասավանդողների՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է չափանիշ 9-ի պահանջները:

Եզրակացություն: ԳՊԲՔ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 9-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Փաստեր

Քոլեջի գործող ռազմավարական ծրագրում կրթության որակի բարձրացումը, որակյալ ուսումնական, դաստիարակչական միջավայրի ապահովումը, որակի մշակույթի ձևավորումը սահմանված են որպես առաջնահերթություններ: Քոլեջում որակի ապահովման համակարգի ներդրման աշխատանքները մեկնարկել են 2021թ.-ից: Որակի մշակույթի ձևավորման և գործընթացների կանոնակարգման նպատակով քոլեջը փորձել է ձևավորել համապատասխան փաստաթղթային բազան: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ այս նպատակով քոլեջի Որակի ապահովման կենտրոնի կողմից մշակվել է «Որակի ապահովման քաղաքականությունը», որը սահմանում է որակի ապահովման սկզբունքները, նպատակները, խնդիրները և արդյունքները: Քաղաքականության համաձայն՝ ՈԱ համակարգի առաքելությունն է նպաստել քոլեջի գործունեության հիմնական

ոլորտներում (կրթություն, գիտություն և հանրային ծառայություններ) վստահության ամրապնդմանը և հավաստել, որ քոլեջի շնորհած որակավորման աստիճանների որակն ու գործող չափորոշիչները պահպանվում, շարունակաբար բարելավվում և արդյունավետ կերպով կառավարվում են: ԳՊԲՔ ՈԱ քաղաքականությունը կոչված է աջակցելու քոլեջին իր առաքելությունն ու ռազմավարական նպատակներն արդյունավետ կերպով իրականացնելու համար: 2022թ.-ին քոլեջը մշակել է նաև «Որակի ապահովման կանոնակարգը», ըստ որի որակի ապահովման ստորաբաժանման նպատակն է քոլեջի կրթության որակի գնահատման և ապահովման համակարգի և դրան վերաբերող փաստաթղթային փաթեթի մշակումը, կատարելագործումը և ներդրումը, ինչպես նաև ինքնավերլուծության և ինքնագնահատման գործընթացների իրականացման համակարգումը, որակի գործընթացների և ընթացակարգերի թափանցիկության ապահովումը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ որակի պատասխանատուի հաստիքի ներդրմամբ քոլեջում սկսել են որոշակի աշխատանքներ իրականացվել որակի ապահովման գործընթացների պլանավորման և համակարգման հարցերում:

Որակի ապահովման պատասխանատուի տարեկան պլանի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ընթացիկ տարվա համար նախատեսված աշխատանքները հիմնականում վերաբերում են որակի գործընթացների հաշվետվողականության և թափանցիկության մեխանիզմների ստեղծմանը, որակի մշակույթի զարգացմանը: Այսուհանդերձ, հարկ է նշել, որ հիմնականում պարբերաբար իրականացման համար նախատեսված այս գործընթացները բավական ընդհանրական են և արդյունքների ձեռք բերման տեսանկյունից ոչ չափելի: Նախատեսված են նաև գործողություններ, ինչպես օրինակ՝ շրջանավարտների աշխատաշուկայում պահանջարկ ունեցող գիտելիքների և հմտությունների ձեռքբերում, շահակիցների ակնկալիքների բավարարում, բարձր չափանիշների պահպանում ուսումնական հաստատության գործունեության բոլոր հիմնական ոլորտներում, որոնց իրականացման գործիքակազմ, ռեսուրսներ և պատասխանատվությունների բաշխում ըստ ստորաբաժանումների նախատեսված չէ: Նախորդ ուսումնական տարվա հաշվետվության ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ որակի պատասխանատուի կողմից իրականացվել են կիսամյակային և տարեկան հարցումներ ուսանողների, շրջանավարտների, դասախոսների և գործատուների շրջանում, ուսումնասիրվել են շահակիցների շրջանում իրականացված հարցման արդյունքում նշված առաջարկությունները, կազմակերպվել են ֆոկուս խմբային հարցումներ, իրականացրել են դասալսումներ:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ որակի ապահովման պատասխանատուի համար քոլեջը հատկացրել է 0.5 հաստիք: Փորձագիտական հանդիպումները ցույց տվեցին, որ անհրաժեշտության դեպքում որակի պատասխանատուին աջակցում են նաև վարչական աշխատակիցները, իսկ կազմակերպչական հարցերով՝ ուսանողները: Առանձին աշխատասենյակ պատասխանատուի աշխատանքներն իրականացնելու համար նախատեսված չէ: Քոլեջը, կարևորելով պատասխանատուի կարողությունների զարգացումը, ֆինանսական միջոցներ է տրամադրել պատասխանատուի՝ որակի ապահովման գործընթացներին առնչվող վերապատրաստման մասնակցության համար:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի որակի պատասխանատուի կողմից պարբերական ձևով իրականացվում են հարցումներ քոլեջի շահակիցների շրջանում՝ վերհանելու ուսանողների, դասախոսների, շրջանավարտների կարիքները: Հարցաշարերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դրանցում ներառված հարցերը բավական ընդհանրական են՝ առաջարկելով ուսանողներին, դասախոսներին գնահատել ռեսուրսներից բավարարվածությունը, առկա չեն բաց հարցեր ուսանողներին հուզող հարցերի շարադրման համար: Շրջանավարտներին ուղղված հարցումներում, սակայն առկա են հարցեր, որոնց միջոցով շրջանավարտները կարող են ներկայացնել իրենց առաջարկությունը, նշել քոլեջում ստացած կրթությունից բավարարվածության պատճառները: Համադրելով քոլեջի կողմից իրականացվող հարցումները որակի քաղաքականությամբ սահմանված նպատակներին՝ կարելի է նշել, որ դրանք ոչ միշտ են փոխկապակցված իրար և առավելապես նպաստում են ռեսուրսներից բավարարվածության գնահատմանը, բայց ոչ ուսանողների կրթական կարիքների, կրթական ծրագրերի խնդիրների վերհանմանը: Հարցումների արդյունքները քննարկվել են քոլեջի ղեկավար կազմի հետ և բարելավվել են որոշ ռեսուրսներ, ձեռք են բերվել նյութեր: Կառավարման գործընթացների որակի ապահովմանը դրանք ևս դեռևս անդրադարձ չեն կատարում:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ որակի գնահատման հարցումներ են իրականացվում նաև քոլեջի կողմից կազմակերպված յուրաքանչյուր միջոցառումից, սեմինարից հետո:

Փորձագիտական այցից պարզ դարձավ նաև, որ քոլեջի կողմից պարբերաբար կազմակերպվում են նաև ֆոկուս խմբային ֆորմալ և ոչ ֆորմալ հանդիպումներ, որոնց ընթացքում քննարկվում են շահակիցների կարիքները, և հաշվի առնելով քոլեջի ուսանողների ոչ մեծաթիվ լինելու հանգամանքը, այս հանդիպումներում քոլեջին հաջողվում է հնարավորինս լայն շրջանակի ներառել: Փորձագիտական հանդիպումները ցույց տվեցին, որ հաճախ այս քննարկումների արդյունքում բացահայտված խնդիրներն են հիմք հանդիսանում հետագա բարելավումների համար: Քոլեջն իր ինքնավերլուծությամբ շեշտադրել է նաև որակի ապահովման գործընթացներին գործատուների ներգրավածության մակարդակի բարձրացման ուղղությամբ քայլերի իրականացման անհրաժեշտությունը:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՈԱ պատասխանատուն իրականացրել է 2021-2022 տարիների ուսումնական գործընթացների ներքին գնահատում, որին մասնակցել են քոլեջի ստորաբաժանումների ղեկավարները, ովքեր ուսումնական տարվա ավարտին ներկայացնում են հաշվետվություններ իրենց կատարած աշխատանքների վերաբերյալ: Ներքին գնահատման ուսումնասիրությունը ցույց տվեց, որ այստեղ ընդգրկված են հարցումների վերլուծությունների արդյունքները, տարբեր ուղղությունների աշխատանքների իրականացման մասին քանակական տվյալներ: Հարկ է նշել, որ մի շարք ուղղությունների (ընդունելություն, շրջանավարտների զբաղունակություն քոլեջում կրթությունն ավարտելուց հետո) վերաբերյալ տվյալներն ամփոփված և ներկայացված են նաև՝ ըստ 3-5 տարվա դինամիկայի: Այսուհանդերձ, չնայած գնահատման մեջ ներառված են բազմաթիվ վերլուծություններ, գրաֆիկներ, սակայն դրանք ոչ միշտ են փոխկապակցված և

համապարփակ կերպով ամփոփված։ Այսպես օրինակ անդրադարձ է կատարվում Կարիերայի կենտրոնի կողմից տրամադրված տվյալին, այնուհետև հարցումների արդյունքներին, որոնց փոխկապակցվածությունը տեսանելի չէ, քանի որ օրինակ քանակական տվյալներն առանձնացված են ըստ մասնագիտությունների, սակայն որակական վերլուծության հատվածն առավել ընդհանրական է, և չի արտացոլում ըստ կրթական ծրագրի պատկերը։

Ինչպես արդեն նշվել է, որակի ապահովման համակարգը քոլեջում դեռևս նոր է ձևավորվում։ Գործընթացները գտնվում են պլանավորման կամ իրականացման փուլում, արդեն իսկ իրականացված գործողությունների գնահատման գործընթացները դեռևս նոր են նախատեսվում կիրառել։ Քոլեջը ներդրել է ՈԱ հարցումների մեխանիզմը՝ նպատակ ունենալով վեր հանել շահակիցների կարծիքները, որոշակիորեն գնահատել տարբեր գործընթացների արդյունավետությունը։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ կիրառվող հարցաթերթերը մեկ տարի գործածումից հետո վերանայել են, կատարվել են որոշակի փոփոխություններ հարցերի ձևակերպման համատեքստում։

ՈՆԱՀ վերանայմանը նպաստող գնահատման գործիքակազմը դեռևս զարգացման կարիք ունի։ Ինքնավերլուծության համաձայն՝ քոլեջը նախատեսում է առաջիկայում ներդնել մեխանիզմներ որակի ապահովման գործընթացների և ընթացակարգերի առաջավոր փորձի ուսումնասիրության և տեղայնացման համար։

Անդրադառնալով քոլեջի ներկայացրած ինքնավերլուծությանը՝ որակի արտաքին գնահատման գործընթացների իրականացման համար, կարելի է նշել, որ փաստաթղթում հիմնականում ներկայացվել են անհրաժեշտ հիմքերը, վերլուծությունների արդյունքները։ Սակայն ըստ տարիների դինամիկայի դրանց վերլուծության, առկա խնդիրների, դրանց հաղթահարման համար անհրաժեշտ ուղղությունները հստակեցված չեն։ Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց են տվեցին, որ հարցումների արդյունքների վերլուծությունը թույլ է տվել քոլեջին ձևավորել ընդհանուր պատկերացումներ տեղի ունեցող գործընթացների մասին։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի որակի ապահովման պատասխանատուի կողմից կազմակերպվել և համակարգվել է ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության գործընթացը, իսկ ստորաբաժանումների պատասխանատուները իրենց համակարգած ոլորտի վերաբերյալ տրամադրել են համապատասխան տեղեկատվությունը։ Կազմված ինքնավերլուծությունը, այսուհանդերձ, չի տարածվել շահակիցների ամբողջական շրջանակում։ Հարկ է նշել, որ ինքնավերլուծության իրականացումից հետո որոշ ուղղություններով քոլեջն արդեն իսկ կատարել է քայլեր. «Մեթոդների ընտրության քաղաքականությունը», «Բենչմարքինգի իրականացման քաղաքականությունը», «ՈւԽ կանոնադրությունը» վերանայվել են ինքնավերլուծության արդյունքում և արդեն իսկ հաստատվել քոլեջի Կառավարման խորհրդի կողմից։ ՈԱԱԿ Էլեկտրոնային հարցաշարը լրացնելիս քոլեջը վերհանել է նաև «Փաստաթղթաշրջանառության իրականացման կարգի» բացակայությունը, որը ևս մշակվել է ինքնավերլուծության գործընթացից հետո։ Այսպիսով, գործընթացից հետո որոշ փաստաթղթեր մշակվել և հաստատվել են, սակայն դեռևս դրանց արդյունքների և

կիրառելիության մասին տվյալներ առկա չեն: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ գործատուների և ներքին շահակիցների կարիքները ամբողջությամբ արտացոլված չեն ինքնավերլուծությունում, ինչպես նաև չի երևում նրանց մասնակցությունը ԻՎ աշխատանքներում, նրանց կարիքները ինքնավերլուծության մեջ ներառվել են տարբեր ստորաբաժանումների աշխատակիցների հետ քննարկումների արդյունքում:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ինքնավերլուծության գործընթացն իրականացնելիս քոլեջը վերհանել է նաև որակի ապահովման գործընթացների թափանցիկության ապահովման անհրաժեշտությունը, որից հետո ձեռնամուխ է եղել պաշտոնական կայքէջի ստեղծմանը: Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ նոր գործարկված կայքում քոլեջը նախատեսում է հրապարակել գործող կանոնակարգերը, հաշվետվությունները: Քոլեջը նախատեսում է նաև մշտադիտարկել կայքէջում հրապարակվող տեղեկատվության նկատմամբ հետաքրքրությունը և հետադարձ կապը դրա կիրառման արդյունավետության գնահատման նպատակով:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջը, կարևորելով որակի ապահովման մշակույթի ձևավորումը, աշխատանքներ է իրականացրել որակի ապահովման համակարգի ներդրման համար, ինչը նպաստել է անհրաժեշտ կանոնակարգող փաստաթղթերի մշակմանը և ներդրմանը հաստատությունում: Որակի ապահովման համակարգի նպատակների, խնդիրների և ակնկալվող արդյունքների սահմանումը ևս նախադրյալներ են ստեղծել որակի ապահովման համակարգի ձևավորման համար: Փորձագիտական խումբը շեշտադրում է մշակված բոլոր փաստաթղթերի կիրառելիության կարևորությունը, ինչը կհանգեցնի հաստատությունում որակի մշակույթի ամրապնդմանը և կրթական ծրագրերի որակի բարելավմանը: Փորձագիտական խումբը գտնում է, որ որակի ապահովման պլանավորումն իրականացնելիս որակի պատասխանատուի կողմից առավել հստակ գործողությունների և ակնկալվող արդյունքների սահմանումը, նախատեսվող գործընթացների համար ժամանակային և մարդկային ռեսուրսների հստակեցումը մեծապես կբարձրացնեն իրականացվող գործողությունների արդյունավետությունը: Հաշվի առնելով որակի պատասխանատուի գործառութային լայն շրջանակի առկայությունը՝ քոլեջը կարող է գնահատել հաստիքի ամբողջական համալրման հնարավորությունը, սակայն դրան զուգահեռ անհրաժեշտ է հստակեցնել և տարանջատել կրթական ծրագրերի իրականացման և դրանց որակի ապահովման, շահակիցների կարիքների բավարարման և դրանց գնահատման գործառույթները՝ ակնկալվող արդյունքներն առավել կառավարելի և հասանելի դարձնելու համար: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջը ֆինանսական ռեսուրսներ է հատկացրել որակի պատասխանատուի մասնագիտական զարգացման համար, ինչը է անդրադարձել գործընթացների կանոնակարգման վրա:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջը կարևորում է շահակիցների կարիքների պարբերական և հնարավորինս լայն շրջանակ ընդգրկող կարիքների վերհանումը, ինչի միջոցով կարողանում է նաև ըստ տարիների դինամիկային վերլուծել

ստացված արդյունքները, անել եզրահանգումներ։ Այս տեսանկյունից քոլեջի կողմից իրականացված հարցումների արդյունքների ներդրումը հետագա բարելավումների հիմքում և դրանց հիման վրա կառավարչական որոշումների կայացումը կարող են կարևոր լինել՝ նպաստելու քոլեջում տեղի ունեցող բոլոր գործընթացների համաչափ ու Ռազմավարական ծրագրին համահունչ զարգացմանը։ Տեսանելի է, որ իրականացվող հարցումները մեծապես նպաստել են ռեսուրսների բարելավմանը, սակայն որակի ապահովման համակարգի առջև դրված խնդիրների ամբողջական իրականացման համար անհրաժեշտ է նաև ուշադրություն դարձնել կրթական միջավայրի արդյունավետության գնահատմանը, կրթական ծրագրերի իրականացման ընթացքի վերլուծությանը, ինչը կնպաստի շնորհվող որակավորումների արժանահավատությանը։

Փորձագիտական խումբը կարևորում է նաև, որ բացի հարցումներից քոլեջում կիրառվում են նաև որակի ապահովման այլ գործիքներ, մասնավորապես ֆոկուս խմբային քննարկումները ևս աջակցում են կարիքների վերհանմանը։ Քոլեջի որակի ապահովման պատասխանատուի կողմից ներքին գնահատման իրականացումը ևս որոշակի ամփոփ պատկեր է տալիս քոլեջին իրականացվող գործընթացների, առկա խնդիրների վերաբերյալ, սակայն կարևոր է նաև հավաքագրված բոլոր տվյալների մեկտեղումից զատ դրանց փոխկապակցումը, այնուհետև շահակիցների ավելի լայն շրջանակի հետ քննարկումը միասին ուղիներ որոնելու և լավ փորձի տարածման համար, որը կնպաստի տարբեր ստորաբաժանումների կողմից տվյալահենք որոշումների կայացմանը։

Փորձագիտական խումբը կարևորում է նաև այն հանգամանքը, որ քոլեջը նախատեսել է նաև որոշ գործիքներ ներդրված մեխանիզմների վերանայման համար, կիրառման փորձառության հիման վրա վերանայել է հարցումները՝ շահակիցների համար առավել ընկալելի դարձնելու համար։ Այս համատեքստում կարևոր է հարցարանների բովանդակային շարունակական բարելավումը և բազմազանեցումը, որը կնպաստի քոլեջի գործընթացների խորքային և բազմակողմանի վերլուծությանը։ Քոլեջը ինքնավերլուծության գործընթացի ընթացքում բացահայտված կարիքների հիման վրա մշակել է որոշակի փաստաթղթային հենք, որի կիրառումը կարող է նպաստավոր լինել կրթական ծրագրերի մեթոդների ընտրության քաղաքականության բարելավման, առաջավոր փորձի ուսումնասիրության և քոլեջում իրականացվող կրթական ծրագրերում դրա տեղայնացման համար։ Կարևոր է, որ իրականացված նախնական քայլերից հետո մշակված փաստաթղթերը դրվեն իրական գործածության մեջ դրանցով նախատեսված նպատակների իրականացման համար։ Քոլեջի նորաստեղծ կայքի ներուժի ամբողջական օգտագործումը կնպաստի որակի ապահովման գործընթացների հաշվետվողականության և թափանցիկության ապահովմանը, ինչպես նաև կարող է լավ գործիք լինել քոլեջի կողմից առանձնացված արտաքին շահակիցների ներգրավման և նրանց հետ հետադարձ կապի ապահովման համար։

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջը փորձել է ձևավորել որակի ապահովման ներքին համակարգ, մշակել է համապատասխան քաղաքականություն և ընթացակարգեր, որակի ապահովման գործընթացների իրականացման համար հատկացրել է մարդկային և

նյութական ռեսուրսներ, քոլեջում որոշակիորեն ներդրված են շահակիցների կարիքների վերհանման գործիքներ, ձևավորվել են տվյալների հավաքագրման և վերլուծության որոշ մեխանիզմներ, որոնք նպաստում են քոլեջի գործունեության ոլորտների շարունակական լավարկմանը, քոլեջը փորձում է ապահովել ՈԱ գործընթացների մասին տեղեկատվության հասանելիությունը շահակիցների շրջանում՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է չափանիշ 10-ի պահանջները:

Եզրակացություն: ԳՊԲՔ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 10-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՉԱՓԱՆԻՇ	*ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ*
1. Առաքելություն և նպատակներ	**Բավարարում է**
2. Կառավարում ու վարչարարություն	**Չի բավարարում**
3.Մասնագիտության կրթական ծրագրեր	**Չի բավարարում**
4. Ուսանողներ	**Բավարարում է**
5.Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	**Բավարարում է**
6. Հետազոտություն և զարգացում	**Բավարարում է**
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	**Բավարարում է**
8.Հասարակական պատասխանատվություն	**Բավարարում է**
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	**Բավարարում է**
10. Որակի ներքին ապահովման համակարգ	**Բավարարում է**

_____

Ասյա Սիմոնյան
Փորձագիտական խմբի ղեկավար

30-ը նոյեմբերի, 2023թ.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Ասյա Սիմոնյան՝ 2013թ. ավարտել է Գյումրու պետական մանկավարժական համալսարանի (ԳՊՄԻ) «ֆիզիկական կուլտուրա և սպորտ» մագիստրոսական ծրագիրը: 2013- 2017թթ. եղել է ԳՊՄԻ «Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա (ֆիզիկական կուլտուրա)» մասնագիտությամբ ասպիրանտ: Մանկավարժական գիտությունների թեկնածու է: 2017թ. մինչ օրս Շիրակի պետական համալսարանի Սպորտի և արվեստի ամբիոնի ասիստենտ է: 2007թ.-ից մինչ օրս Գյումրու մարզական բարձրագույն վարպետության դպրոցում գեղարվեստական մարմնամարզության մարզիչ-մանկավարժ է: 2017- 2021թթ., և 2021-2024թթ. Օլիմպիական ցիկլերի գեղարվեստական մարմնամարզության անհատական և խմբակային ձևերի միջազգային կարգի մրցավար է: ՀՀ մարմնամարզության ֆեդերացիայի գեղարվեստական մարմնամարզության մրցավարական խորհրդի անդամ է: ՀՀ գեղարվեստական մարմնամարզության սպորտի վարպետ է: Մասնակցել է մի շարք մասնագիտական վերապատրաստումների: 11 գիտական հոդվածների հեղինակ է:

Մերի Սարգսյան՝ 1994-2000թթ. սովորել է Մխիթար Հերացու անվան Երևանի բժշկական համալսարանի բուժական ֆակուլտետում: 2007 թ.-ից մինչ այժմ աշխատում է Երևանի հենակետային բժշկական քոլեջում: 2016-2018 թթ. եղել է «Քույրական գործ» կրթական ծրագրի բաժնի վարիչ: 2021 թ.-ից մինչ այժմ տնօրենի տեղակալն է ուսումնական աշխատանքների գծով:

Նաիրա Արշակյան՝ 1985-1990թթ. սովորել է Երևանի պետական բժշկական ինստիտուտի դեղագործական ֆակուլտետում, ստացել է պրովիզորի որակավորում: 1990-1991թթ.սովորել է Երևանի N1 դեղատանը (ինտերնատուրա): 2016-2018թթ. եղել է Երևանի պետական բժշկական համալսարանի ուսման որակի գնահատման և ապահովման կենտրոնի ավագ մասնագետ: 2016-2022թթ. եղել է Երևանի պետական բժշկական համալսարանի ֆարմակոգնոզիայի ամբիոնի ասիստենտ: 2019-2022թթ. եղել է Եվրասիա Միջազգային Համալսարանի Ֆարմացիայի ամբիոնի վարիչ: 2022թ.-ից մինչ այժմ Երևանի պետական բժշկական համալսարանի ֆարմակոգնոզիայի ամբիոնի դասախոս է:

Գարիկ Սարգսյան՝ 2021 թվականից սովորում է Երևանի հենակետային բժշկական քոլեջում՝ «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտությամբ: Մասնակցել է ՈԱԱԿ «Ուսանողության ձայն» նախագծի ուսանող-փորձագետների պատրաստման դասընթացին:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

	25. 09. 2023 թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում տնօրենի հետ	12:00	12:50	50 րոպե
2.	Դասալսումներ	13:00	14:00	60 րոպե
3.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	14:10	15:10	60 րոպե
4.	Հանդիպում շրջանավարտների հետ	15:20	16:10	50 րոպե
5.	Հանդիպում գործատուների հետ	16:30	17:30	60 րոպե
6.	Ռեսուրսների դիտարկում	17:40	18:40	60 րոպե
7.	Փաստաթղթերի ուսումնասիրություն, փորձագիտական խմբի փակ հանդիպում	18:50	19:30	40 րոպե

	26. 09. 2023 թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում ինքնավերլուծությունն իրականացրած խմբի հետ	09:30	10:20	50 րոպե
2.	Հանդիպում Կառավարման խորհրդի հետ	10:30	11:20	50 րոպե
3.	Հանդիպում ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալի հետ	11:30	12:20	50 րոպե
4.	Հանդիպում ամբիոնների և բաժինների վարիչների հետ	12:30	13:10	40 րոպե
5.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:20	14:20	60 րոպե
6.	Հանդիպում դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ	14:30	15:30	60 րոպե
7.	Հանդիպում ուսանողների հետ	15:40	16:40	60 րոպե
8.	Փաստաթղթերի ուսումնասիրություն, փորձագիտական խմբի փակ հանդիպում	16:50	18:30	100 րոպե

	27. 09 . 2023 թ.			Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում «Քույրական գործ» կրթական ծրագրի դասախոսների հետ	Հանդիպում «Դեղագործություն» կրթական ծրագրի դասախոսների հետ	Հանդիպում «Ատամնատեխնիկական գործ» կրթական ծրագրի դասախոսների հետ	09:30	10:30	60 րոպե
2.	Հանդիպում «Քույրական գործ» կրթական ծրագրի ուսանողների հետ	Հանդիպում «Դեղագործություն» կրթական ծրագրի ուսանողների հետ	Հանդիպում «Ատամնատեխնիկական գործ» կրթական ծրագրի ուսանողների հետ	10:40	11:30	50 րոպե
3.	Հանդիպում ՈՒԽ-ի հետ			11:50	12:30	40 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ			12:40	13:40	60 րոպե
5.	Հանդիպում ստորաբաժանումների ղեկավարների և վարչական աշխատակիցների հետ (կարիերայի կենտրոն, գրադարան, կադրերի բաժին, պրակտիկայի վարիչ, հաշվապահություն, բուժկետ, լաբորատորիա, տնտեսական մաս)			13:50	14:50	60 րոպե
6.	Բաց հանդիպում			15:00	16:00	60 րոպե
7.	Փաստաթղթերի ուսումնասիրություն, փորձագիտական խմբի փակ հանդիպում			16:10	18:00	110 րոպե

	28.09.2023 թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում որակի ապահովման պատասխանատուի հետ	09:30	10:30	60 րոպե
2.	Փաստաթղթերի ուսումնասիրություն, փորձագիտական խմբի փակ հանդիպում	10:40	12:50	140 րոպե
3.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:00	14:00	60 րոպե
4.	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	14:10	15:50	100 րոպե
5.	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	16:00	16:50	50 րոպե
6.	Հանդիպում քոլեջի ղեկավար կազմի հետ	17:00	17:30	30 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

N	Փաստաթղթի անվանում	Չափանիշ
1.	Ստորաբաժանումների տարեկան պլաններ՝ վերջին երեք տարիների համար	2
2.	Ստորաբաժանումների հաշվետվություններ՝ վերջին երեք տարիների համար	2
3.	Տնօրինական խորհրդի կազմ	2
4.	Տնօրինական, մանկավարժական խորհուրդների նիստերի արձանագրություններ	2
5.	Ընտրովի առարկաների ծրագրեր	3
6.	Պետական ամփոփիչ ավարտական քննությունների տոմսեր	3
7.	Մատյաններ, պրակտիկայի մատյաններ /ընտրված ծրագրերի համար՝ յուրաքանչյուր կուրսից՝ մեկական/	3
8.	Դասալսումների մատյաններ /ամբիոններից՝ մեկական/	3
9.	Դասախոսների պորտֆոլիոներ, դասախոսների պլաններ	3
10.	Պրակտիկայի ծրագրեր	3
11.	Պրակտիկաների լրացրած օրագրեր/ ընտրված 3 կրթական ծրագրերի համար՝ 4-ական/	3
12.	Պրակտիկայի վայրերի հետ կնքվող պայմանագրեր	3
13.	Ուսումնական խորհրդատուների կազմը, խորհրդատվության թեմաները և հանդիպումների ժամանակացույցը, գրանցումների մատյանը	3
14.	Ուսումնական ծանրաբեռնվածության նորմատիվները	3
15.	Վերապատրաստման փաթեթներ	3
16.	ՈՒԽ արձանագրություններ	4
17.	Կարիերայի պատասխանատուի աշխատանքային պլան	4
18.	Շրջանավարտների բազա	4
19.	Դասախոսների անհատական թղթապանակներ	5
20.	Մանկավարժական խորհրդի նիստերի արձանագրություններ, որտեղ քննարկվել են դասալսումների արդյունքները	5
21.	Դասալսումների լրացված ձևաթղթեր	5
22.	Ուսումնաօժանդակ կազմի պաշտոնների նկարագրեր	5
23.	Դասախոս-ուսումնաօժանդակ կազմ հարաբերակցություն	5
24.	Հետազոտական, ինքնուրույն աշխատանքների թեմաներ	6
25.	Հետազոտական, ինքնուրույն աշխատանքների թեմաների օրինակներ յուրաքանչյուր կրթական ծրագրի համար՝ երեքական	6
26.	Հետազոտական աշխատանքներից ուսանողների	6

	բավարարվածության վերաբերյալ հարցման տվյալների ամփոփում	
27.	Բուժկետի գրանցամատյան	7
28.	Անվտանգությանն առնչվող միջոցառումների պլան	7
29.	2022-2023 ՈԱ հաշվետվություն և ներքին գնահատում	10
30.	ՈԱ ներքին գնահատման արդյունքներ՝ ըստ հաշվետվությունների վերլուծության	10
31.	Հարցումներ գործատուների հետ	10
32.	Հարցումների արդյունքների վերլուծություն	10

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ[5]

1. Լսարաններ,
2. լաբորատորիաներ,
3. մասնագիտական կաբինետներ,
4. համակարգչային լսարան,
5. ստորաբաժանումներ,
6. մարզադահլիճ,
7. բուժկետ,
8. գրադարան,
9. սննդի կետ։

[5] Փորձագիտական այցի ընթացքում դիտարկվել են նաև Գավառ ԲԿ-ի ռեսուրսները, որտեղ իրականացվում են ուսանողների գործնական պարապմունքները և պրակտիկաները:

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԳՊԲՔ-Գավառի պետական բժշկական քոլեջ
ԿԳՄՍ նախարարություն - Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ՄԿԾ - մասնագիտության կրթական ծրագիր
ՄԿՈՒ - Մասնագիտական կրթություն և ուսուցում
ՄՈՒՀ - մասնագիտական ուսումնական հաստատություն
ՈԱ - որակի ապահովում
ՈԱԱԿ - Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն
ՈԱՇ - որակավորումների ազգային շրջանակ
ՊԿՉ - պետական կրթական չափորոշիչ
ՌԾ - ռազմավարական ծրագիր
ՈՒԽ - ուսանողական խորհուրդ
ՈՒՕ կազմ -ուսումնաօժանդակ կազմ